

Ա. Մանուկյան

ՄԱՏԱՆ
ԹՈՒԹՈՒԿԵՆՈՒ




Ներկա մենագրության մեջ
շարադրված է սովետահայ ան-
վանի գրող Վահան Թորովեցի
կենսագրությունը և զուգահեռա-
բար ցույց է տրված, թե ստեղ-
ծագործական ինչպիսի նաևա-
պարհ է անցել նա: Աշխատության
մեջ առաջին անգամ փորձ է ար-
վում ի մի բերել և գնահատել
գրողի բազմաժանր ստեղծագոր-
ծությունը:

ԳԻՏԱՆԱՍՍԱՆՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

4 (21)





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт литературы и.и. М. Абергина

С. Манукян

ВАН
Тотовенц

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН · 1959

ՀԱՅԿԱՆՆ ԿՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՈՂԵՄԱ
Մ.Արեշյանի անվան գրականության ինստիտուտ

Ս. Մանուկյան

891.99.092 [Քրոնիկայ]


Ե-


ՎԱՏԱՆ
ԹՈՒԹՈՒԼԵԱՑ

A 150



Հայկական ԿՍՈՒ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ • 1959





Վահան Թոթովենցը սովետահայ գրողների առաջին սերնդի ներկայացուցիչներից է: Գրական ստապարեզ մտնելով հաստատուլյուցիոն շրջանում՝ 1907 թվականին, Թոթովենցն այնուհետև անցել է գրական ուսումնասության, որոնումների ու նը-վաճումների ուսանելի ուղի, իր ստեղծագործական ուժերի բուռն զարգացման փուլն է թեևակոխել Հա-յաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո և իր արժեքավոր ավանդն է մտծել սովե-տահայ գրականության գանձարանը:

Լայն ևն Վ. Թոթովենցի ստեղծագործու-թյունների ընդգրկման շրջանակները, բազմազան՝ շոշափած հարցերն ու պրոբլեմները: Նա հանդես է եկել գրեթե բոլոր գրական ժանրերով, գրել է բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածք-ներ, ակնարկներ, ֆելիետոններ, վիպակներ, վե-պեր, կատակերգություններ, գրամաներ: Այդ եր-կերում նա արտացոլել է և՛ արևմտահայ կյանքի մոտավոր անցյալը, և՛ ամերիկյան իրականության մի քանի կողմերը, և՛ պատմա-ուսուլյուցիոն անց-

լալի գրվագները, և՛ սովետական կյանքը՝ Նրա գրչին ևն պատկանում հրատարակատեսական բընույթի և գրականության ու արվեստի հարցերին նվիրված բազմաթիվ հոգվածներ, գրախոսականներ ու բրոշյուրներ:

Իհարկե, միշտ չէ, որ Թոթովենցը ճիշտ է ըմբռնել ու մեկնաբանել հասարակական կյանքի երևույթները, սակայն միշտ էլ գրսեփել է գեմոկրատական ընդգծված հակումներ, աշխատավոր ժողովրդի շահերին ծառայելու ազնիվ ձգտում: Նրա ուշագրության կենտրոնում մշտապես կղել է աշխատավոր մարդը՝ իր կյանքով ու պալքարով, հույզերով ու խոհերով: «Ես սրտնիլ եմ աշխատավոր մարդը և նրա պալքարը աշխարհի բոլոր կետերում»¹, — այսպես է ձևակերպել Թոթովենցն իր ստեղծագործության հիմնական պաթոսը:

Վ. Թոթովենցի ստեղծագործության լավագույն մասը սովետահայ գրականության արժեքավոր երևույթներից է և միանգամայն արժանի բազմակողմանի ուսումնասիրության: Մինչդեռ նրա մասին, ավելի շուտ՝ միայն մի քանի գրքերի հրատարակման առիթով, գրվել են սոսկ հատ ու կենտ հոգվածներ ու գրախոսականներ:

Սույն գրքուկը մի փորձ է գրողի ստեղծագործական գիմանկարի բնութագրման ուղղությամբ:

¹ «Խորհրդային Հայաստան», 1928, № 109:

Վահան Թոթովենցը ծնվել է 1893 թվականին՝ Արևմտյան Հայաստանի Պարբերդի վիլայեթի Մեղրե (կամ՝ Մեղիրե) քաղաքում, գավառի մասշտաբով բարձր պաշտոնյա՝ պետական գանձապահ Հովհաննեսի ընտանիքում: Նրա մանկությունն անցել է հայրենի քաղաքում, որը գտնվում էր պատմական Եփրատ գետի ափին, ինչպես գրողն է ասում՝ «հին հույմեակահան ճանապարհի վրա», ու-

¹ Որոշ տեղեկությունների համաձայն Վ. Թոթովենցը ծնվել է 1889 թվականին: Այդ թվականը ճիշտ է համարում նաև բանաստեղծ Վ. Նոբենցը Թոթովենցի «Երկերի» (1957) ժողովածուին կցած առաջաբանում: Մեր ձեռքի տակ եղած ինքնակենսագրության մեջ Թոթովենցը նշում է 1894 թվականը, որը հաստատում է նաև նրա հայրենակից, մանկությունից նրան ճանաչող Վ. Երեցյանը (տե՛ս նրա հոդվածը ռուսինահայ Շնոր կյանք» թերթում, 1957, № 39): Սակայն, Թոթովենցից պահպանված փաստաթղթերում (գինժորական գրքույկ, Լիտֆոնդի անդամության տոմս և այլն) ամենուր գրված է 1893:

ներ «ալլադան և տարօրինակ կյանք» ու գեղեցիկ բնություն: «Մեզրե քաղաքը, — կարչում ենք Թոթովենցի «Ինքնակենսադրության» մեջ, — թաղված էր կանաչների մեջ և առատ ևր մրգերով ու վարդերով: Երկնակամարը աչքի էր ընկնում իր հասակավայր, իսկ աշունը՝ հեքիաթալին առատաձեռնությամբ»¹: Ինքը՝ մանուկ Վահանը, կարիքի մեջ չլինելով հանդերձ, վաղ հասակից տեսնում է, թե ինչպես այդ «հեքիաթալին առատաձեռնության» սլառուները վաշխում են միայն հարուստ ընտանիքները, իսկ աշխատավորները՝ հողի մշակներ, դարբիններ, ծառաներ, քրտնախաշ աշխատանքով հաղիվ վաստակում են օրվա ալքասիկ ապրուստի միջոցներ: Սոցիալական այդ հակասությունների հետ միասին նա տեսնում է նաև համիրլյան դաժան բռնությունները, ականասես է լինում ազգամիջյան ընդհարումների, հետամնաց բարքերի հեռահանք հանդիսացող ծանր ոչբերգությունների: Այդ բոլորն անջնջլիորեն տարվորվում են նրա հոգում և հետագայում գտնում նրա մի շարք ստեղծագործությունների կենսանյութը:

Վ. Թոթովենցը նախնական կրթություն է ստանում, ավելի ճիշտ՝ դրաճանաչ է գառնում մի

¹ Մեջբերումը կատարված է Վ. Թոթովենցի անտիպ «Ինքնակենսադրությունից», որը, մի շարք այլ նյութերի հետ միասին, մեզ է արամադրել Լուսյա Թոթովենցը, որին հայանում ենք խորին շնորհակալություն:

ասորի վարժապետի մոտ, որը սովորեցնում էր «սուրբ գրքերով» ու փայտի հարվածներով, ապա մահում է իր ծննդավայրի Ազգային կենտրոնա-կան վարժարանը, որը «Վարսզ ուսուցիչներու ձեռքին տակ դարձած էր լույսի և ազգային ոգիի փառարան մը»¹:

Իպրոցի հայրենասեր ուսուցիչներից էին արևմտահայ նշանավոր գրողներ Հովհ. Թլկատինցին և Ռուբեն Զարգարյանը: Վերջիններս աշակերտներին հոգևոր սնունդ էին տալիս նաև իրենց գեղարվեստական սակզմագործություններով: Հետագայում, երախտագիտությամբ հիշելով իր ուսուցիչներին, Թոթովենցը Զարգարյանին բնութագրում է սրբիս հայրենի «երկրի ձալն», հարազատ ժողովրդի հույզերի ու ձգտումների երգիչ, «որուն գրքին վրա մեծցած էի, դոց ըրած իր արձակ երաժշտությունը»²: Հովհ. Թլկատինցին՝ «ինքնուրույն սճ և լիզու» ունեցող «գավառացի ամենասիրված գրողը թուրքահայերի մեջ»³, կյանքի սոցիալական հակասությունները և արատները մերկացնող իր փայլուն նորավեպերով շատ բան է սովորեցրել սկսնակ Թոթովենցին, մասնավորապես ներշնչել է հարազատ մնալ կյանքի ճշմարտությանը, օգտվել ժողովրդի հազարերանգ

¹ Վ. Նրևյան, «Վ. Թոթովենց», «Նոր կյանք» (ուսմինահայ թերթ), 1957, № 39:

² «Հայաստան», օրաթերթ, (Թիֆլիս), 1917, № 44:

³ «Հայ գրողներ», Բ. գիրք, 1910, էջ 806:

բառ ու բանից, արվեստի միջոցով նպաստել ժողովրդի առաջադիմությանը: Անկեղծ հուզմունքով վերհիշելով Թլկատինցուն, Թոթովենցը գրում է, որ նա ունեցել է բազում «աշակերտներ, որոնց ներշնչել է գրականության սերը և գրելու արվեստը»¹: Այդ աշակերտներից մեկն էլ ինքը՝ Թոթովենցն էր, որը վաղ տարիներից առանձին սեր է ունեցել գրականության հանդեպ: «Ես, — ասում է նա, — վաղուց էի համբուսակիլ բանաստեղծությամբ, կարդում էի և գրում մեր դպրոցի ձեռագիր և խմորատիպ թերթերում, ինքս էլ խմբագրել էի մեկ-երկու ձեռագիր ամսաթերթ»²: Իսկևս Խարբերդի Ազգային Վարժարանի ավարտական դասարանի աշակերտ եղած ժամանակ՝ 1907 թվականին Թոթովենցը խմբագրում և հրատարակում է «Աստղիկ» անունով խմորատիպ ամսաթերթը: Նույն թվականին, Ջմյուռնիայի «Արևելյան մամուլ» պարբերականում տպագրվում է նրա առաջին բանաստեղծությունը՝ «Արատարի կայլահներ» խորագրով: 1908 թվականին, երբ հռչակվում է Օսմանյան Սահմանադրությունը, Վ. Թոթովենցը մեկնում է Պոլիս: Այստեղ նա հրատարակում է «Ավերակ» վերտառությամբ, ընդամենը չորս արձակ բանաստեղծություն ամփոփող առաջին ժողովածուն: Այնուհետև նա ճանապարհորդում է դեպի Իտալիա, Հունաստան, Եգիպտոս, Ֆրանսիա և

¹ «Պայքար», 1923, № 4, էջ 82:

² Անտիպ «Ինքնակենսագրությունից»:

բնակութիւնն է հաստատում Ամերիկայում, ուր
դրանից առաջ հաստատուել էին նրա եղբայրները:
1909 թվականին Պոլսում լույս է տեսնում
Վ. Թոթովենցի Երկրորդ գրքուկը, ավելի ճիշտ՝
բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն
(«Սրինգ»):

Երիտասարդ Վ. Թոթովենցի ստեղծագործու-
թիւնների վրա ակնհերևորեն զգացվում է նրա
դրական առաջին ուսուցիչների՝ Թլկատինցու,
Զարգարյանի և մանավանդ՝ Պ. Դուրյանի ու Մ.
Մեծարենցի ուժեղ ազդեցութիւնը: Դա միանգա-
մայն հասկանալի է: Պ. Դուրյանը եղել է այն բա-
նաստեղծը, որին կարգացել է նա դրաճանաչ դառ-
նալու առաջին խիստ արիւնքից. «Իր արցունքի
ջերմութիւնը իմ հոգիին ստոնութիւնը գարունին
պէս փթթեցուցած է, — գրում է Թոթովենցը, —
Դուրյանի ընթերցումով հասկացել իմ թե ծաղիկ-
ներու լիզուն, թե տրամութիւն քաղցրութիւնը...,
լեցված իմ կյանքի և արևու քնարերգութիւն պի-
նոլութիւնը»¹: Թոթովենցը հմայված է եղել նաև
Մ. Մեծարենցի, իր խոսքերով ասած՝ «գույների
չնաշխարհիկ կրողը»² պոեզիայով, անձնական նա-
մակագրութիւն մեջ է եղել նրա հետ և բախտ է
ունեցել նվեր ստանալու անվանի բանաստեղծի
«Նոր սաղեր» ժողովածուն: Ահա թե այդ մասին
ինչ է գրում նա «Կյանքը հին հոսովմեական ճա-

1 «Հայկաշեն», 1918, № 4, էջ 113:

2 Վ. Թոթովենց, Երկեր, 1957, Երևան, էջ 126:

նապարհի վրա» վիպակում. «Մեծարենցը պալա-
 տական պատանեկության պաշտամունքի առարկան
 էր: Մենք ատելությամբ հեռուում էինք նրա դեմ
 սկսած պալքարին թեթևադիկ, անարժեք գրողնե-
 րի կողմից, նամականեր էինք գրում Մխաթին գո-
 տեպնդեյու համար: Ես ստացա «Նոր տաղեր»-ը
 Մխաթից նվեր: Այդ նվերից հետո, ճիշտն ասած,
 հպարտ էի դգում ինձ: Ժամերով նայում էի Մի-
 սաթի լուսանկարին և հափշտակվում, ժամերով
 կրկնում էի՝ «Ու կը փոթի ծովակն հողվույս մեզ-
 մավար»: Ծատ էի ուղում նրան նմանվել մո-
 րուք թողնելով, բայց ավա՛ղ, դեռևս աղվամազ
 անդամ չէի շոշափում երեսիս վրա: Յանկացա,
 որ իմ առաջին գիրքս ապվի «Ծիածան»-ի նման,
 միևնույն թղթով, ձևով, շապկով, միևնույն ապա-
 րանից: Այսպես էլ եղավ: Բայց, էլի ավա՛ղ, ոչ մի
 ապավորություն չթողեց. այն ժամանակ միայն ես
 գգացի, որ գոյություն ունի ինչ-որ ներքին մի բան,
 որ Դուրյանն ուներ, Մեծարենցն ուներ, բայց ես
 չունեի: Բանաստեղծությունների իմ առաջին գրք-
 քույր ինձ համար մի արժեք ունի՝ նվիրված է
 Մխաթ Մեծարենցի գերեզմանին: Նվերն անար-
 ժեք էր, բայց այն ժամանակվա իմ ամբողջ սիր-
 տըն էր»¹: Պետք է ասել, որ հեղինակը այս լուս-
 տովանության մեջ, հիմնականում, ճիշտ է գնահա-
 տել իր «Սրինգ» գրքույկը: Նրանում տեղ գտած
 բանաստեղծությունները կրում են գրքայնության

¹ «Ներկեր», էջ 125—126:

կնիք, չունեն զգացմունքների խորություն, տրամադրությունների թարմություն: Արժարժեկով սիրո, բնության, կյանքի ու մահվան փոխհարաբերության մոտիվները, նա մերթ ձգտում է դեպի «պաղ շիրիմ»¹, լալիս է միայնակ, «ախուր ու անսեր», իր հոգին համարում է «խորանը ցավի», մերթ էլ, իր դրական ուսուցիչներին նման, տենչում է վառ արևի կենսատու շողեր. «Օ՛հ, ճատազայթ մը միայն, արեգակին, օ՛հ, մի շոյ»: Պատանին հորդորում է, որ «ցուրտ աշխարհը» անտարբեր չմնա իր նկատմամբ. «Միրա տվեք սուրբիմ, ինչ՞ու անտարբեր կը մնաք այսպէս»: Ուրախության սլահեր էլ է ունենում նա, բայց իր երգը բնութագրում է դերադանցորեն որպէս ախուր, հառաչանքով ու «արատորի ցուրտ կայլակներով խորոված» «թախծիրգ»: Ճիշտ է նկատել Թոթովինցը, թե իր դրական տուաջին փորձերին պակասում է «ներքին ինչ որ մի բան»՝ հուլիերի մատուցման խորություն, սակայն նրա վաղ տարիների ստեղծագործությունների մասին խոսելիս չի կարելի չնշել մի կարևոր հանդամանք: Բանաստեղծը արդեն իսկ դրսևորում է որոշակի շնորհք, մասնավորապէս նուրբ դիտողականություն, խոսքի հուզական նրբերանգներից օգտվելու կարողություն, երբեմն ստեղծում է գեղեցիկ համեմատու-

¹ Վ. Թոթովինց, Սրինգ, 1909, Պոլիս (այսուհետև հատիմայի մեջբերումը այս գրքից):

թյուններ ու մետաֆորներ: Այսպես, օրինակ, կապույտ աչքերի և կամար հոնքերի մասին նա գրում է, «լճակներ, դոր ծխածանն է ծածկեր», իսկ անձրևը պատկերում է այսպես.

Անձրևը կիջնե
Շողի պես մաքուր,
կիջնե կարծես թե
Սդամանգ բուռ-բուռ:

Հատկանշական է նաև, որ պատանի Թոթովենցը նույնպես, իր դեմոկրատ ուսուցիչների ազդեցությամբ, հանդես է գալիս գեմսիրատական հակումներով և ազատասիրական ձգտումներով: Այս տեսակետից աչքի է ընկնում «Ավերակ» գրքուկը, որի մեջ տեղ գտած արձակ բանաստեղծությունների պոթոսը հեղինակի զայրագին բողոքն է սոցիալական անարդարությունների և ազգային անիրավությունների դեմ: Խոր ցավով և դառն զգացմունքներով է նա պատմում այն մասին, որ համիդյան դաժան բռնակալությունը երկրում ըստեղծում է բանտային ուժիմ, աշխատավոր, անմեղ մարդկանց արյունով է ողողում Եփրատի ջրերը, ավերակների է վերածում գյուղերն ու գեղջկական խրճիթները: Բռնապետությունը մտթ զրնդաններն է նետում և շղթաներու ծանրության տակ» ճնշում է բոլոր նրանց, ովքեր մաքառում են այն ամենի դեմ, «ինչ որ կաշկանդող է, ինչ որ բռնապետող է»: Հալածվում ու մահվան են դատապարտվում այն մարդիկ, որոնք ձգտում են պի-

պի ամպածրար բարձունքները, գեպի ազատութեան երկնատլաց հորիզոնները... , չմնալու համար այս անարդարութեան տղմուտ գետիններուն վրա», մարդիկ, որոնց սիրտը «ուտել կուզե, լափել կուզե ընկերալին (սոցիալական — Ս. Մ.) սնհավասարութեանները, անիրավութեանները»:

Ակնհայտ է, որ երիտասարդ Թոթովենցը դրսևորում է կլանքի որոշակի ճանաչողութեան, անհաշտ, ըմբոստ բնավորութեան գեպի բռնութեանը և ստեղծագործական որոշակի ձիրք:

* * *

Վ. Թոթովենցը 1908 թվականին հաստատվում է Ամերիկայում: Շատ ուրիշների նման, նա ևս ենթադրում էր, թե այսպես կոչված «ազատ աշխարհում» հնարավորութեաններ կունենա առանց դժվարութեան շարունակելու ուսումը, ստանալու բարձրագույն կրթութեան, ամբողջովին նրվիրվելու իր փայփայած գործին՝ գեղարվեստական գրականութեանը: Սակայն շուտով նա համոզվում է, որ Ամերիկան «գրախտ» է միայն «գեղին գեվերի» (գուլարի) արքաների, միլիոնատերերի համար, իսկ միլիոնավոր ընչազուրկ մարդիկ, ինչպես ամենուր՝ կապիտալիզմի պայմաններում, դառն աշխատանքով են հայթայթում իրենց հանապազօրյա հացը, կեղեքվում են, տառապում տնտեսական անհավասարութեանների ու ճնշումների ծանր բեռի տակ: Իր գոյութեանը պահպա-

նկու համար, Թոթովենցը գրադպում է բանվորու-
թյամբ, ճաշարաններում ամաններ է լվանում,
գորգի վաճառատներում մաքրում և վերանորոգում
է փրատված գորգերը և այլն: Հասկանալի է, որ
կյանքի նման հանգամանքների մեջ է՛լ ավելի
հարստանում է նրա կենսաճանաչությունը, ավելի
որոշակի է գտնում վերաբերմունքը կյանքի
հակասությունների նկատմամբ. «Ամերիկան, —
գրել է Թոթովենցը, — հանդիսացա՛վ այն երկիրը,
որ չտախտիկացի իմ անսանձ, խելատ ու հախտան
պոսթիու՛մները: Վերնցաղան բարձունքներից այն
ինձ իջեցրեց և ընդհուպ մոտեցրեց կյանքին: Ամե-
րիկայում ես տեսա կյանքի հատակը»¹:

Արվեստի, գրականության և ուսման նկատ-
մամբ ունեցած բուռն սերը, այնուամենայնիվ,
Թոթովենցին ուժ է տալիս հաշվահարեյու դժվար-
ությունները և ավարակելու Վրակոնսինի համալ-
սարանի պատմագրական ֆակուլտետը: Նա, բնա-
կանորեն, քիչ է ստեղծագործում, սակայն աշխա-
տելու և սովորելու հետ գուզընթաց ապահոսին
կարգում է զեղարվեստական խոսքի այնպիսի
հսկաների ստեղծագործությունները, ինչպիսիք են
Շեքսպիրը, Պուշկինը, Բայրոնը, Տոլստոյը, Տալս-
տը, Գոթլին, հալ գրականության դաստիան հեղի-
նակները:

Առաջին խմբերիտալիտատական պատերազմի

¹ Անտիպ «Ինքնակենսագրությունից»:

ժամանակ, հայկական եղևունի տարիներին՝ 1915 թվականին, Վ. Թոթովենցը դալիս է Անդրկովկաս, մասնակցում է մի շարք ճակատամարտերի: «Հրն-
չեց համաշխարհային պատերազմի մասը գանդը: Ոչ ոք ինձ չէր կանչել զինվորական ծառայու-
թյան: Ես գրվեցի կամավոր՝ հանուն իմ հայրենի-
քի ազատագրության: Եկա Կովկաս, մասնակցեցի
կովկասյան սաղմաճակատի մարտերին, տեսա իմ
հայրենիքի կործանումը, իմ հարազատ ժողովրդի
արյան հեղեղները»¹: Այնուհետև նա բնակություն
է հաստատում Թիֆլիսում, կատարում է խմբագրա-
կան աշխատանքներ, 1917—1918 թվականներին
մամուլի էջերում տպագրում է մի շարք հրա-
պարակախոսական հոդվածներ և դեղարվեստական
ստեղծագործություններ: Խորտակված տեսնելով
իր հույսերը՝ հայ ժողովրդի ազատագրության մա-
սին, ականատես լինելով այն ցավալի իրողու-
թյանը, որ ժողովուրդը դաշնակցական ավանտյու-
րիստների ու իմպերիալիստական թալանչիների
մեղքով կանգնած էր անվերապահ կործանման
կզրին և, կապված չլինելով սեռյուցիոն շարժում-
ների հետ, Վ. Թոթովենցը հեռանում է Անդրկով-
կասից: «Հիասթափված, գլխիկոր, — ասում է
նա, — 1920 թվականի մայիսին ևս թողի Կովկասը,
թողի դաշնակիների մասը տիրապետության շրջա-

¹ Անտիպ «Ինքնակենսագրությունից»:



նի Հայաստանը և գնացի Ստամբուլ, Փարիզ ու
նորից Նյու-Յորք»¹:

Սակայն, երբ Մեծ Հոկտեմբերի բարձրաց-
րած ազատութեան փրկարար դրոշը ծածանվում է
նաև Հայաստանում, բոլոր մյուս հայ առաջավոր
գրողների նման, Վ. Թոթովինցը բռնն ուրախու-
թյամբ, անկեղծ հրճվանքով է ընդունում հայ ժո-
ղովրդի ազատագրութեան լուրը: 1920 թվականի
դեկտեմբերի սկզբներին Փարիզում լսելով այդ
մասին, նա ասում է. «Ինձ այնպես թվաց, թե իմ
հոգում հյուսվում է մի երգ, բացվում է իմ հո-
գում պայծառ, ջինջ և դյուցազնական ստավոտ»²:
Եվ այդ պայծառ հոգով էլ Վ. Թոթովինցը 1922
թվականի սեպտեմբերին վերադառնում է իր վե-
րածնված ժողովրդի գիրկը:

Վ. Թոթովինցի անվերապահ անցումը Սովե-
տական իշխանութեան գիրքերը միանգամայն օրի-
նաչափ ու բնական էր, պայմանավորված նրա
հայրենասիրական ձգտումներով և ազատասիրա-
կան դադափարներով: Այդ կն հաստատում նրա
նախորդ տարիների հասարակական գործունեու-
թյունը և մանավանդ՝ զեղարվեստական ստեղծա-
գործությունները: Պեսք է ասել, որ դրոշը որոշ
ժամանակ ունեցել է առանձին մոլորություն-
ներ, մասնավորապես՝ չի տեսել հայ ժողովրդի

¹ Անտիպ «Ինքնակենսագրությունից»:

² «Դրական գիրքերում», 1930, № 11—12, էջ 47:

փրկութեան միակ ճիշտ ուղին՝ ուսուցիչներն
պաշտօնի ուղին, բայց նա լցված է կղեր ժո-
ղովրդի շահերին ծառայելու անսահման տենչով:
Իր հոգովածներից մեկում նա արտահայտել է այն
ճշմարիտ միտքը, թե գրողը, արվեստագետը, կուլ-
տուրայի մշակը ժողովրդի մի մասնիկն է, ուստի
չի կարող, իրավունք չունի անտարբեր, սառնա-
սիրտ լինել իր ժողովրդի կյանքի՝ ներկայի ու
գալիքի նկատմամբ: Պատահական չէ, որ մինչև
20-ական թվականների նրա ստեղծագործութեան
հիմնական թեմաներից մեկը հանդիսանում է հայ
ժողովրդի կղերներ, դադթը, նրա բախտն ու ապա-
ղան: Դա ժամանակաշրջանի ամենահիմնական
հարցն էր, գրանով էր գունտվորված հայ զրակա-
նութեան ականավոր գեմքերի ստեղծագործու-
թյունը: Հայ ժողովրդի մեծ բանաստեղծ Հ. Թուման-
յանը երգում էր «զրկված ու զարկված», «ողբի ու
որբի» հայրենիքը, միաժամանակ խորապես հա-
մոզված լինելով, որ հեռու չէ օրը, երբ այն կդառ-
նա «նոր ու հզոր»: Մարդկայնորեն վշտանալով,
որ «հայրենի տունն ավա՞ր, ավա՞ր» է գարձել,
Ա.վ. Իսահակյանը փառաբանում էր ժողովրդի կեն-
սունակութունը, կիրակելով ժողովրդի հավաքա-
կան ուժի մարմնացումը և անմահութունը՝ խոր-
հրդանշող դյուցազուն Մհերի կերպարը: Դա խո-
րապես առաջադիմական, հայրենասիրական գրա-
կանութուն էր, իր էությունը հակադիր բուրժուա-
նացիոնալիստական օղբասուցութեանը: Արդ առա-

ջալոր գրականութիւն թեև ոչ կենսարոնական, բայց անխոնջ մշակներից էր նաև Վ. Թոթովենցը:

Յուցադրելով հայ ժողովրդի ծանր ու ողբերգական գրութիւնը, Վ. Թոթովենցը միաժամանակ դավերդում է նրա գիմացկուն ողին ու կենսունակութիւնը: Այս տեսակետից բնորոշ սակզ-ծագործութիւն է «Ողբ անմահութիւն» պոեմը (1917, Թիֆլիս):

Բարբարոս բռնակալների կողմից ավերակների վերածված հայրենի աշխարհի ամայութիւնը, եղեռնի զոհ դարձած անմեղ ժողովրդի վիշտն է արտահայտում բանաստեղծը իր պոեմում: Դիմելով արևին, նա ասում է.

Վաղը նորեն պիտ ծագիս

Մերկացնելով մարդոց ամոթը կարմիր,

Ճառագայթներդ դողդոջով պիտի հալին

Մոխրակուտոված քաղաքներուն, դյուզերուն,

Իզո՛ւր շողերդ զվարթ

Պիտի փնտրեն փրփուրները ձյունափառ

Մեր հայրենի կապու՛շյա, կապու՛շյա ծովերուն...

Բանաստեղծը խոր վիշտ է ապրում այն բանի համար, որ լուռ, ամալի, անմարդարնակ «անապատի ծոցին մեջ» ավելի շատ ժպիտներ են մնացել, «քան հայրենի դաշտերի մեջը մոխիր», որ հայրենի երկրում կարմիր ու ճերմակ վարդերն անգամ սև են հապել, լուել են նորահարսների, երիտասարդների, մանուկների աշխույժ երգն ու ծիծաղը: Իր վիշտը նա համարում է «հսկա ու վսնմ»,

հակա՝ քանի որ կործանվում է հին ու կուլտուրա-
կան մի ամբողջ ժողովուրդ, վսեմ՝ որովհետև այդ
վիշտը ազնիվ է, անկեղծ, շաղախված է ժողովրդի
կենսունակության վրա խարսխված հույսով ու
հավատով: Ժողովուրդը, — ասում է բանաստեղծն
իր պոեմում, — ցողված է անմահությամբ, ունի
«տեկու ուժ»:

Այն վեհազույն տրամությունը, զոր այսօր
կը կրենք մեր աչքերուն
Նորության մեջ դարավոր՝
Անմահության է պարզե:

«Ողբ անմահության» պոեմում, որն իր ձևով
(պատկերավորման սխեմա, ազատ, անհանգ տո-
ղեր) հիշեցնում է Միամանթուլի պոետիկան, Թոթո-
վենցը վերաբառադրել է ծանր, մղձավանջային իրա-
կանությունից ստացած իր անմիջական տպավորու-
թյունները: «Ես տեսել եմ մարդկային տառապան-
քը ավելի խոր, քան որևէ խորություն այս աշ-
խարհում: Ես տեսել եմ արյունով հագեցված դի-
շերներ, ես տեսել եմ քաղցից խելագար մարդիկ...
տեսել եմ դնդակներ՝ խրված մարդկանց սրտերի
մեջ. տեսել եմ կատաղած ամբոխ՝ սուսերամերկ
և արյան ծարավ և լսել եմ այդ ամբոխի առաջ
զարհուրած և անմեղ ու արդար մարդկանց, կա-
նանց ու երեխաների աղաղակը»¹:

«Ողբ անմահության» պոեմի ոգով է շնչում
նաև «Այսպես խոսեցավ նախասրենկալը» հուզիչ

¹ «Գրական թերթ», 1933, № 2:

ստեղծագործությունը, որտեղ նկարագրվում են պատերազմի ու կոտորածների հետևանքով հալ ժողովրդին հասած անլուր զժբախտությունները: Թե՛ պոեմում և թե՛ այստեղ Վ. Թոթովենցը հանդես է գալիս սուաջավոր հումանիզմի զիրքերից, այն հումանիզմի, որը ենթագրում է բուն ստեղծություն դեպի բնակալները, ներքին ու արտաքին հարստահարիչները և անկեղծ սեր ու հարգանք՝ աշխատավոր, ազատարազ՝ ժողովուրդների նկատմամբ:

Այդ բարձր հումանիստական մտածողությունը դրսևորվել է նաև Վ. Թոթովենցի «Արևելք» պոեմում: Բանաստեղծը ջերմ զգացմունքներով խոսում է արևելյան ժողովուրդների մասին, փառաբանում է նրանց ստեղծած կուլտուրական մեծ արժեքները: Նա սրտարուև ցանկություն է հայտնում՝ ազատ ու ժողիտն տեսնել մեր հարևան և հեռավոր բախտակից ժողովուրդներին, անկուտրում հավատ է տածում նրանց լուսավոր ապագայի նկատմամբ: Խոսելով Սգիպտոսի, Իրանի, Հնդկաստանի և մյուս երկրների մասին, բանաստեղծը գրում է.

Եվ գարերը իզո՛ւր, իզո՛ւր կարծեցին,
Որ Ջինաստանը խոր քնի մեջ կնիրհե,
Այսօր դարձյալ կըվերածնի անիկա
Իր ընդերքեն, իր խորերեն մանկատի
Կըլլա երազ և բողբոջ...¹:

¹ Վ. Թոթովենց, «Արևելք», 1918, Թիֆլիս, էջ 19:

Կախյալ և ճնշված ժողովուրդների, ալք թը-
վում և հայ ժողովրդի ազատագրության, ազ-
գային վերածննդի ու դարգացման վերաբերյալ
պայծառ հավատը հանդիսանում է Վ. Թոթովեն-
ցի վերոհիշյալ ստեղծագործությունների և հրա-
պարակախոսական հոդվածների առանցքը:

Պոեզիային ու հրապարակախոսությանը զու-
գահեա, Վ. Թոթովենցը նախասովետական շրջա-
նում գրադվում է նաև դրամատուրգիայով, գրում
է «Գարունին սիրտը» և «Հավերժություն» պիե-
սերը, բայց ամենից ավելի շոշափելի հաջողու-
թյունների է հասնում արձակի բնագավառում:
Այդ են հաստատում զանազան պարբերականնե-
րում տպագրված և առանձին զրքերով հրատա-
րակված պատմվածքները, վիպակներն ու վեպերը՝
«Իմ հորաքույրը» (1916), «Տոնոն» (1917), «Դոք-
տոր Բուրբոնյան» (1918), «Պատմվածքներ»
(Ա. շարք, 1921), «Փոթորիկի մեջ» (1922): Չենք
խոսում մամուլի տվյալների համաձայն մինչև
1922 թվականը լույս տեսած, բայց, դժբախտա-
բար, առայժմ մեր ձեռքի տակ չեղած «Արձակ
էջեր», «Պատմվածքներ» (Բ. շարք), «Հաջի Մար-
կոս աղա», «Անգլիա, Պարսկաստան և ես» ստեղ-
ծագործությունների մասին:

Վ. Թոթովենցի պատմվածքների նյութը գե-
րազանցապես առնված է Խարբերդի և նրա շրջա-
պատի միջավայրից, գրողի ծննդավայրի առօրյա-
լից: Արձակագիրը պատկերում է ժամանակի հե-

տամնաց կրանքն ու կենցաղը, ձաղկում է հասարակական խոցերն ու արատները: Ռեալիստական ոճով ու նպատակասլացությամբ աչքի է ընկնում «Ազգային բարերարին դերեզմանը» պատմվածքը, որը նվիրված է կեղծիքի միջոցով ու փողի օգնությամբ «ազգային բարերար» դառնալու իրողության մերկացմանը: Հայ գրականության մեջ բազմիցս արժարժված կեղծ բարեպաշտության թեման Թոթովենցը բացահայտում է բավական ինքնատիպ եղանակով, կերտում է «ազգային բարերարի» բնորոշ կերպարը: Փորսուխենց Սաչերն է դա, որը պարծենում է, թե իր պապը եղել է «ազգային բարերար» և թաղված է եկեղեցու բակում: Նա փորձում է մահացած կղերը նույնպես թաղել պապի կողքին, բայց թաղականները թույլ չեն տալիս, որովհետև նրա կղերը եղել է հոգեկան հիվանդ, ամենքի կողմից ծաղրվող մի իսկական ապուշ: Ադմուկ աղաղակից հետո, տեսնելով, որ ոչինչ չի ստացվում, խորամանկ Սաչերը կղերը թաղում է եկեղեցին իրենց պարտեզից անջատող պատի տակ, ապա պարտեզից որոշ տարածութուն, կղերը դերեզմանն էլ հետը «նվիրում» է եկեղեցուն... Այսպիսով, ազգի գլխին ավերանում է մի «բարերար» ևս, որի շիրմաքարին ապագա սերունդները պիտի կարդան. «Աստ հանգչի ազգիս բարերար Մարսուպ աղա Փորսուխյան»¹:

¹ Վ. Թոթովենց, «Պատմվածքներ» (Ա. շարք), 1921, էջ 40 :

Մինչդեռ ժամանակակիցները զայրուլթով ու զարմանքով, բայց խուլ մանչում են, թե՛ «Վերջը խենթին գերեզմանը բակը ձգեց»¹։

Պատմվածքը հագեցած է հասարակական տարածված չարիքը մերկացնող երգիծական լիցքով։ Հասարակական մի այլ չարիքի՝ կրոնամոլության և հարբեցողության մերկացմանն է նվիրված «Հո՛, հո՛, հո՛» պատմվածքը։ Պատմվածքի հերոսը համտ գերձակ է և մի մոլի հարբեցող, իսկ կինն ու զավակները զբաղվում են բացառապես «սուրբ հոգի» ընդունելով։ Գրողը հավասարաչափ ծաղրում է թե գերձակին (Իսովին), որը հոգին անգամ չի կարողանում ավանդել՝ մինչև հոգևարքի մեջ մի վերջին բաժակ չի կոնծում, թե նրա ընտանիքի կրոնամոլ անդամներին, որոնց փոքր, բնականաբար, չի կշտանում «սուրբ հոգով», և նրանք ևս Ամերիկա են տեղափոխվում՝ այնտեղ գնացած հարբեցող, բայց փող վաստակող գերձակի հետևից։

Հեղնական բնույթ ունի «Ամերիկա գացող հարսնացուն» պատմվածքը, որտեղ հաջող կերպով բնութագրված է հասարակական կյանքից կտրված, բավականաչափ ունեւոր, բայց ասկետիկ կյանք վարող, «հոգեկան և նյութական զրկանքով» ապրող մանր խանութպան Սահակ աղան։ Հեղինակը ծաղրում է նրա չլերօրինակ ժլատությունը, ծիծաղելի,

¹ Վ. Թ ո թ ո վ հ ն ց, «Պատմվածքներ» (Ա. շարք), 1921, էջ 40։

թույլ կողմերը, ցույց տալով, թե ինչպես ապրելով միայնակ, նա ձգտում է որևէ ավելորդ ծախս չանել, բայց առատաձեռն է դառնում, երբ իրեն համարում են երիտասարդ: Նա ծիծաղելի գրութլան մեջ է ընկնում հատկապես այն ժամանակ, երբ ուզում է ամուսնանալ բոլորովին երիտասարդ մի աղջկա հետ, որն Ամերիկա է գալիս իբրև նրա հարսնացուն, բայց իր փեսացուի հետ...

Չանդրադառնալով մյուս երկերին, գրանց թվում նաև «Գարունին սիրտը» գրամալին, «Տունոն» վեպին, հարկ ենք համարում նշել, որ հեղինակը կարողանում է կատարել հոգեբանական հմուտ վերլուծումներ, տալիս է բնության գեղեցիկ նկարագրութլաններ, ստեղծում է պատկերավոր և ինքնատիպ համեմատութլուններ:

Այդ երկերում արդեն երևան է գալիս թոթովենցի ստեղծագործական խառնվածքի կարևոր հատկութլուններից մեկը՝ երգիծողի տաղանդը: Ճիշտ է նկատել ականավոր գրող Ստ. Զորյանը. «Թոթովենցը գրում է վարժ, աշխույժ, ունի երգիծողի անկասկածելի շնորհք»¹: Նրա երգիծական ձիրքը ցայտուն կերպով գրսևորված է վերը նշված գործերում, հետադալում գրված ֆելիետոններում, պատմվածքներում, կատակերգութլուններում, և ամենից ավելի՝ «Դոքտոր Բուրբոնյան» վեպում:

¹ «Գոյքար», 1923, № 4:

Այս վեպը Վ. Թոթովենցի քաղաքական հասցեքների առաջադիմական բնույթի և հակաժողովրդական ուժերի նկատմամբ ունեցած խորապես ժխտողական վերաբերմունքի ամենավառ վկայութիւնն է, մի ստեղծագործութիւն, որն, անշուշտ, հետևանք է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ սև ուղուցիալի ազդեցութեան: Նշանակալից է, որ վեպը գրվել է աչն շրջանում (1918), երբ բուրժուա-նացիոնալիստական դաշնակցութիւնն պարտիան գտնվում էր իր «փառքի վեներթում», աջ ու ձախ հոխորտում էր «անկախ հայրենիքի», «հայրենասիրութիւն», «ազգի փրկութիւն», «հերոսութիւն» և այլ բարձր գաղափարների մասին, փաստորեն ժողովրդին տանելով դեպի գահավեժ կործանում: Երգիծանքի սուր վենքն ուղղելով դաշնակցութեան արատավոր գործունեութեան դեմ, Վ. Թոթովենցը, Ե. Օսյանից հետո, առաջինների շարքումն է շախջախիչ հարված հասցրնում այդ հակաուկուլցիոն պարտիային:

Վեպը նախապես ունեցել է «Հայաստանի Իոն-Քիշտը» վերնագիրը¹: Սակայն հեղինակը

¹ Այս մասին հեղինակը գրքին կցված ծանոթութեան մեջ գրել է. «Այս վեպը առանձին գրքույկով տպագրված էր 1921-ին Պոլսի մեջ՝ «Հայաստանի Տոն-Քիշտը» անունով. բայց հեղինակի կողմէն արգելվեցավ անոր հրատարակ գրվիլը՝ տպագրական անհոռնի սխալներու պատճառով»: Ըստ ուրիշ տեղեկութիւնների՝ գիրքը լույս է տեսել այդ թվականին:

ճիշտ է վարվել՝ փոխելով վերաառույթյունը, որովհետև նա բոլորովին այլ վերաբերմունք է ցույց տալիս դեպի կենտրոնական կերպարը, քան Սերվանտեսը՝ իր կերտած հուշակալոր ապետի նկատմամբ: Թեև Բուրբոնյանը՝ վեպի հերոսը, օժտված է դոնքիշոտյան մի քանի զծերով, բայց իր հոգեբանությամբ ու նպատակներով տարբերվում է Սերվանտեսի կերտած նշանավոր կերպարից, որն աչքի է ընկնում այնպիսի թյամբ, հասկողականորեն ու շիտակ ձգտում է արդարության ու ճշմարտության: Ծիծաղելի են այն մեթոդները, որոնցով Դոն-Քիշոտը ձգտում է հասնել իր նպատակին, բայց համամարդկային, այնիվ, հումանիտական են նրա նպատակները:

Իսկ ո՞վ է դոքտոր Բուրբոնյանը, ո՞րն է նրա սոցիալական էությունը:

Վեպի առաջին մասերում նկարագրելով հերոսի ծնունդը, մանկությունը և տոմարը, Թոթովենցը սկզբից ևեթ գրեցրում է որոշակի ժրտողական վերաբերմունք նրա նկատմամբ: Հ. Պարոնյանի նշանավոր «Ազգային ջոջերի» ինտոնացիայով նա գրում է. «Մանուկը իր արեալին կյանքի առաջին րոպեին իսկ... գայրացավ և գայկին գրկին մեջ, աղված ժամանակ, սազմական ճիչեր արձակեց... Իր ծնունդին գիշերը աքլորներն իրենց բույներուն մեջ կանչեցին... մինչև առավոտ»: Այստեղից մարդիկ, հատկապես նրա ծնողները, եզրակացնում են, թե՛ «Աքլորները մեզմե

աղեկ գիտեն, այս տղան նշանավոր մարդ պիտի
դառնա»:

Վեպի առաջին իսկ տողերից հեղինակը դի-
մում է մտրակող ծիծաղին, որն աստիճանաբար
ուժեղանում է, դառնում է սպանիչ հարված՝ ու-
ղրղված ծնյալ Տիրատուրի, ինքնակոչ «դոքտոր»
Բուրբոնյանի, «հեղափոխական գործիչ» Արքայադ-
նի և, որ էականն է՝ ընդհանրապես հալ ժողո-
վըրդի սխերիմ թշնամի դաշնակցության դեմ,
որի ավանաչությունական ներկայացուցիչներից
մեկն է վեպի կենտրոնական կերպարը Բնո-
րոշ է, որ Տիրատուրը ծնվում է «ավանին ամե-
նաբուրժուա տան ներքնահարկում», արժանա-
նում հարուստ ծնողների հատուկ զուրգորան-
քին, մանուկ հասակից դաստիարակվում է գոռո-
զության, ինքնավստահության, կոստիլոնության ու
փառասիրության ոգով: Խոսել սխելիս, նա առա-
ջին պլանի վրա է մղում իր ԵԱ-ը, շարունակ կըր-
կընելով՝ «Ես եմ...», «Ես պիտի ըլլամ...», «Ես
կազմակերպեցի...» և այլն: Նկատի ունենալով Տի-
րատուրի այդ գիծը, հայրը նրան անվանում է
Բուրբոն՝ հիշելով Ֆրանսիական Բուրբոնյան ար-
քայական գեներատիվի էյուզովիկոս ԺԴ արքայի
«Պետությունը ես եմ» հայանի արտահայտությունը:

Թե՛ ավանի դպրոցում, թե՛ Խարբերդի Եփ-
րատ կոլեջում սովորելու տարիներին՝ Տիրատուրը
«առաջ է գնում» շնորհիվ «ազդեցիկ մարդոց մի-
ջամտության», իսկ ինքն ընկնում է «ձևերու և

փառասիրութեանց հասկե», դիտությունն ձեռք բերելու փոխարենն դառնալով «բացականչութեանց և պլաստիկ ձևերու խրտվիլակ մը»: Տիրատուրը ապրում, շնչում, գործում է լոկ անհող, անպտուղ, բորբոքված երևակայութեամբ, սիրում ու մերժում է սերը՝ երևակայութեամբ, «գոքտորի» աստիճան է ստանում՝ երևակայութեամբ, ճառում է երևակայական անհեթեթ, անխմատ բաների մասին. «Իր համար ամեն ինչ մեկ էր, — գրում է վիպասանը, — միայն արտասանությունն ըլլար բարձրագոյ, հեռտորա - ասպետական և ամբոխավարային»: Եւ այդ բոլորը ոչ թե սոսկ հայտարարութեաններ են վիպում, այլ կոնկրետ գործողութեաններն են մեզ դրսևորված հասկութեաններ: Հիշենք Բուրբոնյանի նամակը օրիորդ Սիրանուշին, գոչութեան չունեցող Հանիֆեին սիրահարվելը, հալրենակից ուսանողների հավաքում, սպա և ավարտման հանդեսին արտասանած ճառերը, որոնց մեջ նա իրեն դրսևորում է որպես այն տիպերից մեկը, որոնց մասին Ե. Օսյանը ասել է. «բառին սերը իր մեջ խեղդած էր իմաստին զգացումը»:

Այսպիսով, Տիրատուրին ներկայացնելով իբրև ինքնահավան, փառասեր, թեև անարամարանական ու անհեթեթ, բայց «կրակոտ» և «ճարտար» ճառերի սիրահար, վիպասանը լիովին նախապատրաստում է նրա հետագա «հեղափոխական գործունեութեանը»: Բնավ էլ պատահական չէ, որ հենց նա՝ է առաջինը արձագանքում Քեմալի «Երոշակ»

դաշնակցական թերթի կողմից Բեյրութ ուղարկ-
 ված Սավարյանի՝ գաղտնի ժողովում արտասանած
 ճառին, մի «փորձված պրոպագանդիստի», որը
 նպատակ ուներ «կուսակցության համար նոր դաշ-
 տեր գտնելու...», հալ ուսանողության մեջ հեղա-
 փոխական սերմեր ցանկելու...»: Այդ ժողովում
 Բուրբոնը իրեն դրակարում է որպես Ե. Օտյանի
 հայտնի «Ընկեր Փանջունու», Վարդհոգյանի («Որ
 մենք հերոս») և մյուսների հոգեկից եղբայրը,
 ճիշտ նրանց նման հոխորտալով այն մասին, թե
 «Հայաստանի ազատության իդեալը եղած է իմ
 երազներուս բոցավառության բուն շարժառիթը»,
 երգվելով «հավատարիմ մնալ այն սրբազան կրա-
 կին, որ այսօր վառեց պարոն Սավարյանը մեր
 հոգիներու մթության մեջ»։

Աստիճանաբար խտացնելով սատիրական
 գույները, Վ. Թոթովենցն անցնում է արդեն դաշ-
 նակցության հավաքագրած և «Արքայազն» մեծա-
 դիրք կեղծանունով մկրտված Բուրբոնի «հեղա-
 փոխական» գործունեության պատկերմանը, քննա-
 դատական այլոց կրակի տակ առնելով նրա և նրա
 պարտիալի ավանալուրիստական գործերն ու ձրդ-
 տունները։ Հատկանշական է, որ նախքան «գործի»
 անցնելը, Արքայազնը հանդես է գալիս ուսանող-
 ական երկրորդ գաղտնի ժողովում, որտեղ քննարկ-
 վում է Բեյրութից հեռացած Սավարյանի նամա-
 կը՝ «ժողովրդի մեջ հեղափոխական տենդենցներ
 ստեղծելու» մասին։ Շատ կողմերով բնորոշ է

ԲՈՒՐՔՈՆԻ արդ ճառը, ուստի բերում ենք ամբողջությամբ:

« — Կեցե՛ք բարով, ընկեր ուսանողներ, — ըսավ անիկա, — ես կերթամ դեպի բանտ և աքսոր, դեպի մահ ու կախաղան, դեպի փառք ու երկինք, դեպի Հայաստանի լեռները. դուք, ըմբռնակալներ այս աշխարհի, դողացե՛ք, սասանեցե՛ք, գոշակեցե՛ք այն բոլոր սարսափները, զոր ես պիտի ուղարկեմ ձեզ. իմ հեղափոխականի անբիծ ճակատը երբեք չպիտի խոնարհվի ձեր առջև, անիկա, իմ հեղափոխականի սեզ, վսեմ ու մաքուր ճակատը, պիտի հպի ստողերուն. կեցե՛ք բարով, ընկերներ, ես կհամբուրեմ ձեր ճակատները, դուք էլ համբուրեցե՛ք իմ բոցավառ ճակատը: Ես կերթամ, դուք կմնաք հոս, ես կերթամ, դուք կարտասավե՛ք հոս, կեցե՛ք բարով, կեցե՛ք բարով»:

Ակնհայտ է, որ այս ճառի մեջ հմտորեն ցուցադրված է վեպի կենտրոնական կերպարի ամբողջ էությունը, հոգեբանությունը, մտածելակերպը, պոստալիտությունը, ինքնուրույնությունը, մեծամտությունը: Դեռևս բացարձակապես ոչինչ չարած և անելիքի մասին էլ կոնկրետ գաղափար չունեցող Բուրքոնը իրեն բնութագրում է իբրև «բոցավառ հեղափոխական», որը գնում է դեպի բանտ ու աքսոր, դեպի փառք ու երկինք, գնում է սարսափ տարածելու բռնակալների վրա...:

Վարպետորեն գործադրելով խոսքի ու գրություն կամիզը, հեղինակը Բուրքոնին գնում է իրոր

ծիծաղելի դրության մեջ, առավել կոմիկական
 դարձնելով Բուրբոնի ճառը, դրանից անմիջապես
 հետո ցույց տալով, թե ինչպես գեպի «մահ ու
 կախադան» գնացող այդ «կրակոտ ճառախոսը»
 իրականում մեկնում է ամալի անապատներով՝
 «հեղափոխականացնելով... լեռներն ու ձորերը»:
 Ճանապարհին նա հանդիպում է երկու թուրք ժան-
 դարմների և հարձակվում է նրանց վրա, իսկ
 նրանք, Բուրբոնի արարական հագուստից կնիթա-
 գրելով, թե նա բարձրաստիճան արար սպա է,
 պարզապես հեռանում են: Բայց ահա այդ ան-
 նշան, պատահական գեպքի «նշանալուր» հետևան-
 քը. «Գիշերը անիկա երազեց, որ բռնակալ կառա-
 վարության կողմեն ձերբակալեցին զինքը, նեռե-
 ցին բանա... Բանաին մեջ սարսափելի տառաշնա-
 ներու կնիթարկեցին դայն, մեխերու վրա նստեցու-
 ցին, եռացած հովիթներ դրին թևերուն տակ,
 ապքացած երկաթներով ալրեցին մարմինը, և ան-
 նիկա հերոսարար գիմադրեց բոլոր շարչարանք-
 ներուն և, հակառակ այնքան խոստումներուն, որևէ
 գողտնիք չտվավ...

Առավատուն անիկա արդեն լրիվ հերոս էր»:

Ահա թե ինչպես է «ծնվում» դաշնակցական
 «նոր և ախպար հեղափոխականը», «սպգալին հե-
 րոսը»: Այդ մտացածին, ինքնահնար «հերոսու-
 թյունը» թմբկահարելու համար մի նոր տապարեզ
 է բացվում օսմանյան հայտնի Սահմանադրությու-
 նից հետո, որից և լայնորեն օգտվում է Արքայազ-

նր: Նա մեծագործը հեռագրեր է հղում դաշնակցական «Երոշակի» խմբագրութեանը՝ հնարելով չեղած «քաջագործութեւններ», «կատաղի կսիւներ», ամենաբարձրագլում է ինքնաթմբկահարմամբ, իր «փառքի» գենիթին հասնելով իր ծննդավայրում: Բայց Արքայազնը չի բավարարվում այդքանով: Նա որոշում է «Հայաստանի ազատագրութեան համար» բանակ ստեղծել: Այդ նպատակով շրջում է գյուղերն ու քաղաքները, գինիւրներ է «հավաքագրում» և կարճ ժամանակում կազմում է մի մեծաքանակ բանակ... իր բլոկնոտում: Իսկ իտալա-թուրքական պատերազմի ժամանակ հասնում է իր «բանակով» օգնել թուրքական բրնակալութեանը, որի գեմ մինչ այդ այնքան «կատաղի կսիւ» էր մղում իր սպարախալի հետ միասին... «Հավաքելով» իր «գորքը», որը բաղկացած էր միայն մեկ հոգուց, այն էլ «հերոս ըլլալու» և հեշտ ապրելու մարմաջով բռնված մի արկածախնդիր անձնավորութեանից, Բուրբոնն սկսում է «գինավարժութեւն» կատարել, գոնքիշտայան ճակատամարտ մղել՝ հյուրանոցի չորս պատերի մեջ, «փալլուն հաղթանակներ» տանել, աստիճանաբար բարձրացնելով իր «հրամանատարական» աստիճանը...: Պատերազմը վերջանում է, բայց խելագարութեան նոսրաներով բռնված Բուրբոնի երևակայութեւնը ծնում է հայոց թագավորութեւնը վերականգնելու միտքը: Այդ մասին նա հրապարակալին ճառ է արտասանում, ձերբակալվում,

նեաւում է բանա՝ խեղագարանոց տեղափոխելու մտաւկա հեռանկարով:

Այսպէս է վերջանում այլ «տիպար հերոսի» գործունեութիւնը, մի կերպար, որի մեջ վիպասանը մարմնավորել է դաշնակցական ավանդուրիւաների մի քանի դերը՝ խոսքի և գործի խոր հակասութիւնը, ինքնաթմբկահարման մարմաջը, «ազատութեան» մասին նրանց ծրագրերի ու գործերի: սնանկութիւնը, արկածախնդրութիւնը:

Ուշագրով է նաև վեպում հանդես բերված Տիրան Ղալանյանի (Փանթաղիո) կերպարը, որը Օսլանի աչքան վարակետորեն քանդակած «հեղափոխութեան մակարույծներին» շարքին է պատկանում: Ամենուր իրեն ներկայացնելով իբրև մի մարդ, որը «երկար տարիներ, հակառակ իր կրիտասարդութեան, ծառայած է հեղափոխութեան և հայրենիքին», «շիք ձեւում» տակ թաքցնելով իր սնամեջ էութիւնը, նա հարուստ օժիտով աղջիկներ է որոնում, անբարոյականութեան համար ծեծվում և վիրավորվում է, բայց ձեռացնում է, թե «ազատութեան» համար միայն պայքարում է վերք ստացել, ի վերջո ընկնում է բանա՝ որպէս դրամաշորթ:

Այս կերպարների հետ միասին, վեպում գործադրված են դաշնակցութեան մերկացմանն ուղղված նաև ծաղրի ուրիշ միջոցներ: Վիպասանը ցույց է տալիս, որ «կենտրոնում» նստած, այսպէս կոչված «գեկաւորները» իրենց էութեամբ չեն

զանազանում Արքայազնից, Փանթազիայից և նրանց նման մյուս մականուններից: Նրանք են, որ կյանքի են կոչում բախտախնդիր տարրերին, իրենց գործունեությունը հիմնում են նրանց շինծու, Ֆանատատիկ հեռագրերի ու հաղորդումների վրա, ընթացք են տալիս նրանց հարուցած հարցերին: Այս խմատով առանձնապես աշագրավ է Բուրբոնի երեսկայական բանակը խառապիկների դեմ հանելու հարցի պատմությունը: Կյանքից կարված, իրական գրությունը լիովին անձանով «պատասխանատու մարմինն ու նվազ տառապանքի և երեսկայություն մեջ չէր, — դրում է հեղինակը, — Բուրբոնի նման խելացեորի բղձանքը նյութ գործուց «սկզբունքային հոկայական» վիճաբանություն, ցնցվեցավ, ջղախնացավ, մերթ լրջորեն խորհեցավ, մերթ թեթևորեն... Պատասխանատու մարմինը թողուց իջ բանն ու գործը և բոլոր ժողովներու օրակարգի նյութ գործուց «Ջնկեր Արքայազնի պատերազմի մասնակցելու հարցը»: Հեռագրվեցավ Ժնն և Կոփլաս, պատասխան ստացվեցավ. «խառնիվ արդեղիկ հաշիական բանակ ուղարկել խառական բանակներու դեմ»: Ահա թե ինչպիսի ստրկագմով է սլաակիբոված դաշնակցական «պատասխանատու մարմինների» գործունեությունը:

«Դոքտոր Բուրբոնյան» վեպը անթերի չէ. քննադատությունը ճիշտ է նկատել, թե որոշ ֆիլիետանային բնույթ ունի Բուրբոնի կերպարը, վե-

պում կան ձգձգված հատվածներ (օրինակ՝ անդո
Հանրապետական վերաբերյալ մասը):

Սակայն, էականն այն է, որ հեղինակը նպա-
տակաւորապէս է դործադրել երդիծանքի միջոցները՝
խոսքի և դրամայի կամ իզմ, ալոյիզմ, կարիկա-
տուրա, շարժ և այլն, ճշմարտացի վերաբարտագրի-
ւոյ ժամանակի մի քանի բնորոշ կողմերը: Գրո-
ղը գիտաւորապէս սրել, չափազանցել է սրտը երե-
վույթներ, մի բան, որ երգիծանքի բնորոշ կող-
մերից մեկն է:

Վ. Թոթովենցը գրքի բնարանում ասում է. «Այս
վեպը ես գրած չեմ ծագրելու, ծիծաղեցնելու և հեղ-
նելու համար, այս վեպը գրած եմ, որպէսզի մարդիկ
կարգան և դառնապես արտասովին»: Վեպն իրոք
ստիպում է դառնորեն ծիծաղել և սղրալ այն բա-
նի համար, որ հայ ժողովրդի բախար անօրինելու
գերը սաանձնել էին դաշնակցական ավանալու-
րիսաները, Բուրբոնի նման խելացնոր, հաճակ-
նոտ, ֆրագլոր արկածախնդիրները:

Ինչպէս տեսնում ենք, մինչև Սովետական
Հայաստան տեղափոխուելը Վ. Թոթովենցն արդեն
ունի որոշակի վերաբերմանք կյանքի երևույթ-
ների նկատմամբ, իբրև առաջադեմ դեմոկրատ
գրող խորագանում էր հետամնացն ու արատա-
գորը, հակաժողովրդական ուժերին, այդ թվում
հատկապէս դաշնակցութեանը: Մյուս կողմից գրո-
ղը գիտես ամբողջ խորութեամբ չէր պատկերաց-
նում Ռուսաստանում կատարուող սեռայնացիոն

գեալքերի պատմական զարգացման ընթացքը: Այս բանի ապացույցն է «Փոթորկին մեջ» վիպակը, որի մեջ նա փորձում է պատկերել սեռչուցիայի հաղթանակից անմիջապես հետո ստեղծված իրադրույթյան մի քանի կողմերը, մասնավորապես 1918 թվականի գեալքերը Վլադիկապոլում: Հեղինակը վիպակում վերաբնակարարում է իր ստացած թարմ տպավորությունները՝ գեալքերի անմիջական ազդեցության տակ, իսկ գեալքերն ինչպես հայանի: Է, պատկերվող ժամանակաշրջանում Հյուսիսային Կովկասում ևս կատարվում էին խեղճեղ արագությամբ, հակառակույցիտն ուժերը, բայցահայտ ու թաքնված թշնամիները ճգնում էին կանգնեցնել սեռչուցիայի առաջընթացը, վերականգնել տապալված սեփականատիրական իրավակարգը, ամեն ստոր միջոցներով ստեղծում էին անարխիա, խառնաշփոթություն, բանդիտային հարձակումներ, ավարատություն, կոզոպուտ, սպեկուլյացիա: Ռեռլուցիայի և նրա ոխերիմ թշնամիների անհաշտ բախման պրոցեսում երևան եկող այդ երևույթների նկարագրությունն է անա, որ ավելի է զբաղեցրել գրողին, քան գեալքերի պատմական ընթացքի և սեռչուցիայի բուն էությունը հեղարվեստական բացահայտումը: Մա է վիպակի հիմնական թերությունը: Պատահական չէ, որ վիպակում բուլշևիկ Լևոնիդ Կալինսկին չի գարձիլ բազմակողմանիորեն բնութագրված լիարյուն կերպար: Սակայն, մյուս կողմից, պարզորեն գրաց-

վում է գրողի միանգամայն դրական վերաբերմունքը այդ կերպարի նկատմամբ: «Ժողովրդական զանգվածների ապագայի» մասին անընդմեջ խորհող հեղինակը շարունակ իրեն հարց է տալիս, թե՞ «Ո՞ւր է երջանկությունը, ո՞ւր պետք է գտնել զայն կամ ինչպե՞ս, ե՞րբ...» և ահա, իր հոգին փոթորկող այդ հարցերի պատասխանն ստանում է Կալինսկու հետ ծանոթանալուց, ժողովրդական մասսաների առաջ նրա հրատարակչին ելույթները լսելուց հետո: Նա համոզվում է, որ Կալինսկին և սեռլուցիոն ջոկատներն առհասարակ պատժում են չարը, վնասակարը, իսկական հանցապարաներին, հայրենիքի ու ժողովրդի թըշնամիներին, որ սեռլուցիան կոչված է ստեղծելու մարդկային ազնիվ փոխհարաբերություններ, իրական ազատություն ու երջանկություն: Եվ պատահական չէ, որ Կալինսկու հերոսական մահը հանուն ազատության նկարագրված է խոր ցավով, սրտաուռ թոնով, բարեկամական ջերմ զգացումներով:

Սյապխով ակնհայտ է, որ մինչև Սովետական Հայաստան տեղափոխվելը Վահան Թոթովենցը հիմնականում արդեն ունի հասարակական ճիշտ կողմնորոշում և գրական բախականին վաստակ, իրեն գրեկորել էր սրպես առաջադեմ, սեփական ձայն տնկող ու բազմաժանր մի գրող:



1922 թվականին Վ. Թոթովենցը Սովետական Հայաստան է անդափոխվում՝ վերածնված հայ ժողովրդի բախտի ու ապագայի նկատմամբ լավատեսական հավատով լեցուն, խորտալեռ գիտակցելով, որ Սովետական իշխանություն հաստատմամբ նոր դարագլուխ է սկսվում նաև հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ: Այդ գիտակցությունից է բխում այն ճշմարիտ ու անշեղ հավատը, թե «մեր նոր զրականությունը իր հասակը կաննի միայն այստեղ, ժողովրդի ծոցում»¹: Այլ ինքը՝ Թոթովենցը ամենայն ախտիվությունը մասնակցում է դասական զրականության բարձր արագիցիաների շարունակությունն ու հետագա զարգացումը հանդիսացող սոցիալիստական նոր զրականության հաստատման պատմական պրոցեսին, իրեն դրսևորելով սրբիս Հայաստանի նոր կուլտուրայի անխոնջ մշակներից մեկը:

¹ «Պայքար», 1923, № 1, էջ 6:

Սովետական Հայաստան անդամագրության հետևանքով Թոթովենցը մի կարճ ժամանակ զբաղվում է մանկավարժական աշխատանքով, նշանակվում է Երևանի պետական համալսարանի քարտուղար, գտնում է մի շարք պարբերականների խմբագրական կոլեգիաների անդամ, խմբագրում է «Շեշտ» (1923) երգիծական ամսագիրը, ակտիվորեն մասնակցում է գրական և թատերական երկերի քննարկումներին: Նա բազմիցս այցելում է սոցիալիստական նորակառույցները, վերափոխվող գյուղերն ու քաղաքները, հաշ գրողների բրիգադների կազմում այցելում է հղբալրական սեպուր-լիկաները (Վրաստան, Ադրբեջան և այլն), իսկ 1934 թվականին Մոսկվայում մասնակցում է Սովետական գրողների Համամիութենական առաջին համագումարին: Շատ ավելի հասակ տեսնելով նախկինում տնեցած իր որոշ մուլտրոթյունների էսթյունը, Թոթովենցը մի նոր ուժով է իր փորձը, ղիտելիքները, իր տաղանդը ի սպաս դնում սոցիալիզմ կառուցող ժողովրդի շահերին, սոցիալիստական կուլտուրայի ու գրականության շահերին: 20-ական թվականներին Վ. Թոթովենցը հանդես է գալիս գտտական ժառանգությանը նրվիրված մի շարք հոգվածներով, որոնց մեջ սկզբունքային ճիշտ գիրքերից բացահայտում է անցյալի արժեքների նշանակությունը սոցիալիստական նոր կուլտուրայի կառուցման գործում: Դեռ սկզբնականից առաջ գրած հոգվածներում գեղար-

վեստական գրականութեան և արվեստի բարձր նպատակը համարելով ժողովրդի շահերին ծառայելը, Թոթովենցը հայանում է այն միտքը, որ գրողը չի կարող և չպետք է անտարբեր մնա իր ժողովրդի բախտի նկատմամբ, մանավանդ վերջինիս կյանքի օրհասական պահերին, ճիշտ այնպես, ինչպիսի մտքը չի կարող անտարբեր դնուել իր հարազատ գախակի մտնը: Այս տեսակետից նա բարձր գնահատական է տալիս այնպիսի գրողների ստեղծագործութեանը, ինչպիսիք են Միամանթոն, Ռ. Զարգարյանը, Գ. Վարուժանը, Գ. Զոհրապը, Հովհ. Թլկատինցին և արիշներ, որոնք հարազատ ժողովրդի հետ են եղել՝ նրա դոյութեան ամենածանր ողբերգութեան պահին, գոհ են զնացել ժողովրդի միլիոնավոր զավակների հետ միասին: Հիշյալ գրողներին նվիրված հոդվածները արձակ բանաստեղծութեանների տպագրութեան են թողնում՝ այնքան ջերմ են, հուզաթաթալ, անմիջական ու սեզմ: Եվ կարևորն այն է, որ Թոթովենցը տալիս է գրողներից յուրաքանչյուրի ուրույն բնութագիրը, կերտելով գրական դիմանկարներ՝ յուրաքանչյուրի համարձգանում է յարտի գույներ, երանգներ, խոսքի ինտոնացիաներ:

Գրողի կոչման վերաբերյալ գեղարվեստական ճիշտ հայացքները ավելի են խորանում Մովեսական Հայաստանում, երբ նա հանդես է գալիս գրականութեան ու կուլտուրայի վիճակը, լանդիրները, զարգացման հեռանկարները շոշափող և մի

շարք գրողների, արվեստագետների, արտիստների նվիրված հոգվածներով: Ուշագրություն է գրավում այն համագամանքը, որ 20-ական թվականներին անցյալի կուլտուրական ժառանգության նըկատամբ ուսուցական հախուռն ժխտողական վերաբերմունքի պայմաններում, Վ. Թոթովինցը մի շարք հոգվածներում բարձր է գնահատում հայ դասական գրականության անվանի ներկայացուցիչների՝ Ալ. Շիրվանզադեի, Հ. Պարոնյանի, Ե. Օտյանի և ուրիշների ժառանգությունը:

1923 թվականին գրված այդ հոգվածներում նա ցույց է տալիս, որ կլասիկների ռեալիզմը, ժողովրդաչնությունը, բարձր գաղափարները ինքնատիպ արվեստով արտահայտելու վարպետությունը երբեք չեն կորցնի իրենց թարմությունը և օրինակ պետք է ծառայեն երիտասարդ գրողների համար: Նա հասկապես ընդգծում է Պարոնյանի սկզբունքաչնությունը, պայծառությունը, ժամանակի կենսական հարցերին պատասխան տալու արդիվ ձգտումը, գմայլելի վարպետությունը, Ե. Օտյանի, «անողոք ու կրթիչ ծիծաղը», «պարզ, վճիռ, խորունկ, սահուն» գրելակերպը, «լեռներից վազող սառը ջրերին նմանվող» Հովհ. Թլկանախինցու ստեղծագործությունը: Հետագա տարիներին Վ. Թոթովինցը արժեքավոր հոգվածներ է գրում համաշխարհային գրականության (Շեքսպիր, Գոթկի, Բարբյուս, Իբսեն) և հայ գրակա-

նության («Ալ. Շէրվանյազի, կենսագրութուն»
գրքուիլը) կլասիկներն մասին:

Առանձնապես հետաքրքրական են 20-ական
թվականներին գրված հոդվածները ամերիկյան
«մոդեռն» արվեստի՝ թատրոնի, կինոյի, գրական-
նության և դաստիարակչական գրողներին մասին:

Ամերիկյան բուրժուական թատրոնը, կինոն,
գրականութունը, ինչպես հաստատում է այդ
իրականությանը քաջածանաթ Վ. Թոթովենցը, լիտ-
վին ու ամբողջապես կախված են «փոփոք քսա-
կից» և կոչված են բախարարելու փողի արքանե-
րի քմահաճույքները: Իմպերիալիստական առաջին
ավերիչ պատերազմից է՛լ ավելի հարստացած և
հարստության մեջ հղիացած մարդիկ պահանջում
են «թեթևը, կրճատը, շլացուցիչը, սենսիվնալը»¹:
Դրամի ու ժող ստիպում են ցուցադրել թեթև կո-
մենդիաներ և տեխնիկներ, մերկամարմին աղջիկներ
ու ըմբիշներ, խոյ նրանց շահերին ծառայող «ար-
վեստագիտները» իրոք այդպես էլ վարվում են,
ներկայացնելով լոկ արտաքին փայլ, շլացուցիչ
էֆեկաներ, լույսերի ու դուչների խաղ և այդ բո-
լորը կոչելով «արվեստ»: «Կինոյի տեսաուրը Ամե-
րիկայում,—գրում է Թոթովենցը,—հսկա ապիկո-
լյացիայի դաշտ է»²: Եվ այդ վերաբերում է նաև
թատրոնին, գրականությանը, նկարչությանը,
երաժշտությանը:

¹ «Պոյբար», 1923, № 2, էջ 25:

² Նույն տեղում:

Կապիտալիստական երկրներում ապրող գրող-ները ու արվեստագետները համար, Սիլվա Երսե-
 դանվոյ հալ գրողներն էլ, ինչպէս ցույց է տալիս
 Թոթովինցը, բաժանվում են տարբեր խմբերի:
 Նրանց մի մասը ծառայում է բարձուազիակի ու
 սեակցիակի շահերին, գրում է պատվերով, կատա-
 բում է իր տերերի կամ քը, ուստի, բնականորեն,
 հետև է արվեստի իսկական կոթողներ ստեղծելու
 ազնիվ նպատակից: Գրողների մի այլ խումբ ապ-
 բուստի միջոցներ հայթայթելու, իր գոյությունը
 պահպանելու համար ստիպված է աուրք առլ Եղև-
 դին լրագրությանը», գրել «հավուր պատշաճի»,
 կեղծել իր բոլոր մտքերն ու պրացմունքները:
 Բայց ապագան պատկանում է այն տաղավոր
 գրողներին, որոնք, չինտելիգի իրենց ուժերը,
 դժվարին պայմաններում պայքարում են ճշմա-
 րիտ արվեստի համար: Ըստ Թոթովինցի՝ ծանր է
 վերջիններիս գրությունը ոչ միայն այն պատճա-
 սով, որ ենթարկվում են հարձականքների, այլև
 նրա համար, որ հետև են հալլենի երկրից ու հա-
 բազատ ժողովրդից, որը և հանդիսանում է ամեն
 մի առաջադեմ գրողի ստեղծագործական անսպաս
 աղբյուրը: Ժողովուրդն է, որ պետք է ճմանի իր
 պոետի հոգու մեջ, լալնացնի նրա կար, նրա
 ներքին աշխարհը, և այդ կար պատճա և բոլորի-
 նը»¹:

1 Պայքար, 1923, № 1, էջ 6:

Վ. Թոթովենցը ուրախությամբ ու հրեշտանքով է գրում այն մասին, որ ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ գրողներն ու արվեստագետները չեն ունեցել ստեղծագործելու այնպիսի լայն ու բազմակողմանի հնարավորություններ ու պայմաններ, ինչպես սովետական իրավիպարգում: Իսկ այդ պարտավորեցնում է ստեղծել մեծարժեք ու մնալու գործեր: Արձագանքելով Արտաշատի կոլաբնատեսականներին՝ գրողներին ուղղված մի նամակին, Վ. Թոթովենցը գրում է. «Մենք պարտավոր ենք գրել այնպիսի գրական երկեր, որոնք ձեռքից ձեռք խլվեն, ինչպես Շուրխովի «Հերկած խոպան»-ը, այնպիսի երկեր, որոնք հարազատ գույներով պատկերեն մեր ամբողջ կյանքը»¹:

Նշելով գրականության թեմատիկ բազմազանությունն անհրաժեշտությունը, հիմնավորելով անցյալի մասին գրելու իր ներքին պահանջը, որը պայմանավորված էր նոր սերնդին իր ապրած կյանքին ծանոթացնելու և վերաբերմունք դաստիարակելու ազնիվ մղումով², Վ. Թոթովենցը, միաժամանակ ամենայն կրքոտությամբ պայքարել է այն սխալ կոնցեպցիայի դեմ, ըստ որի սովետական իրականությունը, իբր թե, «սոցքատ» է,

¹ «Գրական թերթ», 1935, № 23:

² «Ես ճանապարհորդել և ապրել եմ աշխարհիս կես մասի զանազան կետերում, ես չեմ կարող իմ հարուստ ազավորությունները հողմերին սալ» («Խորհրդային Հայաստան», 1928, № 109):

նյութ չի տալիս լիարժեք գեղարվեստական
 օտեղծադործության համար: Սովետական արվես-
 արը Թոթովենցը գիտում է իրրև «գասակարգային
 պայքարի հզոր պենքերից մեկը»,¹ որն իր արդ-
 բարձր կոչումը արդարացնելու համար պետք է
 հանդես բերի «ավելի մոտեցում մեր սոցիալիս-
 տական շինարարությանը, մեր մոտիկ անցյալի
 հեղափոխական պայքարի պատմությանը, ավելի
 ու ավելի մխրճվի մեր ասօրյալում, մեր սյրակ-
 տիկայում»²: Սովետական դրամատուրգիայի ա-
 ռաջնահերթ խնդիրը նա համարում է թատրոն-
 ների խողացածնը սովետական թեմատիկա ունե-
 ցող պիեսներով հարստացնելը, քանի որ «դրամա-
 տուրգիայի համար չի եղել ավելի հարուստ էպո-
 խա, քան մեր էպոխան»³:

Սովետական Հայաստանում առավել բեղմնա-
 վոր է դառնում Թոթովենցի գրիչը: Բափական է
 ասել, որ պարբերական մամուլում տպագրված
 հարյուրավոր հոդվածներից, օկնարկներից, ֆելիե-
 տոններից, պատմվածքներից բացի, ընդամենը
 մեկ ու կես տասնամյակից էլ սշակաւ ժամանա-
 կաշրջանում նա գրում և առանձին գրքերով հրա-
 տարակում է «Մահվան բատալիոն» (1923),
 «Պողպատի ճաշ» (1927), «Երկու սուր» (1930),

¹ «Ծորհ. Հայաստան», 1930, 107:

² Նույն տեղում:

³ «Գրական թերթ», 1932, № 4:

«Բաքու — Լանդոն» (1931, վերջինս լույս չի տեսել, բայց բեմադրվել է), «Մախրակայա» (1936) պիեսները, «Նյու-Յորք» (1929), «Բաքու» (1930 — 1934), «Կլանքը հին հուլիանական ճանապարհի վրա» (1930), «Հրկիզված թղթեր» (1934), «Հովնաթան՝ որդի Երեմիայի» (1935) վիպերն ու վիպակները, «Ամերիկա» (1929) պատմվածքների ժողովածուս: Պարբերականներում ապագրվել են «Կոմսոմոլ Կարուի արկածները» (1927), «Ելումբրի — Նյու-Յորք» (1929), «Պերսի Մալվադոր» (1930) վիպակները, ինչպես նաև «Բաց-կատույա ծաղիկներ», «Ծիրանի ծառ», «Դաշտատիան սղերգուխիտն», «Երկու գերիզման», «Յըլլըլ» և այլ պատմվածքները: Այս պարզ թվարկումն իսկ ցույց է տալիս, թե որքա՞ն հարստանում է Վ. Թոթովենցի գրական ժառանգը Մովսեսիան Հաշտատանում:

Սակայն առավել կարևորը և նշանակալիցն այն է, որ Թոթովենցը սովետահայ առաջին գրողներից է, որը հանդես է գալիս սովետական բազմազգ ժողովուրդների պատմաանողությունն անցյալը պատկերող բազմաշուքի վեպով («Բաքու») և պիեսով («Հրկիզ»): Նա առաջիններից մեկն է, որ փորձում է ստեղծել արկածային վիպակներ («Պերսի Մալվադոր» և այլն): Նրա գրչին է պատկանում մանկաթյան թեմայով գրված առաջին ու լավագույն ստեղծագործություններից մեկը՝ «Կլանքը հին հուլիանական ճանապարհի վրա»:

Վ. Թոթովենցը թեմատիկ նորություն է բերել մեր գրականությանը իր ամերիկյան պատմվածքների վերջապես նա իր խոսքն է ասել հնի վիզուզման ու նորի ստեղծման պատմական սրտցեւը, մարդկային նոր փոխհարաբերությունները արտացոլելու ուղղությամբ:

Սովետական կյանքի երևույթները, նոր կյանք կառուցող ժողովրդի ստեղծարար աշխատանքը, նոր մարդկանց առօրյան ամենից առաջ ցուցադրվում են Վ. Թոթովենցի փոքրածավալ ստեղծագործությունների մեջ և հատկապես ակնարկներում:

Վ. Թոթովենցի ակնարկների հերոսը սովետական մարդն է, որը արիարար հաղթահարելով դժվարությունները, վերափոխում է կյանքը, աստիճանաբար անապատները դարձնում է ծաղիլուն այգեստան, բարձրացնում է հույսը նորակառույցներ, լուսավորում դարերով խավար գյուղերն ու քաղաքները: Գրողը այցելելով մի շարք շինարարական օբյեկտներ, ամենուր տեսնում է «անապատների գերությունից ապատագրվելու պայքարը, ֆիկտիվ, սոմանտիկ ապատությունից դեպի իրական ապատության ձգտող ժողովրդի կամքը»¹: Սովետական մարդկանց հրաշագործ աշխատանքների մասին նա գրում է. «Սրարաայան դաշտում հյուսվում է մի նոր լեզուն: Այդ լեզունը մեղրածոր դարձնելու համար հարկավոր է

¹ «Խորհրդային Հայաստան», 1921, № 134:

գարևրի մշուշը: Հաշորդ գարնան, երբ ջուրը կս-
դեղե տապից խանձված գաշտերը, երբ բամբակի
դուլնագուլն ծաղիկները կբացվեն կապույտ երկըն-
քի գիմաց, այդ լեղենը կբանա հերոսապատում,
նրա բոլոր տարրերը կգառնան էպիքական, և մի
նոր երգիչ պարզ լիզվով, այնքան պարզ, որքան
լեզենդի հերոսները, կպատմի աշխարհին նրանց
գովքը»¹:

«Նոր լեզենդա», «Սորհրդային էպոս», «Տեխ-
նիկա և սոնդիա», «Կոլանտեսուսթյան օրը», «Ա-
ճի՛ր, երկիր իմ», «Կարբիդի գործարանից», «Նու-
բարաշեն», «Շողշողուն կրազ» և մյուս ակնարկ-
ների մեջ ցույց է տրվում, թե որքան վեհ ու
հոյակապ են սովետական մարդկանց գործերն ու
ստեղծագործ ներկան: Բերելով կոնկրետ, իրական
օրինակներ, թվեր ու փաստեր, ակնակազիրը հաս-
տատում է, որ քալլ առ քալլ, ժամ առ ժամ
կլանքում իրագործվում են սովետական մարդ-
կանց պլանները, ծրագրերը, նրանց «շողշողուն
կրազները»:

Վ. Թոթովենցը ակնարկներ է դրել քուրդ
աշխատավորների, սովետական կանանց և ոսպ-
միկների, հայկական ճարտարապետական կոթող-
ների, մի շարք գործարանների ու կոլանտեսու-
սթյունների բազմաթիվ սուօբյա երևույթների,
դեպքերի ու առանձին մարդկանց մասին: Իհարկե,
նրա ակնարկները թվում կան նաև հոգվածային

¹ «Սորհրդային Հայաստան», 1927, № 130:

բնույթ կրող, թույլ գործեր, բայց լավագուշնները աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, էմոցիոնալ հագեցվածությամբ ու պատկերավոր նկարազրույթյուններով:

Իրենց գեղարվեստական ուժով և սովետական կյանքի հաստատման պաթոսով նշանակալից են Վ. Թոթովենցի «Լենին», «Նոյնմբերին», «Արեալին», «Գարո՛ւն, գարո՛ւն, գարո՛ւն», «Աշնանային պատկերներ» և մի քանի ուրիշ ստեղծագործություններ: Մավալով փոքր, բայց հուզերով հարուստ այդ գործերում հեղինակը վերարտադրում է նորի հաղթական առաջընթացը, նրկարագրում է բնության զարթոնքը:

«Գարուն...»-ը նա ճիշտ կերպով անվանել է «Երգ»: Իս իրոք երգի պես հնչող արձակ բանաստեղծություն է բնության, գարնան կենսաբեր էություն և առանձնապես կյանքի ու բնության զարգը հանդիսացող սովետական մարդու՝ համայնական սերմնացանի մասին, որը «ստեղծագործում է անգուլ և անդադար... արգասավորում է կյանքի շուրաքանչյուր վայրկյանը»¹: Մարդուն դիտելով իբրև արարիչ, բնության ծաղիկ, դրողն իր գրչակից ընկերների սրբադան պարաքն է համարում երգել նրա հերոսական ներկան ու ապագան: «Հարավի թռչունի առաջին թևի հետ,—գրում է նա,—մեր պաշտանկարում գծագրվում է մի հե-

¹ «Նորհ. Հայաստան», 1936, № 73:

րոտական կերպարանք, կերպարանքը համայնական սերմնացանի, կերպարանքը հազթական դարաշրջանի, կերպարանք, որ դրոշմում է իրեն ժամանակի ասլառածների վրա անջնջելի, իրրև սակեղեն և հրեղեն մի բարձրաքանդակ, անջնջելի, վասնզի համայնական սերմնացանը ցանում է աչնքան խոր և աչնքան սուտա, որ հնձեն դարերը, հնձեն ու չվերջանա...

Ո՞վ համայնական սերմնացան. քո մեկ հատիկ քրտինքն ալիլի է կշռում, քան բոլոր մարգարիաներն արևելյան աշխարհի, քան բոլոր սակիներն արևմտյան օստանների, վասնզի քո քրտինքը ջինջ է՝ ինչպես ասողը մեր երկնքում և ինչպես ցողը վարդի թերթի վրա, մաքուր է, ջերմագին և ստեղծագործող»¹:

«Լենին» երկում ջերմ առդերով Թոթովենցը դրսևորում է իր նվիրական զգացումները, որը ունենում է «դարի խոշորագույն մարդու»՝ սոցիալիստի հանճար Վ. Ի. Լենինի դամբարանին ալցեղելիա: Հորդարտիս զգացումներով նա պատմում է, որ տեսել է աշխարհի շատ հրաշալիքներ, մեծ արվեստապետների, գրողների հուշարձաններ, արվեստի հուշակապ կոթողներ, եղել են պահեր, երբ հիացմունքից հարբած տենչացել է, «որ ամեն ինչ կանգ առնի, քարանա, որպեսզի գեղեցկութունը լինի հավիտենական և անմահ», բայց ո՞չ մի տեղ ու ո՞չ մի ժամանակ չի ունեցել ալնայիսի

¹ «Լեոքհ. Հայաստան», 1936, № 73:

փոթորիկալի ու լուսավոր հույզեր, որքան մեծ առաջնորդի դամբարանի աստիճաններից իջնելիս. «Ո՛չ մի ժամանակ իմ հոգին չի եղել երկյուղածության, աննշանքի ու հափշտակության արնալիսի պայծառ մրրիկում, որքան այդ աստիճաններից իջնելիս»¹:

Արժանի լինել նոր, լենինյան դարին—այս է սովետական մարդու բարձր կոչումը, իսկ այդ վեհ կոչմանն արժանանալու համար նաև ինքը՝ «մարդը պիտի լինի նոր—ահա հիմնականը»²—գրում է Թոթովենցը իր ակնարկներից մեկում: Եվ իր ըստեղծագործություններում նա ցույց է տալիս, թե ինչպես ստեղծելով նոր կյանք, վերափոխելով հինը, փոխվում ու զարգանում են նաև իրենք մարդիկ՝ լանվորները, գյուղացիները: Մարդկանց գիտակցական ու հոգեկան աշխարհի վերափոխման այդ դժվարին պրոցեսն է վերարտադրված Վ. Թոթովենցի «Հրկիզված թղթեր» վիպակում:

Վիպակի գլխավոր հերոսը՝ պրոֆեսոր Միքայել Մելիք-Անդրեասյանը հին աշխարհից եկած մտավորական է, Արևմտյան Եվրոպայի պատմության խոշոր մասնագետ, ճանաչված գիտնական և գեղարվարում է բարձրագույն տնտեսական հաստատությունների պատմության ամբիոնը: Ինքը՝ պրոֆեսորը թեև բարձրացել է ներքնախավերից, ուսում է ստացել՝ հարուստների «ողորմություն» ու «բա-

¹ «Գրական թերթ», 1933, № 2:

² «Խորհ. Հայաստան», 1927, № 170:

րերարութեան» շնորհիվ, բայց մի ինչ-որ ներքին
զգացում նրան կապում է անցյալի հետ, ավելի
շուտ նրա հոգում ապրում են հուշեր այդ անցյա-
լի մասին: Թեև, իբրև ընդունակ գիտնական, նա
կարճ ժամանակամիջոցում կարողանում է յուրաց-
նել մարքսիստական գիտութեան հիմնական սկզբ-
բունքները, սակայն հինը շարունակ իրեն զգալ է
տալիս, ստիպում պրոֆեսորին ապրելու խոր երկ-
վութեան: Մի կողմից՝ պրոֆեսորի մեջ միս ու
արյուն դարձած, բայց արագութեամբ իր գիրքերը
զիջող հինը, մյուս կողմից՝ մարքս-լենինյան գիտա-
թեան ճշմարտացիութեանը անհերքելիորեն հա-
վաստող նորը օժգնորեն բախվում են նրա ներաշ-
խարհում: Նոր կյանքի հաղթանակը նա տեսնում
է յուրաքանչյուր քայլափոխին: «...Ահա բարձրա-
նում են շենքերը, տափակ, միհարկանի կաուր-
ները մնում են ստվերների տակ, արևը վեր է
բարձրացել և նստել բարձր շենքերի վրա, մտ-
նակների ճիչը բարձր է և ջինջ, տալիս ընթացքն
անգամ արագացել է, արևի ոսկյա փրփուրը
թափվել է Արարատյան դաշտի վրա, ջկա հին
ծարավը, խորութեաններից բարձրանում են ջրե-
րը վեր, նորից հասնում ներքև, և դարավոր առչո-
րող հողը ժպտում է ջրի գովութեան մեջ»: Նա
համոզվում է, որ նորը անկաշկանդ դարդանում է,
հինը աստիճանաբար տեղի է տալիս կյանքում,
իրականութեան մեջ, և իրավացիորեն իրեն հա-
մեմատում է հսկա նորակառույցի կողքին կուչ

եկած, միայն հենակների օղնութլամբ կանգուն մնացող անակի հետ, որովհետեւ ինքն էլ, ներքուստ կատչելով հին սկզբունքներից, «պարզապես հենարաններ էր կառուցել իր հոգու և խմայակա-նության առաջ, որ չփլչեն»։ Կյանքը օրինաչափ կերպով կատարում է իբր գերբ, բուրժուական պատմագրության նրա յուրացրած «պատմական տեսությանները... փշրվում են մեկը մյուսի հետեից»։ Նորն աստիճանարար սկսում է գերա-կշռող գառնալ պրոֆեսորի ներաշխարհում։

Եվ ահա որոշվում է Մելիք-Անդրեասյանին վեց ամսով գործուղել արտատահման։ Այդ որոշումը նա ընկալում է որպես հնի հաղթանակ, ներքնապես վճռում է գնալ ու չվերադառնալ։ Սակայն գեռես ճանապարհին՝ նալի վրա, նա նորից տեսնում է բուրժուական կյանքի արատավոր բար-քերը, Փարիզ հասնելիս սկզբից եկթ ենթարկվում է մարդկային արժանապատվությունը սանահարող լկախ խողարկության, ծաղրի առարկա է գառնում ազատության ու գեմեկրատիայի մասին խոսելիս։ Այցելելով իր նախկին «բարերար» միլիոնատերի ընտանիքին, պրոֆեսորը տեսնում է, թե ինչպես էմիգրացիայում, «ոսկու փայլն» ընկնելուց հետո, բացվել է ալլանդակությունների վարագուղիքը, երևում են «շքեղ կեցտերը», ընտանիք, որի ան-գամները «վերադարձել էին իրենց բնական սո-ցիալական կատեգորիային, ինչ որ երևացել էր

բարոյական, վեհ, պատկառելի, եղև էր սուրբութալը, սուրբութիւնը հնչեալն էր և սուրբութիւնը: Այդ բանում նա համոզվում է նաև էմիգրանտ կղերական գրուցելիս, սպաս տկանատես է լինում դործադրութեան, դործադուլային ցույցերի, ստախանական կամալականութեաններէ, հանդիպում է «բացի ժողովրդական հոծ դանդախութեանց, բանվորներէ ու արհեստավորներէ, նաև մասավորականներէ և արվեստագիտներէ, որոնք, առանց հուշի որևէ նշուլի, թախտում էին անհանգրվան»: Պրոֆեսորի ասաջ հառնում է բուրժուական աշխարհն իր ամբողջ մերկութեամբ, մի աշխարհ, որ «բռնված է շահագործման տենչով, խարում են բոլորը, բոլորը, ամեն ինչ չափվում է շահագործման աստիճաններով»: Թե՛ կղերական մոտ և թե՛ թերթերում Մելիք-Անդրեասյանը լսում է անավեր ստեր, հերցուրանքներ, ֆանտաստիկ, լիախ մեղադրանքներ Սովետական իշխանութեան հասցեին, սկսում է խիստապես դալ, ըմբռնել «խորագույն տարրերութեանը» կապիտալիզմի և սոցիալիզմի միջև: Թե՛ թե՛ հանալով իրեն տանջող մղձափանջից, խորապես հիասթափվելով իր «տարիների երազած գեմոկրատիայից», նա ընդունում է հաստատ որոշում. «Ես պետք է վերադառնամ, պետք է անպայման վերադառնամ, ես չեմ կարող բաժանել ինձ մարդկութեան լավագույն մասից, չեմ կարող բաժանվել այն կուլտուրայից, որ ամբողջովին հագեցած է բարձր գա-

դախարականությամբ: Եվ նա վերադառնում է ու հրկիզում իր օրագրերը, կրակին հանձնելով հնի հետ իրեն կապող բոլոր կապերը:

«Հրկիզված թղթեր» վիպակը Թոթովենցի ուժեղ գրվածքներից չէ, նրանում կան թուլլ հատվածներ, բալորովին ավելորդ է պրոֆեսորի կնոջ և ուսանող Վահրամի սիրտ պատմությունը, սակայն, իր բոլոր թերություններով հանդերձ, այն գեղարվեստական ստեղծագործություն է և ոչ թե «պատմական տրակտատ», ինչպես փորձել են ներկայացնել որոշ քննադատներ: Ուշագրավ է, որ նույնիսկ այդ ոչ օրյեկտիվ քննադատությունն էլ ստիպված է խոստովանել, թե՛ «նկարագրությունները տեղ-տեղ բավական հաջողված է, երբեմն կարելի է հանդիպել հոգևրանական նուրբ դիտողությունների, որոշ պատկերներ արված են պարզ ու հստակ գույներով»¹: Վիպակում հեղինակը առանձնապես վարպետորեն է դրսևորել գլխավոր հերոսի հոգեկան ապրումները արտասահմանում, հմուտ գրչով է նկարագրել նրա ճանապարհորդությունը, փարիզյան կյանքը:

Վիպակի հիմնական արժանիքն այն է, որ հեղինակը գեղարվեստական համոզիչ ձևով, վիպական գործողությունների մեջ դրսևորել է հնից եկած և հնին կառչած մտավորականի հոգեկան հեղաշրջման պրոցեսը, որը կատարվում է ոչ մի-

¹ «Խորհ. Հայաստան», 1935, № 59:

անգամից, այլ դժվարութեամբ, խոր ապրումներից ու մտարումներից հետո, և որին մեծապես նպաստում է արտասահմանյան, մասնավորապես միշտ փառարանված «ազատ» Եվրոպայի կյանքին մոտիկից ծանոթանալը:

Սովետական թեմատիկայով դրված ստեղծագործություններում առհասարակ հաստատելով նորի, առաջավորի անվերապահ հաղթանակը, այլ կերպ ասած՝ հավատարիմ մնալով պատմական ճշմարտութեանը, Վ. Թոթովենցը միաժամանակ գեղարվեստական խոսքի ուժով բացահայտում ու մերկացնում է հնի մնացուկները կենցաղում ու մարդկանց գիտակցութեան մեջ, ծաղրում է այն ամենը, ինչ կաշկանդում, կասեցնում է նորի առաջընթացը: Այդ խմաստով աչքի են ընկնում նրա մի շարք ֆելիետոնները, երգիծական պատմվածքներն ու պիեսները: Ինչպես և պետք էր սպասել, երգիծական այդ ստեղծագործություններում ևս Թոթովենցը մերթ գործադրում է երգիծանքի սուր զենքը, երբ խոսքը վերաբերում է կապիտալիզմի մնացուկներին, հնից եկած առանձին վնասակար, արատավոր երևույթներին, որոնք առավել կենտունակ էին 20-ական թվականներին, մերթ դիմում է կրթիչ հումորին, երբ անդրադառնում է սովորական, առօրյա, հեշտութեամբ վերացվող թերություններին: «Կրթիչ» հումորի ցայտուն օրինակ է նրա ֆելիետոնների այն շար-

Քը, որ լույս է տեսել պարբերական մամուլում¹:
Երգիծական այդ մանրապատում «օրագրություն-
ների» մեջ Վ. Թոթովկենցը արծարծում է «օրվա
չարիքային», ամենահասարակ «մանրուքների»
հետ կապված հարցերը, քննադատության սլաքն
ուղղելով առօրյալի թերությունների վերացման
նպատակին:

Վ. Թոթովկենցի ծագրի բնույթը արմատապես
փոխվում է, երբ նա անդրադառնում է իրենց
գարն ապրած երևույթներին ու թշնամական տար-
րերին, որոնք, իրականության մեջ արմատներ
չունենալով հանդերձ, քարշ են տալիս իրենց գո-
յությունը՝ որպես անցյալի վերասյուրահներ: Դա
այն ծագրն է, որը Գերցենի բնորոշմամբ հանդի-
սանում է «ամենազորեղ գենքերից մեկը այն
ամենի դեմ, ինչ որ աչրել է իր գարը և դեռ
շարունակում է իր դոյությունը քարշ տալ...»²:

Այդ խարազանող ծագրն է հնչում Վ. Թոթո-
վկենցի մի շարք ֆելիետոններում, «Սեղրոսը»,
«Սրիկան», «Կավը չի փոխվում» պատմվածքնե-
րում, մի քանի պիեսներում:

«Մի տիպ», «Մի ալլ տիպ» և մյուս ֆելիե-
տոնների մեջ սպանիչ է ծագրը՝ ուղղված հանր-
օգուտ աշխատանքից խուսափող, քծնող, ստորա-
քարշ, կեղծ մարդկանց դեմ: Երկրորդի մեջ ծագր-

¹ «Բանվորական երկան», 1933, № 5:

² А. И. Герцен, Полн. собр. соч. (под ред. Лем-
ке), Т. 9, стр. 118.

ված կերպարը իր էությամբ սուցիալապես խորթ մարդն է: Նա երազում անդամ չի տեսել Ամերիկան, բացարձակորեն ոչ մի գաղափար չունի ահասարակ տեխնիկայի ու գիտության մասին, սակայն աջ ու ձախ գովասանքներ է շտապում ամերիկյան տեխնիկայի հասցեին: Իր կույր գովեստներով ու ստորաքարշությամբ նա տնտես է հասնում, որ պատմում է այսպիսի հեքիաթներ. Ամերիկայում մարդիկ բոլորովին էլ կարիք չունեն ֆիզիկական որևէ շարժում կատարելու՝ էլեկտրական լույսը վառելու կամ մտրելու համար: Բավական է, որ նրանք մտքում ցանկություն հայտնեն, և լույսն ինքնիրեն կբառվի կամ կմարի... Իսկ երթևեկության ժամանակ ոչ թե մարդիկ են շարժվում, այլ փողոցներն են նրանց տեղափոխում՝ կանգնիր մայթի վրա և նա քեզ կտանի ուր որ ցանկանաս...

Ինչպես տեսնում ենք, պրոզը երևույթի ցուցադրման մեջ չափազանցության է հասնում, սակայն այդ չափազանցությունը՝ երգիծանքին հատուկ արտահայտչաձևը, ուղղված է երևույթը մինչև խորքը ծաղրի ենթարկելու նպատակին:

Սկզբոք՝ համանուն շատովածքի հերոսը, հնից եկած, հնում էլ անպտուղ, դատարկ վեճերի մեջ մարդված և վերադաստիարակության մասին ամենևին չմտածող դատարկապորտ է: Կոնկրետ

արարքների շրջանակում ցուցադրելով նրա այդ հատկությունը, հեղինակը բնութագրում է. «Սեղրոսը վիճարանոյ է արհեստով, ծագումով և հարմարություններով: Նա չի խոսում, վիճում է, նա չի պատասխանում կամ բացատրում, հակաճանաչում է»¹: Խուսափելով հանրագուտ աշխատանքից, Սեղրոսը մասնակցում է տեղի ունեցող բոլոր հավաքույթներին ու դասախոսություններին միայն շաղակրասելու ու հակաճառելու համար, այդ նպատակին ծառայեցնելով տարիներ շարունակ մամուլի էջերից իր հանած տեղեկություններն ու թվական տվյալները, որոնք բացարձակապես ոչ մի հարցի լուսարանման չեն օժանդակում: Հոգեպես աղքատ, ժամավաճառությամբ միայն զբաղվող, ուրիշներին խրատելու մարմաջով տարված Սեղրոսը և նմանները չեն արդարացնում հասարակության մեջ իրենց գոյության իրավունքը, և զրոյը անողորմաբար դատապարտում է մարգկալին այդ «տիպը»:

Վ. Թոթովենցը անխնա քննադատում է 20-ական թվականներին շատ ավելի կենսունակ այն «տիպերին», որոնք, իրենց գուշնը, փոխելով սոցիալում էին ամենոր, նույնիսկ պարտիայի շարքերը, և ամեն կերպ աշխատում վնասել սոցիալիզմի կառուցմանը: Դրանցից է Արարատ Դուլյանը՝ «Արիկան» պատմվածքի հերոսը: Նա ձևա-

¹ Վ. Թոթովենց, Սեղրոսը, 1924, Երևան:

նուս է ակտիվիստ, նոր իրավակարգի հասցեին
 գովասանքներ է շուսլում և սլղ ճանապարհով
 առաջ քաշվում: Ճիշտ է, նրա կերպարը գրողի
 գրչի տակ չի ստացել հողերանական խոր բնու-
 թագիր, պակաս համոզիչ է այն, որ Ղուլյանին
 հաշոդվում է, գրեթե սուանց դժվարության, լինել
 ցանկացած վայրում (ժողովներ, գիտպուտներ,
 պրոֆմիութենական հիմնարկներ), սակայն, գրողի
 «տեղեկեցուլ»՝ նա մեկն է այն թշնամական տար-
 բերից, որոնք, փոխելով պայքարի ձևերը, շարու-
 նակում են գրադվել վնասարարությամբ և ուրիշ
 ստոր գործերով:

Հակահասարակական արարքների գեմ մղվող
 պայքարի հարցն է առաջ քաշված Վ. Թոթովեն-
 ցի «Կոմսոմոլ Կարոլի արկածներից» վիպակում¹,
 իսկ «Մոխրակուլտը», «Նրկու սուր» պիեսներում
 շոշափված են ընտանեկան-բարոյական պրոբլեմ-
 ներ:

* * *

Վ. Թոթովենցի ստեղծագործության մեջ լայն
 տեղ է գրավում պատմա-ոևուլուցիոն թեման: Իր
 երկերում նա անդրադառնում է ներքին ու ար-
 տաքին թշնամիների գեմ և նոր կյանքի համար
 ժողովրդական գանգվածների մղած հերոսամար-
 տերին, ցուցադրում է ոևուլուցիակի պատմա-
 կան հաղթանակի ընթացքը: Ալղ թեմային են

¹ «Ափանդարդ», 1927:

Եվիրված «Հրդեհ» պիեսը, «Բարո» եռահատոր վեպը, «Գյոււմրի—Նյու-Յորք», «Պերսի Սալվադոր» վիպակները և ուրիշ գործեր:

«Հրդեհ» պիեսը սովետահայ դրամատուրգիայի առաջնեկներից մեկն է: Հեղինակը ցուցադրում է Հոկտեմբերյան սևույուցիայի առաջին իսկ օրը տեղի ունեցած մի հերոսական դրվագ: Պիեսի փոքր ծավալը (մեկ գործողություն՝ երեք պատկերով) հեղինակին հնարավորություն չի տվել ներկայացնել մեծ մասշտաբի գործողություններ, մասսայական տեսարաններ, բազմակողմանիորեն բնութագրել գործող անձանց: Սակայն, անհատական ինքնատիպ և ցայտուն գծեր չունենալով հանդերձ, սևույուցիայի գործին մինչև վերջը նվիրված, հաղթանակին վստահ և դժվարությունները հաղթահարելու գիտակցությամբ սողորված կերպարներ են Անդրեյը, Վասիլին, Մարիանան՝ պիեսի երեք հիմնական գործող անձերը: Նրանք անձնվիրաբար կալում են բարիկազներում, որպիսզի, ինչպես ասում է ծեր բանվոր Վասիլին, «փոխվի, իսկուպես փոխվի աշխարհը» և դառնա «փառավոր վայր աչրեյու համար»: Պիեսի պաթոսը հավատն է սոցիալիստական սևույուցիայի հանդեպ, որի հաղթանակի շնորհիվ, ինչպես ասում է գինվոր Անդրեյը՝ «Հինը վերջացավ, հինը անդարձ գնաց, սկսվում է սոցիալիզմի կառուցման փառահեղ աշխատանքը»:

Վ. Թոթովենցի «Պերսի Սալվադոր» և «Գյոււմրի—Նյու-Յորք» (գրել է Ն. Չուբարի^Յ հետ միասին)

արկածայինն վիպակները ժամանակին գրավել են ընթերցողների ուշադրութլւոնը, վերջինը նույնիսկ գնահատվել է որպէս մի ստեղծագործութլւոն, որը «շեղվում է կլասիկ վեպից՝ մտնելով մի նոր ժանրի սահմանը, որտեղ բնկտարխատիկայի, Ֆելիեաոնի և ակնարկի տարրերը զուգորդվում են և կազմում գեղարվեստական երկի յուրահատուկ տեսակը»¹: Այդ վիպակները սովետահայ արկածային գրականութլւան առաջին փորձերից են և ընթերցվում են հետաքրքրութլւամբ:

«Գլումբի — Նյու-Յորքը» հեղինակներն առկայ են «Արկածային վեպ երիտասարդ կոմունիստի կյանքից»²: Վիպակի առաջին մասում պատկերվում է Հովհաննէս (Օնիկ) Գաղանջյանի արկածներով լի կյանքը, ամելի ճիշտ՝ մանկութլւոնն ու պատանեկութլւոնը (երկրորդ մասը, որքան մեզ հայտնի է, չի հրատարակվել): Անապատան Օնիկը ապրում է «Վարդան գորտավար» գրահագնացքում՝ խոհարարի մոտ: Ճարպիկ և լարախաղացի վիրատուզ հմտութլւոն տնեցող պատանին վայելում է գինվորների համակրանքը և նրանց կողմից ստանում Մալթո-Մորթալե (Մահվան օղակ) մականունը: Նա հմուտ արախատի պէս կարողանում է նմանվել դաշնակցական սպա Ալիխանյանին, կրկնել նրա շարժումները և գրանով ծիծաղեցնել բոլորին: Սպան ամեն

¹ «Ավանդարդ», 1930, № 115:

² «Ավանդարդ», 1929, № 43:

կերպ ձգտում է վնասել նրան, մեղադրում է իր անբարեկամ գործերն զոգանալու մեջ և բանտարկում: Սակայն ռեուլյուցիոներների օգնութեամբ Սալթոն պահպանում է իր դոյութեանը՝ բախտ է ունենում երկար թափառումներից հետո նորից վերադառնալ զրահադնայք և մասնակցել մալիսյան ապրատամբութեանը՝ իբրև կարմիր գլարդիական: Ապրատամբութեան ժամանակավոր պարտութեանից հետո Սալթոն անհետանում է: Այստեղ ընդհատվում է գրվածքի առաջին մասը: Հեղինակը նրան հանդիպում է Փարիզում, ռեուլյուցիոն ցուցարարների շարքում: Այստեղ էլ նա անում է իր կյանքի պատմութեանը:

Վիպակում կան ժամանակի մի քանի հաջողված նկարագրութեաններ, մերկայցված են դաշնակցական մտադրիստների խժգժութեանները:

Գրքի հիմնական թերութեանն այն է, որ հեղինակները պատշաճ չափով չեն խորացրել կերպարների գեղարվեստական բնութագրութեանը, խոր չեն բացահայտել Սալթոնի ներաշխարհը, աշխույժ ու հետաքրքրաշարժ պատմութեանների առատութեան մեջ սավերել են կյանքի իրական պատկերները:

Անգրադաճնալով իր երկրորդ՝ «Պերսի Սալվադոր» արկածային վիպակին, Վ. Թոթովենցը գրել է. «Ես կաշխատեմ նկարագրել Պերսի Սալվադորի կյանքն այնպես, ինչպես կա, առանց որևէ

ավելորդ գունազարդումների, որովհետև նրա կյանքը արդեն խոչ հարուստ է վառ գույներով: Պերսի Սալվադորի պատմությունը կարմիր գծից դուրս գանձած պրոչևաարական երիտասարդության սլայքաբի պատմությունն է՝: Ինչպես տեսնում ենք, գրողն իր առաջ գրել է միանգամայն ակառույտ և կարեւոր խնդիր: Նա իրոք փորձել է ցույց տալ, թե ինչպես Սալվադորը, մասնակ հասակից կորցնելով իր ծնողների, գառնում է թափառաշրջիկ, անչափահաս բանվոր, առաջին համաշխարհային պատերազմի զինվոր, կյանքի բովի մեջ կոփվում է, դարգանում: Որպես հասուն ռեպուբլիկներ, նա մարտընչում է հանուն Հոկտեմբերյան ռեպուբլիկայի նվաճումների, ընդգեւմ Սովետական իշխանության ներքին թշնամիների և օտարերկրյա ինտերվենտների: Սալվադորին մենք տեսնում ենք մի քանի կոնկրետ գործողությունների մեջ, ուր և գրեւորվում են նրա ատելությունը կապիտալիստական աշխարհի և թալանչիական պատերազմի նկատմամբ, նվիրվածությունը սոցիալիստական ռեպուբլիկայի մեծ գործին: Դժբախտաբար Թոթովենցը հարկ եղած չափով չի մշակել վիպակի բոլոր մանրամասները, տեղ-տեղ շեղվել է ռեպուբլիկան արվեստի սկզբունքներից, ստեղծել է անտեղի խորհրդավոր մոմենտներ, մտցրել է ավելորդ արկածայնության տարրեր:

Վ. Թոթովենցը իր հոդվածներից մեկում կեն-

1 «Սովանդարդ», 1930, № 131:

ստիան խնդիր է համարում գեղարվեստորեն արտացոլել ժողովուրդների բարեկամաթյունը և ստեղծել «Անդրկովկասյան աշխատավորութեան մարտնչումների գլուցազներգությունը»¹։ Եվ ինքն առաջիններից է, որ ձեռնամուխ է լինում այդ թեմայի գեղարվեստական մշակմանը, ստեղծելով Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի սկզբունքներին նվիրված «Բաքու» պատմա-սևուցիկն վեպը։

Պետք է հիշել, որ սովետական ժողովրդի պատմա-սևուցիկն հերոսական անցյալի, մեր երկրի բազմազգ պրոլետարիատի սևուցիկն սլաքարի դրվագների գեղարվեստական արտացոլումը եղել է և մնում է մեր գրականութեան առաջնահերթ խնդիրներից մեկը։ Հայտնի է, թե սոցիալիստական սեպտիմի հիմնադիր Մաքսիմ Գորկին որքան կարևոր է համարել այդ կենսական թեմատիկայի բացահայտումը, անցյալի լավագույն կողմերը, ժողովրդի հերոսական փորձը նոր կյանքի կառուցմանն ի սպաս դնելու, երևտասարգութեանը իր նախահայրերի կյանքին ու սլաքարին ծանոթացնելու կարևորութեանը։ Հայտնի է նաև, որ այդ շնորհակալ գործին ձեռնամուխ են եղել սովետական այնպիսի ականավոր գրողներ, ինչպիսիք են Դ. Ֆուրմանովը («Չապահ»), Ա. Ֆադեևը («Ջախջախում»), Մ. Շոլոխովը («Սաղաղ Դոն»), Ն. Օս-

¹ «Սորհրդային Հայաստան», 1927, № 63։

տրովոկինն («Ինչպէս էր կոփվում պողպատը») և շատ տրիշներ: Սովետահայ գրողները ևս իրենց լուսման են մտծել պատմա-ուսուցչութիւնն անցյալի թեման մշակելու շնորհակալ գործում, և նրանց թըվում առաջիններէց մեկն է Վահան Թոթովենցը: Հենց այս իմաստով էլ առանձնակի նշանակութիւն ունի «Բաքու» եռահատոր վեպը, որի առաջին հատորը լույս է տեսել դեռևս 1930 թվականին:

Թոթովենցի վեպը քննադատութեան մեջ առաջ է բերել մտքերի աշխույժ փոխանակութիւն, նրա մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ, արվել են ինչպէս լուրջ, կարևոր, այնպէս էլ անհամոզիչ ու կանխակալ դիտողութիւններ, իսկ վեպն ամբողջութեան մեջ գնահատվել է որպէս դրական երևույթ, «նոր նվաճում և շրջադարձային կէտ»¹ հեղինակի համար:

«Բաքու» վեպը շոշափված պրոբլեմների բազմազանութեամբ ու հարստութեամբ, իրոք, հեղինակի նվաճումն է: Հենց սկզբից պետք է ասել, որ վեպի վրա զգալի է շտապողականութեան կնիքը, հավասար ուժով չեն գրված բոլոր մասերը, նրանում առկա են ուսուցիչական վեպին ոչ բնորոշ արկածայնութեան տարրեր, առանձին կերպարներ սխեմատիկ են ու անզույն: Այս թերութիւնները, սակայն, կտին պլանն են մղվում վեպի մի շարք արժանիքների պատճառով: Որո՞նք են դրանք:

¹ «Գրական թերթ», 1932, № 27:

Վեպուժմ հեղինակի մտահղացումը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև դասակարգային անհաշտ հակամարտությունը և պայքարը ցուցադրելն է, աշխատանքի ու կապիտալի, «մրտախրճիթների» ու «ջահագարդ գահլիճների» միջև եղած հակադրության գեղարվեստական արտացոլումը: Վեպն ընդգրկում է Բաքվում տեղի ունեցած բանվորական շարժումների ընթացքը՝ մինչև 1905 թվականի ապրիլյան հայանի գեպքերը, սատի, բնական է, որ հեղինակը չէր կարող ցույց տալ այդ պայքարի մեջ ծնված կոնֆլիկտի լուծումը՝ հօգուտ բանվոր դասակարգի: Բայց գեպքերի զարգացման ընթացքը տանում է դեպի հարցի այդ միակ ճիշտ լուծումը: Պատահական չէ, որ հեղինակն առաջին հերթին ցույց է տալիս պրոլետարիատի գիտակցության աստիճանական զարգացումը, ռուլյուցիոն պայքարի հզոր, անհաղթահարելի ուժ դառնալու ընթացքը, ըստ որում այդ ընթացքը կատարվում է բարդ ու գժվարին պայմաններում, բազում փորձությունների բովում: Այդ ընթացքն են մարմնավորում իրենց մեջ բանվոր դասակարգի ներկայացուցիչները հանդիսացող կերպարները, սուսնձնապես Վիրաբ Ալիբեգյանը և նրա որդի Լեոնը:

Վիրաբն այն շատերից մեկն է, որ «կյանքի մտրակից քշված, կարիքի խորշակից հալածված» Բաքու է եկել աշխատելու և ապրելու, բայց, խտացնելով պրոլետարիատի շարքերը, փաստորեն ջրից ընկել է ջրհեղեղ: Իր բոլոր բախտակիցների ու

աշխատանքի ընկերների հետ միասին, նա ապրում է դառն աղքատութեան, մշտական կարիքի, կեղտի ու մրի մեջ՝ չնայած այն բանին, որ բանվորների փորած նավթահորերը սակի են շատրվանում: Վեպի սկզբնամասերում Թոթովենցը անալիտատական դուշներով պատկերում է բանվորների կյանքի ու աշխատանքի այն ծանր պայմանները, որոնք նրանց, այդ թվում և Վիրաբի, հոգում առաջ են բերում ներքին բուռն ցատում սոցիալական անարդարությունների հանդեպ: Այդ տարերային խուլ բողոքը գնալով ուժեղանում է և վերածվում դասակարգային պայքարի գիտակցութեան, երբ Ռուսաստանից եկած «Երակյալ բանվոր», պրոֆեսիոնալ սևույտցիտներ Վասիլի Պրսկոֆիչը Վիրաբի հետ խոսում է այնպիսի կենտանի հարցերի մասին, ինչպես «աշխատավարձի հովելում, բանվորական օրվա կրթւթւթում, կազմակերպութեան, դասակարգ, հեղափոխութեան» և, որ կարեւորն է, նրան ներգրավում է ընդհատակյա ժողովների, սևույտցիտն դասախոսութեանների շրջանակը, ուր Վիրաբը իրեն հուզող հարցերի պատասխանն է լսում ընդհանրական պարտիայի Բաքվի Կոմիտեի ղեկավար դործիչներից, մասնավորապես Մարանյանից: Ակախորեն մասնակցելով մայիամեկյան ցույցերին, դործագուշներին, ընդհատակյա աշխատանքներին, Վիրաբը քաղ առ քաղ հասունանում է, դառնում անձնվիր, կայուն սևույտցիտներ, որին չեն ընկճում ո՛չ ժամանակավոր անհաջողութեանները, ո՛չ անտեսական

ծանր պայմանները, ո՛չ բանտն ու աքսորը: Վիրաբի
այդ դարգացումը վեպում պատկերված է գեղար-
վեստական համոզությամբ և ընդհանրացման
ուժով: Նույնը պետք է ասել նաև Լեոնի մասին:
Աչք բացելով բանվորական միջավայրում, Լեոնը
մանկության տարիներից կրում է կյանքի դաճու-
թյունները, դպրոցը կիսատ թողած՝ ստիպված է
լինում մտնել «կյանքի համալսարանը», դրադվում
է բանվորությամբ, ապա փոխարինում է աքսոր-
ված հորը՝ գաղանի տպարանում, դաճալով հոր
ուղիով ընթացող պրոֆեսիոնալ ուսուցիչներ:

Թե՛ Վիրաբը և թե՛ Լեոնը, լինելով բանվորու-
թյան տիպական ներկայացուցիչները, միաժամանակ
ունեն իրենց բնավորության անհատական գծերը,
հանդես են գալիս և՛ ուսուցիչն պաշարի հոր-
ձանուտում, և՛ ընտանեկան կենցաղի միջավայրում:
Վիրաբի ընտանիքը մի օղակն է բանվորական ըն-
տանիքների այն մեծ շղթայի, որ ձգվում էր Բալա-
խանիից Մաբունչի, Սև քաղաքից Բիրի էյրաթ, ապա
և առհասարակ դեպի մյուս բանվորաշատ քաղաք-
ները: Այդ ընտանիքում իշխում է փոխադարձ սերը,
հոգատարությունը միմյանց նկատմամբ, համերաշ-
խությունը անտեսական ու հասարակական բոլոր
հարցերում, անբասիր բարոյականությունը: Վիրաբի
ընտանիքի պատմությունը վեպի ամենահուզիչ
հատվածներից է, իսկ այդ ընտանիքի մայրը՝
Մարթան հաջողված կերպարներից մեկը: Մարթայի
վիճակը ինքնին մի հուզիչ սղրերդություն է. շատ

հարցեր չըմբռնելով հանդերձ, նա մայրական բնագ-
րով և իր կյանքի փորձով պիտի է ամուսնու ու արդու
գործերի վիհուժյունը, անարատնշ տանում է բո-
լոր դժվարությունները, անշատման դառնություն-
ները, իր սրտում միահյուսելով խոր հոգատարու-
թյունը հարազատների ճակատագրի մասին և հա-
վատը նրանց հաղթանակի նկատմամբ:

Վերաբի և Լևոնի, իբրև սեռյուցիոն պալքարի
մարտիկների, զարգացումը վիպում ցույց է տըր-
վում հասարակական կյանքի լայն ֆոնի վրա,
պրոլետարիատի՝ որպես իր իրավունքների համար
պալքարող դասակարգի հասունացման պրոցեսի
պատկերման հետ ներդաշնակորին միահյուսված:
Մի շարք մասսայական տեսարանների, ցույցերի ու
գործադուլների նկարագրությամբ վիպասանը ցույց
է տալիս, թե ինչպես բանվորների կրքեմնի լուս
բողոքը աստիճանաբար վերածվում է նախ տարե-
րային, ապա կադմակերպված սեռյուցիոն պալքա-
րի, 1905 թվականին հասնելով զինված ընդհար-
ման և այդ գործում ղեկավար դեր է կատարում
պրոլետարիատի առաջավոր շոկառը՝ բոլշևիկյան
պարտիան, որի ներկայացուցիչներն են վիպում
Մարանյանը, Լարինը, Բադարաձեն, Վասիլի Պրո-
կոֆիչը, Ալիևը, Բոլովաձեն, Բուդաղյանը, Ս.սլան-
բեգովը և ուրիշներ: Վերջիններս անձնվիրաբար
ղեկավարում են բանվորական շարժումները, կապ-
ված են մասսաների հետ, նրանց կողմնորոշում են
սեռյուցիոն պալքարի նպատակին: Այդ կերպարնե-

րից չուրաքանչյուրը ունի իր տեղն ու դերը ծա-
 վալվող գեպքերի ընդհանուր շղթայի մեջ՝ երբ
 հարցին նայում ենք կառուցվածքի տեսակետից:
 Յավալի է միայն, որ հեղինակը պատշաճ չափով
 չի կարողացել անհատականացնել նրանց. գրեթե
 չի անդրադարձել նրանց անձնական կյանքին:
 Իբրև գեղարվեստական կերպարներ լիարյուն չլի-
 նելով հանդերձ, նրանք մնում են հիշողության
 մեջ՝ որպես պրոլետարական ազատագրական պայ-
 քարի խիզախ, հետևողական, կայուն ղեկավարներ,
 Բաքվի բազմազգ աշխատավորության կենսական
 շահերի պաշտպաններ:

Առհասարակ վեպի միջով կարմիր թելի նման
 անցնում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի,
 բազմազգ պրոլետարիատի կղբայրական համերաշ-
 խության դադափարը: Վիպասանը մի շարք բնո-
 ռոշ օրինակներով վերարտադրում է ուլս, աղբրե-
 ջանցի, վրացի, հայ, լեզգի, պարսիկ բանվորների
 ուսույցիտն մարտական եղբայրությունը և բարե-
 կամությունը: Հիշենք Վասիլի Պրոկոֆիչի, Վիրաբի,
 Քյարիմի, Բոլովածեի, Ալիևի, Սահակ Իշխանյանի
 փոխհարաբերությունները, փոխադարձ հարգանքը
 և օգնությունը միմյանց՝ դժվարին պայմաններում,
 նրանց հասարակական-ուսույցիտն համերաշխ գոր-
 ծունեությունը: Վիպասանը ճիշտ կերպով ծանրա-
 ցել է ազգային հարցի լուսաբանման վրա, ցույց
 է տվել, որ զանազան ազգությունների պատկանող
 բանվորները միավորված են ճակատագրով, կեն-

ցաղով ու պալքարով», ապրում են «միևնույն կեցութեամբ, ճակատագրի միևնույն մարակի ուժգին հարվածների տակ» և նրանց ինտերնացիոնալ միասնութեւնը մի հզոր զենք է ցարիզմի ու բուրժուազիայի դեմ մղվող սեռայուցիւն պալքարում:

Նրանց սեռայուցիւն համերաշխութեւնը սարսափ է պատճառում ցարիզմին և նրա տեղական գործակալներին, որոնք ամեն կերպ աշխատում են թշնամանք սերմանել ժողովուրդների միջև: Այս տեսակետից բնորոշ է ցարի կողմից Քաջուսղարկված զեներալ-աղյուտանտի և նահանգապետ իշխանի զրույցի տեսարանը:

« — Կովկասը, բարեբախտաբար, — ասաց զեներալ-աղյուտանտը, — աղյությունների խառնարան է, կրոնով և լիզվով տարբեր. շատ հեշտութեամբ կարելի է նրանց զբաղեցնել՝ իրար դեմ կովի մղելով, զբաղեցնել այնպիսի կովով, որ նրանք խապառ մոռանան հեղափոխութեան մասին:

Նահանգապետ իշխանը միանգամայն համաձայն լինելով այդ քաղաքականութեանը՝ հայանեց, որ այդ ուղղութեամբ միջոցներ ձեռք առնված են արդեն»:

Գրքի տարբեր դրվագներում վիպասանը պատկերում է այդ «միջոցների» իրագործումը՝ հալապերբեշանական եղբայրասպան ընդհարումները: Այդպիսի ընդհարումների ցուցադրման ֆունի վրա հեղինակը ցայտուն է դարձրել բանվորութեան դասակարգային միասնութեան և անսպառ ուժի թեման:

«Բաքու» վեպում՝ Վ. Թովթովենցի հիմնական խնդիրը հանդիսացել է՝ «Մնդրկովկասյան աշխատավորութեան մարտնչումների գլուցադներգութեան» գեղարվեստական արտացոլումը: Սակայն սեռյուցիոն պաշքարի պատմական նշանակութեանը ըստ ամենալնի վեր հանելու համար հեղինակը չէր կարող չանդրադառնալ նաև հասարակական այն ուժերին, որոնց դեմ ուղղված էր պաշքարը: Եվ ինքնին հասկանալի է, որ վեպում դուգանեռարար նկարագրվում է նաև բուրժուական աշխարհը՝ իր մի քանի էական կողմերով: Քննադատութեան մեջ նկատվել է, թե սեպիզմի հզոր գեղագետ Շիրվանզադեից հետո, որը բացառիկ ուժով և արվեստով բացահայտել է Բաքվի բուրժուազիայի կյանքը, չափազանց դժվարին խնդիր էր նորից անդրադառնալ այդ կյանքին և նոր խոսք ասել: Թովթովենցը, անշուշտ, չի հասել Շիրվանզադեի դասական վարպետութեանը, բայց ճիշտ է նկատվել, որ նա թեմատիկ նորութեաններ է բերել: Իսկ առաջին հերթին վերաբերում է բանվոր դասակարգի կյանքի և պաշքարի լայնաշունչ պատկերմանը: Իսկ վերաբերում է նաև բուրժուազիայի դեմքը նկարագրող մի քանի նոր կողմերին՝ մասնավորապես կապիտալիստների դասակարգային շահերի միասնութեանը, ցարիզմի հետ ունեցած սերտ կապը, նացիոնալիստական պարտիաների ծնողն ու խնամակալը լինելու փաստը գեղարվեստորեն բացահայտելուն:

Վեպում պատկերվում է, թե ինչպես Բաքվի կապիտալիստները, անկախ ազգությունից, թեև կատաղի կերպով մրցում են հանուն մերի շահի, բայց միասնական են պրոլետարիատի դեմ մղվող պայքարում: Միրիմանովը, Մահմուդ - Ջադեն և մյուսները, ցարիզմի հետ «սրբազան դաշինք» կընքած, թշնամանք են սերմանում աշխատավոր ժողովուրդների մեջ, ճգնում են բոլոր միջոցներով՝ կաշառքով, խաբեությամբ, զինվորների սվինների օգնությամբ կասեցնել սևույուցիան:

Բուրժուազիայի հավատարիմ սպասախորհրդի վերումն են հանդես գալիս նաև ազգայնական հոսանքների ներկայացուցիչները: Այս թեման ևս մեծ տեղ է գրավում վեպում:

Դաշնակցության պարտիայի ներկայացուցիչներն են վեպում հանդես եկող Սվինյանը, Արալոն, Մկոն, Պողպատը: Եթե վերջինները «ազգի համար» դրամ են կորզում տևորի, ահաբեկումների միջոցով, այլ դրամով խելահեղ օրգիաներ կազմակերպում, ապա Սվինյանը հանդես է գալիս որպես «գաղափարախոս» և «կուլտուրական» դրամաշորթ: Բայց բոլորն էլ ճամբարակելով «հայրենիքի փրկության», «ազատության» մասին, փաստորեն պարում են բուրժուազիայի նվազի տակ, կատարում նրա կամքը և ապրում նրա տված փշրանքներով: Սրանցից առանձնապես հաջող է գծված Սվետիա Սվինյանի կերպարը:

Նրա արտաքին տեսքն անգամ, հեղինակի

բնութագրութեամբ՝ արտահայտում է «ցեղի տա-
ռապանքը», «Ավետիա Սվինչանն ուներ մի այծյա-
մային մորուք, սև և դեպի վերը սանրած մազեր,
թուխ մորթ, միջահասակ էր, քալում էր մանր
և արագ, քալելիս միայն նայում էր դեմնին և
երկնքին. նրան կարելի էր տեսնել կամ կոացած
գլխով, կամ երկնքին հառած երագուն աչքերով.
ձեռքին ուներ մի արծաթակոթ գավաղան»։ Վի-
պասանը համառոտակի պատմում է նրա անցյալը,
բացատրելով նրա բնավորութեան նախադրյալնե-
րը. գեռես էջմիածնում ուսուցիչ եղած ժամանակ
Սվինչանը սովորում է քծնել, հարմարվել սլայ-
մաններին, ամեն տարեմուտի ձոն նվիրել «հայոց
հայրապետին»։ Գաղթականութեան առթիվ նա
գրում է երկեր, որոնք «գրական սոմանաիկ զըպ-
րոցի սակզծած պատկերների տաղակալի կրկնու-
թյուններ էին, ողողված արցունքով, արյունահեղ
գիշերների նկարագրա թյուններով», թունոտ հա-
ցիոնալիզմով, փառաբանում է գաշնակցութեան
«հերոսներին»։ Բնականորեն նա «աչքի է ընկ-
նում», ազատվում ուսուցչութունից և դառնում
գաշնակցական «գործիչ», մանավանդ որ զլոդ լի-
նելուց ավելի շաղակրատ հռետորի ձիրքով էր օժ-
տրված։ «Վշտակիրն հայոց» գրական կեղծանունը
կրող Սվինչանը գաշնակցութեան կողմից ուղարկ-
վում է Բաքու։ Այնուհետև թոթովինցը նկարա-
գրում է նրա «գործունեութեանը», ցույց տալով,
որ նա ալցելում է Բաքվի հարուստներին և գրամ

կորդելու նպատակով գիտում ամեն տեսակ միջոցներին, մի տեղ իրեն ներկայացնում է որպես մի «արժիւ» , որի «ձաղերը հափշտակել են զազանները», մի այլ տեղում հաճոյախոսում է, զովաբանում միլիոնատերին: Բնորոշ են նրա հանդիպումները Միրիմանովի կնոջ և նախկին բանվոր ու պատահարար հարատայած Բարխուդարովի հետ: Առաջին զեպքում «Ներսը» գրեկորում է իր Ֆրանգյուրությունն ու մտքի աղքատութիւնը, մյուս զեպքում՝ հաճոյախոսելու վարպետութիւնը:

«Բարք» վեպում կան նաև բուրժուական ընտանիքի այլանգակ բարքերի հաջող նկարագրութիւններ:

Վեպի սյուժեատալին գծերից մեկը հասարակ բանվորից կապիտալիստ դարձած Պլտար Բարխուդարովի կյանքի պատմութիւնն է: Վեպի սկզբում նա ևս Վիրաբի նման սովորական բանվոր է, նրա հարեանը: Ապա ժառանգելով իր հարազատի նալթահողերը և գրամը, միանգամից դառնում է միլիոնատեր: Այս կերպարով վիպասանը փորձել է ցուլց տալ կապիտալի ապականիչ ազդեցութիւնը մարդու հոգեբանութեան վրա:

Բուրժուական աշխարհի շատ ավելի բնորոշ ներկայացուցիչ է Սարգիս Թախալյանը, որը համեմատաբար քիչ է գործում վեպում, սակայն հանդես է գալիս զեպարվեստական հաջող նկարագրով: Նա ճանաչում է բուրժուական աշխարհի դաժան օրենքները և գրանց համեմատ էլ գործում է,

դառնալով նույն կյանքի հրամանատարներից մեկը: Նա կարճ ժամանակում դառնում է Բարխուդարովի գործերի կառավարիչը, կարողանում է բորսայում առաջ բերել ակցիաների կուրսի արհեստական անկում, մի սովորական խաղ, որից օգտվում է միայն ինքը: Այս և ուրիշ փաստեր ցուցաբերելուց հետո միանգամայն համոզիչ են հնչում հեղինակի բնութագրումները, թե «Թոփալյանի խորամանկություն և դրա հետ կապված շողոքորթություն առաջ ոչ ոք և ոչ ինչ չէր կարող գիմանալ», թե նրա համար «աշխարհի սրբություն սրբոցը փողն է»:

Բուրժուազիայի և պրոլետարիատի հակադրությունը ավելի ցայտուն է դառնում, երբ արձակագիրը անդրադառնում է հասարակական կյանքում և ընտանեկան հարցերում արդ երկու դասակարգերի ներկայացուցիչների փոխհարաբերություններին: Բանվոր Վիրաբի խորապես մարդկային ու անկեղծ զգացումների վրա կառուցված ընտանիքի հակադրությունն են Միրիմանովի ու Բարխուդարովի ընտանիքները, որոնք ներքուստ նեխում են անբարոյականությունից ու ապականված բարքերից: Այդ հակադրությունն է դրված Լևոնի և Նուշիկի սիրո դժբախտ պատմության հիմքում, պատմություն, որ վեպի սյուժետային գլխավոր դեմքից մեկն է: Նուշիկը Պետրոս Բարխուդարյանի դուստրն է, Լևոնի մանկություն և զարոցական ընկերուհին: Մեծացած կողք-կողքի,

Նրանք կապվում են ջերմ սիրով, բայց հոր հարը-
տանալուց հետո Նուշիկ Պետրովնան հեռանում է
Լեոնից, ամուսնանում Միրխմանովի տղայի հետ,
իսկ հուսախար Լեոնը գաղտնի տղարանում գրու-
նում է իր համար իսկական կյանքի ընկեր: Արաք-
սիայի և Լեոնի սերը ծնվում է համատեղ աշխա-
տանքի ու պայքարի մեջ. «Արաքսիան... ոչ մի-
այն իր սիրած աղջիկն էր, իր գիտակցական հա-
սուն սերը, այլև հեղափոխական ընկերը, անարև
նկուղի ընկերը, որին չէր կղծել ոչ մի փշուր հա-
րըստություն»: Նուշիկին, ընդհակառակը, կղծում է
հարստությունը, ցոփության մեջ նա կորցնում իր
հոգեկան հանդիստը, խորապես հիասթափվում է
ոչ միայն անբարոյական ամուսնուց, այլև իր հո-
րից և տահասարակ բուրժուական աշխարհից, երա-
զում է մանկության տարիների աղքատիկ, դառն,
բայց բարոյապես անաղարտ կյանքի մասին, այն
օրերի մասին, երբ՝ «Լեոնի սուղոցից հետո դուրս
էր վաղում՝ թխպոտ գիշերները գառնում էին
ատողազարդ, կապնւյտ, կապնւյտ խորությամբ,
շրջապատի մութը և կեղտը ոսկեզօծվում էին,
կարծես կես գիշերին ծովի գրկից բարձրանում էր
արևը և ամեն ինչ շողշողում էր բյուրավոր վառ
գույներով, կյանքը թվում էր երկա՞ր և գլուխա-
կան մի երգ, կախարդակա՞ն և անվերջ...»: Նուշի-
կի սրտի մի անկյունում միշտ ապրում էր Լեոնը:
Նրա հանդեպ տածած ջերմ սերը և հիասթափու-
թյունը իր շրջապատի հրեշավոր բարքերից Նու-

չիկին մղում են դեպի բանվորական միջավայրը, որ մարդիկ մաքատում էին հենց այդ հրեշտակոր բարքերը ծնող բարձրագիտյի դեմ: Թոթովենցը հոգեբանի հմտությամբ է դրսևորել Նուշիկի ծանր խոհերն ու զգացումները, մանավանդ Լեոնի դառն ապրումները, երբ Նուշիկը հրավիրում, բայց ներս չի թողնում իր ծննդյան տոնահանդեսին՝ ազքատ հագուստի պատրվակով: Ընդհանրապես վեպի սուանձին հատվածներ հուզիչ նովելների ապավորություն են թողնում (հիշենք Քյարիմի կնոջ սղերդական կյանքը, Մարթայի մահը, Պետերբուրգից վերադառնալուց հետո Նուշիկի առաջին հանդիպումը Լեոնի հետ, Քուչիշվիլու սպանությունը բանտում, Միրիմանովի տան թղթախաղը և այլն):

Ինչպես սակ ենք, «Բաքու» վեպը զերծ չէ թերություններից: Դրանցից առաջինն այն է, որ վեպի կամպոզիցյան խճուղիում է սյուժեն ծանրաբեռնող միջանկյալ գլուխներով, երբևէն վիպական գործողությունների գինամիկ զարգացմանը խանգարող հատվածներով (Բարխուդարովի արկածները գնչուհու հետ, Բաքվի քաղաքագլուխ Վոլչինի հետ կապված որոշ դեպքեր, վեպի վերջում մշուշապատ ձևով արված իշխանի սպանությունը և այլն): Երկրորդ հիմնական թերությունն այն է, որ մի շարք կերպարներ, ըստ որում ոչ երկրորդական, սխեմատիկ են, անարյուն, բնութագրված են ոչ թե իրենց կոնկրետ գործերով ու հոգեբանությամբ, այլ սոսկ հեղինակչին խոսքով: Հետո-

րական ոճը, տեղ-տեղ, փոխարինում է գեղարվես-
տական նկարադրություններին: Վիպում կան նաև
էժանազին արկածայնության տարրեր, որոշ հատ-
վածներ պարզապես անմշակ են: Այս թերու-
թյուններից հանդերձ, Վ. Թոթովինցի «Բա-
քուն» պատմա-սևույտցիոն արդիական թեմայով
վեպ ստեղծելու առաջին փորձերից մեկն է սովե-
տահայ գրականության մեջ և շատ կողմերով պահ-
պանում է իր թարմությունն ու հնչեղությունը:



3.

Վ. Թոթովենցը, անցյալի հերոսական ու լուսավոր էջերը վերհանելու հետ միասին, անխնա և խիզախորեն ձողկում է սեփականատիրական-բուրժուական հասարակության անարդար բարքերն ու օրենքները: Նրա քննադատական վերաբերմունքը այդ հասարակության նկատմամբ տառնձին պիղարվեստական ուժով է արտահայտվում «Մահվան բատալիոն», «Նոր Բյուզանդիոն» պիեսներում, «Նյու-Յորք» վիպակում, «Օգսին Սլյունի», «Հայ ավետարանականի քարոզը», «Պալքար», «Ժամանակակից հեքիաթ» և «Ամերիկա» ժողովածուի մեջ անդ դասժ մի շարք պատմվածքներում:

Իր բնույթով «Դոքտոր Բուրբոնյան» վիպի հետ առնչվող «Մահվան բատալիոն» մեկ դործողությամբ պիեսում Վ. Թոթովենցը ծայրում է ուսահայրենասիրությունը, վերացական, անհող հերոսությունը, բուրժուազիայի դաստիարակած երիտասարդության պատկերացումներն ու իդեալները այդ վեհ գաղափարների մասին: Թոթովենցը

մի կոնկրետ, բնորոշ օրինակով ու զավեշտական ձևով ներկայացնում է բուրժուական ընտանիքից սերված, «Թմբկա-հայրենասիրական» ոգով դաստիարակված երեք երիտասարդ զինվորականների միայն մեկ քայլը՝ հայրենիքի համար «անձնագոհություն» և «հերոսություն» ցուցաբերելու ուղղությամբ: Եվ նրան հաջողվում է ցույց տալ, որ պիեսի երեք զլխավոր գործող անձերը՝ Ժորժիկը, Նիկիտան և Գրիշկան, իրենց դասի մարդկանց հատկանշական մի քանի կողմերի մարմնացումն են: Առաջին խմբերիալիստական պատերազմի ժամանակ ազդմանակառ մեկնելուց նրանք խուսափել են կաշառքի ու խաբեբայության միջոցով: Հարուստ ծնողները նրանց դարձրել են այսպես կոչված «Մահվան բատալիոնի» զինվորներ, այսինքն՝ նրանց անունները մտցրել են զոհվածների ցուցակի մեջ: Հենց այդ քայլն էլ նրանք ներկայացնում են որպես մեծագույն սխրագործություն, նստած տաքուկ ու լուսավոր սրահում կազմում են արդ մեռյալ բատալիոնի առջագա «ահեղ ու հերոսական» մարտերի ծրագիրը, մեկը մյուսից բարձր դուռալով «քաջասրտության», «հերոսական կռահի», «չափից գուրս անհավատար» կոիվների ու «հաղթանակների» մասին:

Այդ հույն երեույթի մերկացմանը նվիրված ուշագրավ գործ է «Օգսեն Սլկունի» պատմվածքը¹:

¹ «Շեշա», 1923, № 2:

Այտակ հեղինակը գծագրում է մանուկ հասակից դաշնակցութեանը երկրպագող և ապա «աչքի ընկած» Օդսեն Տեղաշորյանի դիմանկարը: Օդսենը գեաևս երեխա ժամանակ մի առանձին հիացմունք է տածում գաշնակցական «հռչակված հերոսներին» նկատմամբ, սովորում է կեցցեհներ հռչակել ի պատիվ իր կառքերի՝ նուշնիակ աքաղաղների կոխը տեսնելիս: Հասկանալի է, որ մեծանալիս նա ամեն կերպ ձգտում է նմանվել նրանց, թողնում է «այծի սրածալը մորուք և երկար մազեր», ընդօրինակում է նրանց կեցվածքը, արտաքին ձևերը և այլն: Մակաչն գրանով չէ, որ «աչքի է ընկնում», այլ նրանով, որ ձևք է բերում «խմբապետների և արտասահմանյան գործիչների առջև ծնրադրութեան խմաստութեան», որի համար նկատվում է ջոջերի կողմից, սկսում է կրել «հեղափոխական» մականուն՝ Սկուսի: Եվ ահա նա ևս, Բուրբոնյանի նման, սկսում է երազել հայոց թագավոր դառնալու մասին, միայն նա ոչ թե «բանակ» է կազմում, այլ ամենից առաջ աշխատում է թագ ձևք բերել և... մի սաղավարտ է դողանում եկեղեցուց: Բայց առավել ծիծաղելին այն է, որ երբ նրան առաջարկում են կովի դուրս գալ և գրսևորել ապագա արքային վայել հերոսութեան, նա հրաժարվում է նուշնիակ զենք կրելուց այն պատճառաբանութեամբ, թե՛ «Ես նրանց ապտակով էլ կքշեմ»: Գերադասելով հոխորտալ հեռվից, Օդսենը պարզապես վեր է ընկնում տանը, լիովին արգարաց-

նկելով իր Տեղաշորյան խոստան արգանանը, գրու-
սեորելով «անդաշորային հայրենասիրություն»:

Պակաս սուր չէ ծագրը Վ. Թոթովենցի «Հայակե-
տարանականի քարոզը» պատմվածքում¹, որանդ
մի հոգևորականի աղոթքի ինքնատիպ վերադաս-
գրման միջոցով հեղինակը բնութագրում է նրա
սոցիալական էությունը: Այդ հոգևորական քարո-
զիչը իր աղոթքն ուղղում է որոշակի նպատակի:
«Ո՛վ տեր, — ասում է նա, — մենք կաղաչենք քեզմե
պահպանել մեր կյանքը՝ ապահովելով մի պաշտոն
Ամերիկյան կոմիտեի մեջ»: Նա փոստաբանում,
«աստվածային բարիք» է համարում ամերիկյան
հնոտիները, նեխած կաթը, փոսած ալյուրը: Գրողը
ծագրում է դաշնակցական տիրահաչակ հանրապե-
տության, աշխարհիկ ու հոգևոր սեակցիան տար-
բերի կրօնավածությունը շատերիկըս տերերից:

Հին աշխարհի խոցերն ու արատները բացա-
հայտելու տեսակետից գեղարվեստական լուրջ ար-
ժեք է ներկայացնում «Նոր Բյուզանդիոն» գրա-
ման², որը Թոթովենցի ամենահաջող գրամատի-
կական ստեղծագործությունն է:

¹ «Սորհրդային Հայաստան», 1923, № 11:

² Պիեան առաջին անգամ բեմադրվել է Փարիզում,
հայկական թատերախմբերի ուժերով, 1934 թվականի նո-
յեմբերի 19-ին: Բեմադրությունն ամփոփ աֆիշաներում
ասված է, թե ներկայացվելու է «Սորհրդային գրող, աս-
ղանդավոր Վահան Թոթովենցի «Նոր Բյուզանդիոն» պիե-

Հեղինակին հաջողվել է վերցնել պատկերվող միջավայրի՝ Պոլսի իրականությունից համար տխրահան կոնֆլիկտ:

Պիեսում բախվում են երկու ունևորներ՝ Չելերին և Իսխելը, սակայն այդ բախումը մի պրիզմա է, որի մեջ բեկված են կյանքի մի քանի հատկանշական կողմեր:

Առաջին իսկ պատկերում, ծառաների գրալցի միջոցով, Թոթովենցն առաջ է բերում լարված հետաքրքրություն: Պարզվում է, որ սպանվել են Տյուզյան ամիրաները և «Առաջին անգամ չէ, որ օսմանյան մալրաքաղաքը ականատես է լինում ալգալիսի եղեռնադարձության»: Տյուզյանների տնեցվածքը աճարդի հանելիս սեղանալուր Իսխելը նրանց բնակարանում հարնարեում է մատուռ, որը խտիվ արգելված էր սուլթանական հրամանով: Մեկադրվում է նաև Հաջի Չելերի ամիրան, իսկ վերջինս ապտակում է Իսխելին սկիճի մեջ թքելու համար: Առանց այդ էլ կատաղի մրցման մեջ գտնվող երկու այդ հակառակորդների թշնամանքը հասնում է իր գագաթնակետին: Իսխելն իր թիկունքում ունի հարուստ վաճառական Հալիտի պես պաշտպան, որին շատ ծառայություն-

որ, որի նյութը առնված է Կ. Պոլսո 19-րդ դարու սուլթանական և ամիրայական կյանքի հատկանշական կողմերին» (տե՛ս «ՀՅԿ» ամսագիր, 1934, № 4, ինչպես նաև Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականություն և արվեստի թանգարանում գտնվող աֆիշան):

ներ է մատուցել ինքը, ուստի նրանից պահանջում է կարել տալ Հաջի Չեխիրու դուխը: Բայց վերջինս մեծ համարում ունի սուլթանի պալատում և հեշտ չէ նրա հետ խոխուլն հաշվհարդար կատարել: Եվ ահա սկսվում է մի նոր պայքար՝ մեկը մյուսին տապալելու համար:

Երկրորդ պատկերի սկզբում մեծ վեզիրի և սենեկապետի դիալոգները բացահայտում են արտոյ օրենքների էությունը, այն փաստը, որ ճշմարտության, արդարության մասին խոսք լինել չի կարող բռնակալության մեջ: Սենեկապետը, որ փորձված, գիտակ մարդ է, վեզիրին ասում է. «Ներկայացրեք ամեն ինչ փայլուն, չափազանցելի լավ բաները, իսկ ձեր կոկորդում խեղդեցեք բոլոր կայսերական մոլորությունները», որովհետև՝ «սուտը ստամուկը չունի, սուտը քաղցր է, դուրեկան, սուտի մեջ ոչ մի ցավ չկա»: Եվ մեծ վեզիրը, քաջ գիտենալով հանդերձ, որ «անաանելի է կաշարության դրությունը, ահավոր սպանություններ, ավազակություններ, օրը ցերեկով կոշտալուսներ և հափշտակա թյուններ» են կատարվում, սուլթանին ասում է. մալլաքադաքը «հանդիստ է և հարուստ՝ կայսեր շնորհով: Միակ կայսրությունը, ուր սպանություններ և ավազակություններ չեն կատարվում», ուր հպատակները «ավելի քան պահ» են, «կյանքը ազատ, ինչքը ապահով և պատիվը՝ անձևանմխելի»:

Այդ աճափոր սափ, խարեության, կեղծիքի թաղարտության մեջ, բնականորեն, կարող էր հաղթել այդ հատկություններով ալիլի օժտվածը և ուժեղը: Այդպիսին է կաթուղի ամիրա Հաջի Չելերին:

Կանխելով Իսխելին և Հալեափին, որոնք կեղծ վկաներ վարձելով ուղում են նրան մեղադրել խլամական կրոնը անպատվելու մեջ և դատապարտել մահվան, Չելերին կրոնափոխ է լինում, Շելխուլ-Իսլամի հեա ներկայանում սուլթանին և արժանանում մեծ պատվի, պարզեատրվում ու իր պահանջով նշանակվում է մաքրատան վերատեսուչ (թեև սուլթանը շատ բարձր պաշտոններ է ստաջարվում): Այնուհետև նա բռնում է Հալեափի և Իսխելի կողմից փոխադրվող կեղծ ոսկիները և նրանց զխատել է տալիս:

Հաջի Չելերի և Իսխելի բախումը ունի լայն հասարակական բնույթ, արված է 19-րդ դարի օսմանյան կայսրության լուրսահատուկ պայմանների ֆոնի վրա, պայմանավորված է հասարակության մեջ բարձր դիրք գրավելու տենչով, ինչպես նաև ունեցած դիրքը չկորցնելու մղումով: «Տյուղյաններից հետո կարգը կհասնի և ինձ,— ասում է Հաջի Չելերին՝ իր կրոնափոխության մտախնդրի առթիվ,— և բուրբին: Ուրիշներն են ցանկանում տիրել լավ է, որ ևս տիրեմ»: Այդ նպատակին հասնելու համար միջոցների մեջ ոչ մի խտրություն պետք չէ, կարելի է փոխել հարյուրավոր կրոն-

ներ, համբուրիկ անարժաններին: Նույն կարծիքին է նաև Իսխելը, ըստ որի՝ անձնական նպատակին հասնելուց բացի, «սուտ է ամեն ինչ»: Դիմելով կնոջը, նա ասում է. «Կզոհեմ ամեն ինչ՝ քեզ, աղջիկս, բոլորը, մինչև տեսնեմ ինձ ապաստուղի արյունը Ստամբուլի հրապարակներից մեկում»:

Պիեռի արժանիքներից մեկն այն է, որ թե՛ Չելեբին, թե՛ Իսխելը հանդես են գալիս և հասարակական միջավայրում, և՛ ընտանեկան փոխհարաբերությունների մեջ, ունեն իրենց անհատական դերը, հոգեբանությունը, միաժամանակ հանդիսանում են իրենց միջավայրի տիպական ներկայացուցիչները:

Պիեռում վարպետությունը ևն պատկերված Տյուզյանների տանը կատարվող աճուրդը, սուլթանի շրջապատը, Չելեբիի մահմեդական (Նազմիե հանրմ) և հայ (Սրմա) կանանց հանդիպումը: Դրամատուրգը լավ է ավել ժամանակի ու միջավայրի կտրտիտը, այդ նպատակին ծառայեցնելով նաև գործող անձերի լեզվական ֆախտության, պահպանելով արևելյան բառագործածությունը նրբերանդները: Այսպես, օրինակ, իր կաշին փրկելու համար կրոնը փոխած Հաջի Չելեբին, ի պատասխան սուլթանի առաջարկի՝ բարձր պաշտոն գրավելու մասին, ասում է. «Պաշտոններն ինձ չեն շահագրգռում վեհափառ և խան գազի սուլթան, ինձ շահագրգռում է լույսը ճշմարիտ կրոնում: Նստեսնում եմ այն իմ հոգու աչքերով: Մի քանի

անդամներ ինձ թվացել է, որ ես ապրում եմ ծանր խաղաբուժ, բայց աչսօր զգում եմ, որ աչքեր ունեմ և տեսնում եմ, տկանջներ ունեմ և լսում եմ»։ Իսկ երբ պահանջում հն ամուսնանալ մահմեդական կնոջ հետ, պատասխանում է. «Եթե մարգարեն կամեցել է շնորհել ինձ մի հուրի իսլամական ջիննեթից, ես պատրաստ եմ թռթափելու իմ մարմնի բոլոր մեղքերը և լվացվելու ճշմարիտ կրոնի անմահական ջրով»։

Պրեսում հանդես են բերված նաև ներքնախափերի մարդիկ՝ ծառաներ, բեռնակիրներ, ներքինիներ, սակայն զբանջ մնացել են որպես էպիպոպիկ կերպարներ, չի ցուցադրված սոցիալական հակասութունը հասարակութան տարրեր շերտերի միջև։

Հենց այդ հակասութունը զբնորելու նպատակին է ուղղված «Պոպպատի ճաշ» պիեսը (1924), ուր հեղինակը փորձ է արել, ինչպես ինքն է ստում, «վերարտադրել ամերիկյան ժամանակակից պաշքարը մի կողմից կապիտալիստների, խմպերիալիստների և հոգեորականների, մյուս կողմից՝ բանվորների միջև»¹։ Սակայն այդ կարևոր ու արդիական խնդիրը պիեսում չի ստացել զբամատիկական պատշաճ լուծում։ Ինչ փերաբերում է տահասարակ ամերիկյան իրականութան ցուցադրմանը, սպա այդ տեսակետից զեղարվեստական լուրջ արժեքներ է ստեղծել

¹ «Սորհրդային Հայաստան», 1928, № 109:

Վ. Թոթովենցը իր մի շարք պատմվածքներով ու «Նյու-Յորք» վիպակով:

Եթե պատմա-սեռաբանական անցյալի ու սովետական իրականութեան երևույթները պատկերող իր երկերն ստեղծելիս Թոթովենցն ունի նախորդներ և ժամանակակիցներ, որոնց թվում գեղարվեստական խոսքի այնպիսի վարպետներ, ինչպես Գ. Գեմիրճյանը, Սա. Զորյանը, Ն. Հակոբյանը, Ե. Զարենցը, Ա. Բակունցը և ուրիշներ, ապա «Նյու-Յորք» վիպակով և ամերիկյան պատմվածքներով սովետահայ գրականութեան մեջ նա բերում է գերազանցորեն իր անվան հետ կապված թեմատիկա: Հատկապես պատմվածքներում Թոթովենցը հասնում է ստեղծագործական խոսքի հաջողութեան, գրականորեն իրեն որպես կարճ ձևի և սեփական սճի ինքնատիպ վարպետ: Դրանով է բացատրվում այն իրողութեանը, որ Թոթովենցի նկատմամբ շափաղանց ժլատ քննադատութեանն անգամ նրա պատմվածքները համարում է նվաճում և առաջնիկաց քաղ նրա գրական կենսագրութեան մեջ: Ամերիկյան պատմվածքների շարքը հաստատում է, որ Թոթովենցը ոչ միայն հիմնավորապես ճանաչում է ամերիկյան իրականութեանը, այլև, որպես նորագույն արվեստագետ, կարողանում է թափանցել երևույթների խորքը, կատարել գեղարվեստական ընդհանրացումներ: Այդ պատմվածքներից շատերը թարմ էին հնչում ժամանակին և ընավ չեն կորցրել

իրենց գաղափարական արդիականութիւնն ու հնչեղութիւնը, ճանաչողական և էսթետիկական նշանակութիւնը:

Այդ պատմվածքներէից մի քանիսը թեմայի համար «նախամուտքի» դեր են կատարում: Դրանցից են «Նորից դեպի ահարկու քաղաքը» և «Ինչպէս ծովում խեղդեցի մի մարդու» պատմվածքները: Առաջինում նկարագրվում է այն հուզմունքն ու սարսափը, որ ունենում է հուշն բանվոր Պրոգորոբուսը իրեն վաղուց ծանոթ Նյու-Յորք՝ Մ. Գորկու բնորոշմամբ՝ «գեղին սատանայի քաղաքը» վերադառնալիս: 27 տարի նա ապրել է այդ «սարսափելի քաղաքում», ապրել «ավելի վատ, քան որևէ անասուն, նկուղում, օրերով առանց տաք կերակուրի», ամբողջ 21 տարի այրվելով «երկաթ հալող արևափառ հնոցի առաջ» և մի կերպ վաստակելով չնչին գումար: Իր հայրենիքում՝ հուշն-թուրքական պատերազմի հետևանքով կորցնելով այդ արժեզրկված գումարը, նա ստիպված է նորից վերադառնալ ահարկու քաղաքը, հաստատ իմանալով, որ կանգնելու է «հնոցի առաջ և խանձելու իր կյանքի վերջին տարիները»: Երկրորդ պատմվածքում արձակագիրը ցուլց է տալիս, թե ինչպէս ամերիկյան ռեկլամի գոհ են դառնում մարդիկ՝ դեռևս երկիրը չտեսած:

Վ. Թոթովենցի պատմվածքների մի շարքը նվիրված է Ամերիկայում մոլեգնող ազգային դիակրիմինացիայի և ռասայական խտրականութեան

մերկացմանը («Երկու հրդեհ», «Մեկրի Ընդըրվուզ», «Թում»):

«Երկու հրդեհ» պատմվածքում տաղանդավոր վրձինով կերտված է կատաղի ռասիստ Ռիպզի՝ այլ «հարավցի արիստոկրատի» կերպարը: Ժառանգելով իր ռասիստ նախնիների անասնական ատելութունը նեղրերի նկատմամբ, Ռիպզը և նրա կինը հրդեհում են իրենց հարևան նեղր Բուկկերի նոր գնած ու գեռեւ չսպահնովազրված բնակարանը, անօթեան թուղնելով անմեղ մարդու ընտանիքը: Կատարված հանցագործութունը մնում է անպատիժ, ռասիկանները «քրեական հանցանք» են համարում ոչ թե Ռիպզի վարմունքը, այլ Բուկկերի արդար բողոքը: «Միտար Բուկկերի բնակարանում, — գրում է հեղինակը, — բացի աչքվոյ նյութերից, այրվում էր նաև ամերիկյան սահմանադրական օրենքը, և ևս լսում էի նեղրի աչքվոյ բնակարանի և կեղծամիտ օրենքների ճարճասյունները»: Այլ օրենքը, ինչպես նկատում է Բուկկերը, «միայն սե գույն է տեսնում»:

Նույն երևույթը Վ. Թոթովենցը ցուցադրում է նաև «Մեկրի Ընդըրվուզ» պատմվածքում: Նեղրուհի Մեկրին չափազանց բարի, ազնիվ աղջիկ է, հոգատարությամբ խնամում է անդամալույծ սպիտակամորթ Հյուզին, անխոտ կատարում է նրա տիկնոջ քմահաճույքները, մի «ազնվացեղ տիկին», որ տանել չի կարողանում սեամորթներին և անմեղ տեղը պատժելով Մեկրիին, դառնում է

նրա մահվան պատճառը: Միտար Հյուզը շատ դի-
 պուկ է տալիս Մեյրիի և իր կնոջ բնութագիրը.
 «Մեյրի, գու սև ես, բայց հոգիդ սպիտակ է, իմ
 կինն սպիտակ է, բայց հոգին սև է»: Այդ սև հո-
 գիները ոչ միայն սպանում են Մեյրիին, որը
 միտար Հյուզի պահանջով թաղված էր սպիտա-
 կամորթների գերեզմանոցում: «Մեյրիի թաղումից
 20 օր հետո, կես-գիշերին, Կու-Կլուքս-Կլանի
 կազմակերպության անդամ 15 «հերոսներ» իրենց
 սպիտակ, երկար և գլխի վրա սրածայր տարագ-
 ներ հագած, ձեռքերին բոցավառ ջահեր բռնած՝
 խուժեցին սպիտակիների գերեզմանոցը, փորեցին
 նեղրուհի Մեյրի Լնդբրոյդի գերեզմանը, հանե-
 ցին նրա դիակը, հռնալով, ծաղրելով և ծանակե-
 լով, փողոցները ման ածելով՝ տարան և նետեցին
 նեղրերի գերեզմանոցը: Մա մի բնորոշ պատկեր
 է ամերիկյան «քաղաքակիրթ աշխարհի» բարքե-
 րից: Նույն սասիստական ատելության հետևան-
 քով է նեգր աշխատավոր Թոմը փախչում հա-
 րավից՝ Լինչի դատաստանից, հյուսիսում ևս
 չգտնելով հոգեկան հանգիստ («Թոմ»): Ճիշտ է,
 բանվորական միջավայրում նա տեսնում է աշ-
 խատավոր մարդկանց լավ վերաբերմունքը, հա-
 մոզվում է, որ անկախ իրենց մաշկի գույնից
 նրանք հավասարաչափ տանջվում են, սակայն հա-
 սարակության մեջ ոտնահարվում են նրա իրա-
 վունքները: Բանվորական միջավայրում արդեն
 բավականաչափ ինքնագիտակցության եկած Թո-

մը՝ ձգտելով պաշտպանել իր արժանապատվութիւնն ու իրավունքները, դառնում է ակամա «հանցագործ», դանակով հարվածում է սասիստ սպիտակամորթներին ու փախչում:

Պատմվածքների մի այլ շարքում Վ. Թոթովենցը բացահայտում է ամերիկյան կյանքի մի քանի ուրիշ կողմերը՝ միլիտնատերի կենցաղային ալլանդակութիւնները, գանգստերների ալլանդակ գործունեութիւնը, կեղծիքն ու խարեութիւնը: Գրողին, համանուն պատմվածքի հերոսը, ուսանող է, դեռևս պատանի, բայց կյանքի մասին արդեն շատ «գործնական ըմբռնում» ունի: Նա հասկանում է բուրժուական կյանքի օրինաչափութիւնները, թողնում է ուսումը և հազվադէպ պրակտիցիզմի շնորհիվ դառնում է միլիտնատեր. նա գիտի, որ «խառաքանված Շրթախում» գիտութիւնը, արտոյոսները դատարկ հասկացողութիւններ են, կյանքի շարժիչ ուժը հարստութիւնն է: Իսկ բուրժուական հասարակութիւնն սկզբունքն է և ոչ թե մի անհատի կարծիք: Նախ այդ օրենքների դիմաց բոլորովին անզոր է համալսարանի պատմաբան պրոֆեսորը, որը միջոցներ չունենալու պատճառով չի կարողանում սեղանակ իր աչն մեծարժեք գիտական ուսումնասիրութիւնը, որը երկար ժամանակ անում է փականքի տակ, մտանվում անուշադրութիւն, մինչդեռ գործարար ու հարուստ խմբագիրը, պրոֆեսորի հետ իր համար եկամտաբեր գործարք կնքելուց հետո, կաշառքի ուժով

մեծ ազմուկ է բարձրացնում նույն աշխատութեան շարքը, հսկայական դումար շահելով («Մի էջ բուրժուական մամուլի պատմութիւնից»)։ Գլխութեան ու արվեստի մասին Գրողքու նման է մտածում նաև միտար Ֆինկլշտայնը («Աստվածային կոմեդիա»)։ Ինքնատիպ ձևով, առանց Ֆինկլշտայնին հանդես բերելու, Վ. Թոթովենցը բացահայտում է վերջինիս էութիւնը։ Նշելով միայն, որ նա միլիոնատեր է, ապա համառոտ ներկայացնելով նրա բնակարանի և ունեցվածքի նկարագիրը, Թոթովենցը հասնում է գեղարվեստական ընդհանրացման։ Ֆինկլշտայնի տան դահլիճում, պատի օջախում դարսված փայտերի ետևում «վառվում է էլեկտրական կարմիր մի լամպ՝ սոսկ վառվելու իլլուզիան տալու համար», պատից կախված է առեւելույթ փոթորկալի ծովի տպավորութիւն թողնող, բայց իրականում սոսկ դեկորացիա հանդիսացող, «նատուրալիստական մի նկար», գրադարանում ամփոփված է «համաշխարհային ամբողջ գրականութիւնը», այդ թիւում և «Աստվածային կոմեդիայի» «արքայական հրատարակութիւնը»։ Բայց «բոլոր գրքերը կարտոնից են շինված», ինչպես ծիծաղելով ասում է սպասուհին, մի ծիծաղ, որ հեղինակը իրավացիորեն համարում է դաժան՝ ուղղված հարատւթեան վարագույրով ծածկված կեղծիքի ու տգիտութեան դեմ։

Բուրժուական բարքերի սեղմ պատկերն է տրված «Տիկին Պուլմենի շնիկը» փոքրիկ պատմը-

վածքում: Տիկին Պուլմենը լիովին անհատակա-
նացված կերպար է: Նրա բնավորության դժերից
մեկն այն է, որ պտույտի գնալիս չի հինգ տա-
րեկան երեխային թողնում էր դայակի մոտ և հե-
տը վերցնում էր իր երկու տարեկան շնիկին»:
Շնիկի առողջության նկատառումներով նա փոխում
է իր ամեն տարվա ամառանոցի վայրը: Հարատու-
թյան մեջ հղիացած կանանց նման նա ճանաչում
է փողի ուժը, որի միջոցով ոչ միայն թերթերում
մահախոսական է գրել տալիս շնիկի մասին, այլև
կադմակերպում է շքեղ հուզարկավորությունն ու
թաղում: Տասնյակ հազարավոր գուլարներ շարուն-
աջ ու ձախ՝ միմիայն իր քմահաճույքը կտտարե-
լու համար, — ահա ինչ է Պուլմենի հավատո հան-
դանակը: Նույն ձևով է վարվում միտար Կուլին-
զը, որը 250,000 գուլար է ծախսում մեկ շաբա-
թում՝ մի կնոջ հետ ժամանակ անցկացնելու և իր
անբարոյականությունը ծածկելու համար («Ութն
օրվա կնոջ ծախսը»): Կամ մի՞թե նույն պատ-
կերը չենք տեսնում «Իզաբելա Սերրանո»
փայլուն պատմվածքում, որը Վ. Թոթովենցի
ստեղծագործության լավագույն էջերից է, բո-
վանդակությամբ հարուստ, նպատակասույց և
խորապես հուզիչ: Պատմվածքի սկզբնամասում
հեղինակը բանաստեղծական շնչով պատմում է
անդալուզյան պարերի մասին. «Մնդալուզիացի-
ները պարում են փոթորկահույզ՝ ճիշտ ծովի ալիք-
ների նման, գալարում են իրենց մարմինները,

պարուժում են երազային աչքերով... Նրանց մարմինները ճկուն են, ինչպես արար ձիափորի նիզակը, որ երբեմն սլացել է Անդալուզիայում, ճկուն՝ ինչպես ուսնու ճյուղն Սրարատյան դաշտում: Նրանք սիրում են պարել լուսնկա գիշերներին: Նրբ աստղերը, թփերից պսկած սպիտակ ծաղիկների նման, թափվում են մաքրամաքուր երկընթուժ, նրանք սիրում են պարել, պարել այդ աստղերի տակ: Նրանց ոտները կայլթում են գետնի վրա՝ ինչպես մակուղիը ջրում»: Այդ չքնաղ պարողներից մեկն է Իզաբելլան՝ սևաչյա, գեղանի, արեարույր գեղջկուհին, որը կարիքից ստիպված համաձայնվում է փորձված գործակալ Պր Վալերայի հետ մեկնել Ամերիկա՝ ապրելու և փող վաստակելու: Դեռևս նափի վրա նա լուծ է, որ «ամերիկյան կլանքն էլ կատաղի է, ինչպես այս ծովը», ապա անխորձ աղջիկը ամբողջովին մխրճվում է այդ կատաղի ծովի «շքեղ կեդտի» մեջ: Ածուխի արքայի որդի Շրայտերը խելահեղ օրդիա է սարքում, սիրելու անվան տակ վայելում է անմեղ կուշտի կենսական հյուսթերը և շարտում ուրիշների գերկը: «Թափվեցին Անդալուզիայի գեղջկուհու աչքերի աստղերը հատիկ-հատիկ: Իզաբելլան սկսեց ապրել իր վաղահաս տերևաթափը՝ ողբազին և աղեկաուր: Նրա ճակատից գեղին տերեւներ ընկան... Նրա թերթերունքները փակվում էին աչքերի վրա՝ ինչպես կափարիչն է փակվում մանկամարդ աղջկա գագաղի վրա»:

Պատմվածքում հեղինակը ներգործոն արվեստով դրսևորել է ազնիվ հումանիստական վերաբերմունք Սերբանոյի՝ «ամերիկյան ապրելակերպի» զոհի նկատմամբ և բուն ատելություն դեպի նրա դահլճները: Այդ ոգով է շնչում նաև «Արարական քաղաք» պատմվածքը, որը նախորդի նման հնչում է որպես արձակ բանաստեղծություն: Պատմվածքի հերոսուհին նույնպես ակամա է եկել Ամերիկա, նրան բերել է ջալլամի վաճառական միտոր Շիլըր, բերել է արարական անապատներից և ամուսնացել նրա հետ: Արարուհին, այժմ ակիրն Շիլըր, ապրում է շքեղության մեջ, սակայն սակու փայլը չի եղծել նրա սերը դեպի ծննդավայրը, կիզիչ ավազուաները, արմավենիները: «Արարիայի մի հատիկ ավազը,— ասում է նա,— ևս չեմ փոխի այս ադամանդի հետ», և այլ ասում է սբտանց, ամենայն անկեղծությամբ, քանի որ չի մերվել ամերիկյան խելահեղ ապրելակերպին, չի կեղծում իր զգացումները: Նա եղել է որք, ամուսնացել է վաճառականի հետ՝ իր կամքին ու զգացումներին հակառակ, թողնելով հարազատ միջավայրը: Նա հեռացել է իր ծննդավայրից, բայց հողու խորքում անվթար է պահել հարազատ միջավայրի կարոտն ու սերը, ժողովրդի մարդու բարոյական մաքրությունը:

«Արարական քաղաք»-ում, ինչպես «ամերիկյան» մյուս լալագունը գործերում, որոնցից մի քանիսը բովանդակությամբ նպատակաուլաց գե-

զարվեստական մանրաքանդակներ ու հողերանա-
կան էություններ են, Թոթովենցը առավելապես դոր-
ծադրել է մարդկանց և երևույթները համեմատու-
թյունների և մետաֆորների օգնությամբ բնու-
թյադրելու իր նախասիրած մեթոդը: Արաբուհու
արտաքին գեղեցիկությունն ընդգծելու համար,
օրինակ, դրողը նրան համեմատում է լուսաստղի
հեռ, իսկ ցուրտ իրականություն մեջ խամբող նրա
հոգին, տխուր հուզաշխարհը ցուցադրում է աչ-
պիտի հակիրճ ու խոստոն նկարադրությամբ. «Երբ
տիկին Շիլզը խոսում էր, ինձ այնպես էր թվում,
որ մի մենավոր արմավենի, հեռավոր անտառա-
տում, արտասվում էր սղբադին, կարծես խափա-
րում մոռացված մի շող էր արևից բաժանված...
Նայելիս տխուր ժպտում էր, կարծես մի շուշան
լիներ մշուշում...»:

Արարուհու հակադրությունն է ամուսինը՝ վա-
ճառական Շիլզը, որի համար կինը նույնպիսի
ապրանք է, ինչպես ջալամի փետուրը, որի առե-
տըրով է դրադվում նա: Ընտանեկան հարցերում
նա վարվում է ճիշտ այնպես, ինչպես ասետրա-
կան դործունեություն մեջ՝ կեղծելով, ստելով,
մերթ ձևանալով ձանձրացնելու շարժ քաղաքա-
րի՝ նույնիսկ իր համար անցանկալի մարդու մաս,
մերթ գազանի պես սպառնալով կնոջը:

Սակայն իր անմարդկային վարքագծով պա-
րոն Շիլզին գերազանցում է «Գերարուզ» պատմը-
վածքի անանուն վաճառականը, որը իր նմաննե-

րից շատերի պէս պատճառ է գտնում մի ծանր
ողբերգութիւն:

Նպատակին հասնելու միջոցների մեջ խորու-
թիւնն չգնող, համառ ու խորամանկ «ճաղատ երի-
տասարդը» նենգ գործարք է կնքում մի ազնիւ
Ֆերմերի հետ, իսկ վերջինիս մահից հետո, օգտը-
վելով ընտանիքի նյութական ծանր պայմաննե-
րից, «բարութիւն» անելու պատրվակով, իր հետ
քաղաք է տանում Ֆերմերի 17-ամյա գեղանի ու
միամիտ աղջկան: Վաղուց Գերտրուզին հետա-
պնդող վաճառականը քաղաքում առաջին իսկ
գիշերը հարբեցնում և վայելում է նրան, իր կրքե-
րին հագուելով տալու համար նրան աշխատանքի
է տեղափոխում որոշ ժամանակով, ապա անհե-
տանում: Անխող, անօգնական և հղի Գերտրուզը,
այնուհետեւ, ճարահատոյալ ընդունում է հանրատան
«բարի պառավի» «օգնութիւնը» և՛ երկխոս ունե-
նալուց հետո գտնում է այդ տան բնակիչներից
մեկը: Մի կողմից դառն, անողորմ աղքատութիւն-
նը, մյուս կողմից ծով հարատութիւն մեջ շիացած
մարդկանց ալլանդակ բարքերը կյանքի հատակն
են նետում գեղանի, բարոյապէս անաղարտ աղ-
ջրկան: Աշխարհիկ բուրժուական կյանքի ալլանդա-
կութիւնները մերկացնելու հետ միասին գրողը
հարվածի տակ է տնում նաև կրօնական դասի
գործունեութիւնը: Այդ մերկացումը ուժգին ու
անվրեպ է հատկապէս «Ասատուր և Կլեոպատրա»
պատմվածքում:

Հոգևորականի մի քանի բնորոշ դժերով օժտւած կերպար է Ասատուրը: Ընկնելով Ամերիկա և երկար ժամանակ անգործ ու անխող թափառելով «ժայրահեղ աղքատութեան» մեջ, խորապէս համոզվելով, որ «աշխարհի վայելելոյները լրբեշն են, որոնք կողոպտում են, շորթում, կեղեքում», իսկ աշխատավորները գրկված են նուրբիակ աշխատելու իրավունքից, Ասատուրը, «կամադուրի և արդեն աղճատված հոգի ունեցող» այդ երբեմնի գեղջուկը, կիրակացնում է. «Պետք է որդեգրել շոքոքորթութեան և ստի մեթոդները այս աշխարհում, եթե ոչ՝ արիշ կլք չկա», եւ նա գառնում է հոգևոր քարոզիչ, հոգու աւետարական, «քրիստոնյա եկեղեցու ամենակեղծավոր սպասավորը»: Նրա և նրա նման քարոզիչների հոգեբանութեանը ցարտուն կերպով վերարտադրված է հետևյալ գրույցի մեջ.

— Ինչո՞վ ես զբաղված, Ասատուր,— հարցրի մի քանի սովորական խոսքեր փոխանակելուց հետո:

— Սուրբ գրքերով և կանանցով,— պատասխանեց Ասատուրը:

— Ի՞նչ կապ արդ երկուսի միջև:

— Հը,— ծիծաղեց Ասատուրը,— ո՞ժեղ կապ, քարոզում եմ՝ «սիրեցիք միմյանց», այս երկրի հարուստ կանաչք շատ լավ են ըմբռնել այդ խոսքերի իմաստը. նրանք այնքան հարուստ են, որ սպարտական են զվարճանալ. շարաթական մի քանի ժամ քարոզում եմ երկնայինը և ման եմ գա-

լիս տները՝ զբաղվելով երկրալին խնդիրներով, երկիր սիրողները պետք է զբաղվեն երկնքով,— վերջացրեց Ասատուրը:

Բացահայտելով հոգևորական դասի ախպական ներկայացուցիչներից մեկի խոսքի ու գործի խոր հակասությունը, նրա մարդկային էության խեղաթյուրումը, Թոթովենցը ծանրանում է աչն հանդամանքների վրա, որոնք այլասերում են մարդուն: Պատմվածքում ցույց է տրվում, որ Ասատուրի մեջ՝ մինչև քարոզիչ դառնալը, կալին բացասական գծեր, սակայն սոցիալական միջավայրը, մասնավորապես՝ «եկեղեցին և ամերիկյան բուրժուական կարգերն էին, որ Ասատուրին սովորեցրին կեղծագործություն և ստախոսություն, իսկ Ասատուրն էլ հանդիսացավ սաի և կեղծիքի հերոսական ասպետ»:

Ամերիկյան իրականության մեկ այլ բնորոշ երևույթ է նկարագրված «Պայքար» ակնարկում¹: Այստեղ վերարտադրվում են քաղաքագլխի ընտրության համար տարբեր պարտիաների մղած պայքարի զանազան ձևերն ու միջոցները, մասնավորապես թեկնածուների օգտին և նրանց դեմ ուղղված երկկողմանի ճտուերը, շինծու գովեստներն ու ահավոր մեղադրանքները, ժողովրդական մասսաների քվեները վաստակելու համար տրված անվերջ խոստումները, սպառնալիքները, «հյուրա-

¹ «Նոր ուղի», 1929, № 5, էջ 71:

սիրությունները» և այլն: Խոսելով վարձու, անարվեստ, ապաշնորհ նկարչի նախընտրական ծաղրանկարների, կաշառված «վկաների» միջոցով հորինված սպանիչ մեղադրանքների, աշխատանքից հեռացնելու սպառնալիքով քվեներ հավաքելու, շլացուցիչ ունկլամների մասին, Թոթովենցը ակադեմիայի համոզչությամբ գրում է. «Ընտրական պալքարի ամենահրարորրոք վալրերից գինետրներն էին: Կոկաեյլի, վիակիի և գարեջրի բաժակներում վառվում էր ընտրական պալքարը, վառվում էր ինչպես ձուլարանի հնոցը: Ճառեր, հայհոյանքներ, խնտրիգներ, կոխվ, ծեծ, սպանություն, ատրճանակ, մթի մեջ հետապնդումներ, ոստիկանության միջամտություն, կաշառք, պոռնիկներ: Դոլլարը հոսում էր ինչպես Հրդսըն գետը...»:

Ամերիկյան կյանքի սոցիալական հակասությունները արտացոլելու խմաստով նշանակալից երկ է Վ. Թոթովենցի «Նյու Յորք» վիպակը, որը հրատարակվել է նաև ուսսերին և քննադատության կողմից համարվել է գրողի հաջողված գործերից մեկը:

Վիպակի սկզբում Վ. Թոթովենցը հմուտ կերպով ցուցադրում է կապիտալիստական աշխարհի ցավոտ կողմերից մեկի՝ գործազրկության, շրջմուլիկության և աղքատության պատկերը: Վիպակի գործազուրկ հերոսը, միլիոնավոր բախտակիցների հետ միասին, թափառում է անփող, անօթեան,

սովատանջ ու ցրտահար, երազում է որևէ տաք անկյան մասին, որտեղ կարողանար գեթ որոշ ժամանակ տաքացնել իր սառած մարմինը: Նա գիշերում է հանրային պարտեզներում, բաց երկրնքի տակ, կամ պարզապես թափառում է՝ Շսպանելով ժամանակը՝ մինչև լուսանալը»: Դառն ու ախուր են նրա խոհերն ու զգացումները, իսկ նրա ծանր վիճակը առավել ցայտուն դարձնելու համար հեղինակը տեղին ու դիպուկ նկարագրում է քաղաքի առաս լույսերը, շրջուցիչ սեղամները, որոնք ուղղակի հրավիրում են վայելելու ամենաձյն բարիք: Այդ ծով հարստության մեջ սովալլուկ կյանքը, տշխատանք որոնելիս ամենուր մերժում ստանալը, նույնիսկ ազնիվ ձգտումների համար ծաղրի առարկա դառնալը՝ վիպակի կենտրոնական հերոսի հոգում կուտակում են զայրույթի և բողոքի զգացում, առաջ բերում «ցասումի մի հրդեհ» զեպի աչն միջավայրը, որտեղ «ցոփերն ու տխմարները վայելում են, շուայլում, անագորույն մաշում, փչացնում»: Սակայն բուրժուազիան ամեն միջոցի դիմում է այդ զայրույթը մեղմելու, աշխատավորության դիտակցությունը մթազնելու համար: Այդ միջոցներից մեկն էլ «Գիշերելու տուն» կոչված հիմնարկներն են, որոնք հանդամանորեն նկարագրվում են վիպակում: «Դա օպիում է, դա ավելի վատ տեսակի օպիում է, քան եկեղեցին, կրոնը», — ասում է «իմաստուն

աչքերով» անձանոթ երխտասարզը՝ դիշերողներին իրադեկ դարձնելով «բուրժուական կեղծ համբուլրի ձևերին»: Իրոք այդ աները, ինչպես ցույց է տալիս հեղինակը, օպիումի դեր են կատարում, ժամանակավոր օթեան ու սնունդ տալով անգործ ու անօթեան մարդկանց, շատերին հավատացնում են ըուրժուադիալի «բարի» լինելը:

Իսկ թե իրականում ի՞նչ է թաքնված այդ «բարության» ցուցանակի տակ, ո՞րն է կապիտալիստական աշխարհի էությունը, Վ. Թոթովենցը հաջողությամբ ցույց է տալիս վիպակի հաջորդ մասերում:

Հենց «Գիշերելու տան» մեջ մենք տեսնում ենք այդ «բարեգործական» հիմնարկն ստեղծողների դեմքը: Նրանք գիշերողներին «օգնում» են՝ նրանց սուսջ դնելով որոշակի ստորացուցիչ պայմաններ, պահանջելով, որ կատարվեն այդ պայմանները, այլ կերպ նորից փողոց կշարավեն: Իսկ բուրժուական կարգերում աիրող անհաշտ մրցումը, հարստություն դիզելու համար գործադրված միջոցները հեղինակը հակիրճ վերաբառադրում է գորգափաճառներ Խընալյանի և Աշրգրաշյանի գործունեության պատկերմամբ: Դրանք «ամերիկյան ապրելակերպին» հարմարված բնավորություններ են, ունեն միեկուս շահերը, թեև տարբեր, բայց էությամբ միեկուսն անազնիվ միջոցներով խաբում են աջ ու ձախ, մերթ քծնում են, սիրաշահում, ստորանում, մերթ՝ հոխորտում, որպեսզի

դիմանան կյանքում թաղալորոդ «ահալոր մ'ըցման
այդ դարհուրելի պատերազմում», այն երկրում,
որտեղ «կապիտալը ամեն օր արձանագրում է
մարդկային սարսափելի անկումների ու բարձրա-
ցումների պատմությունը»:

Հեղինակը նկարագրում է նաև բանվորների
ծանր աշխատանքը գորգավաճառների մոտ և վի-
պակի վերջում ցույց է տալիս, թե ինչպես անց-
նելով մի շարք փորձությունների բովից, ծանո-
թանալով շահագործման, խարդախության և կե-
ղեքումի տարբեր ձևերին, ապա նաև լսելով դա-
սախոսություն աշխատանքի ու կապիտալի միջև
եղած անհաշտելի հակասությունների մասին,
գլխավոր հերոսը գնում է բանվորական թաղա-
մաս, բանվոր դասակարգի սեռըլուցիոն պայքարի
մեջ տեսնելով ազատության ուղին:

Ճիշտ է նկատել ժամանակին վիպակը գրա-
խոսողը, թե հեղինակը «բավարար չափով չի
պատկերել ամերիկյան բանվորության կյանքը»,
ավել է որոշ նատուրալիստական նկարագրու-
թյուններ և այլն, բայց և իրավացի է նա՝ գրելով.
«Ընդհանուր առմամբ Վ. Թոթովինցը նկարագրե-
լու և հերոսների հոգեբանությունը գործողու-
թյունների մեջ դրսևորելու ընդունակություն ունի:
Նրա լեզուն վարժ է և սահուն, պատկերները՝
վառ, շարիխները՝ հատու և ուժեղ»¹: Իրոք «հա-

¹ «Գրական դիրքերում», 1928, № 16: Գրախոսականը
ստորագրված է «Դ. Դ.»: Հավանաբար այն պատկանում է
Դ. Դեմիրճյանի գրչին:

տու և ուժեղ» շարիխներով ևն պատկերված մի
շարք կրեալթներ, այլ թվում մեծ քաղաքի եռու-
ղևոր, փողոցային շարժումները, լուսավոր սեկ-
լանները:

«Նյու-Յորք» վիպակը և ամերիկյան պատմը-
վածքները Վ. Թոթովենցի ստեղծագործական ինք-
նատիպության ցայտուն արտահայտություննե-
րից են:

Բարձր հումանիզմի գաղափարով ու ազնիվ
դժգոհումներով են հագեցված այդ երկերը և, չնա-
յած դրանցից մի քանիսի գեղարվեստական առան-
ձին թերություններին, թվում է, թե ստեղծված
են ոչ թե տասնամյակներ առաջ, այլ հենց մեր
օրերում: Դա՛ էլ հանդիսանում է նրանց դնահատ-
ման հիմնական չափանիշը, որովհետև իսկական
արվեստն է միայն, որ չի խամրում ժամանակի
ընթացքում, չի կորցնում իր փայլն ու հմայքը:



Վահան Թոթովենցի ստեղծագործական կենսագրութիւնը 30-ական թվականներին հարստանում է բարձրարժէք ու մնացուն այնպիսի երկերով, ինչպէս «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա», «Հովնաթան սրղի Երեմիայի» վիպակները և «Բաց-կատույտ ծաղիկներ», «Միրանի ծառ», «Գալառական ողբերգութեան», «Երկու դերեզման» և ուրիշ պատմիածքները: Այս ստեղծագործութիւնները Վ. Թոթովենցի վարպետութեան ամենացայտուն ապացույցներն են, նրա զարգացման վերջնիշխոյ ուղու նշանաձողերը:

«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը «Ինքնակենսագրական» բնույթ ունի. նյութը հեղինակի մանկութիւնն է, կերպարները իրական մարդիկ են, նկարագրված դեպքերը՝ իրողութիւններ: Սակայն ինքնակենսագրութեան տարրը հեղինակին չի տարել դեպի մի անհատի կենսագրութիւնը, չի սահմանափակիլ գրքի իմացա-



Վահան Թոթովնցի ստեղծագործական կենսագրութիւնը 30-ական թվականներին հարոտանում է բարձրարժեք ու մնայուն ախպիսի երկերով, ինչպես Եկանքը Նին հոովմեակիան ճանապարհի վրա», «Հովնաթան որդի Նրեմիայի» վիպակները և «Բաց-կապույտ ծագիկներ», «Միրանի ծառ», «Փալաական ողբերգութիւն», «Երկու զերեզման» և որիչ պատմվածքները: Այս ստեղծագործութիւնները վ, Թոթովնցի վարպետութիւն ամենադաշտուն ապացույցներն են, նրա զարգացման վերընթաց ուղու նշանաձողերը:

«Կյանքը Նին հոովմեակիան ճանապարհի վրա» վիպակը «ինքնակենսագրական» բնույթ ունի. նյութը Նեղինայի մանկութիւնն է, կերպարները իրական մարդիկ են, նկարագրված դեպքերը՝ կրողութիւններ: Սակայն ինքնակենսագրութիւն տարրը Նեղինային չի տարել դեպի մի անձատի կենսագրութիւնը, չի սահմանափակել դրքի իմացա-

բանական արժեքն ու գեղարվեստական ընդհանրացման ուժը:

Հայտնի է, որ մանկութիւնն ու պատանեկութիւն մասին սովետահայ գրողները ստեղծել են աչնպիսի բարձրարժեք երկեր, ինչպես Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմութիւնը», Գ. Մահարու «Մանկութիւն», «Պատանեկութիւն», «Երիտասարդութիւն սեմին» տրիլոգիան, արձակ ու չափածու շատ ուրիշ գործեր: Դրանցից յուրաքանչյուրը մանկութիւնն ու պատանեկութիւն տարիների ապրված ու փրցած իրականութիւն, մեր ժողովրդի կյանքի մի սրտէ ժամանակաշրջանի փրկարկիտական պատմութիւնն է: Այդ երկերից յուրաքանչյուրը ուրույն միջոցներով բաց է անում պատմական կյանքի մի նոյ էջը: Հետագած կյանքի միտնգամայն ինքնատիպ աշխարհ է բացում Նուս վ. Թոթովնցի «Կյանքը Նին հոովմեակիան ճանապարհի վրա» վիպակը, որը մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի բնորոշմամբ՝ «Նիհայն գործ է և մնայուն»:

«Կյանքը...» նրատարտիկն է Նուս ուտերին և արժանացել ջերմ ընդունելութիւն:

Այս վիպակում վ. Թոթովնցը պատումը սկսում է իր մանկութիւն, ընտանեկան միջավայրի, հարողատների ու մտերիմների հակիրճ բնութագրութիւնը, ապա, աստիճանաբար ընդ-

¹ Ավ. Իսահակյանի մի անսխալ գրութիւն մեր ձեռքի տակ եղած պատմակց:

լայնում է գրքի ընդգրկման շրջանակները, գրանց
մեջ առնելով ծննդավայրի սոցիալ-տնտեսական
կյանքի ելևելքները, կենցաղը, սովորություն-
ները: Ճիշտ է նկատել բանաստեղծ Վ. Նորենցը՝
«Նրկերի» առաջաբանում. «Սկսելով ընտանեկան
նեղ շրջապատից, իր ծնողների և ապա մտախի
մարդկանց գեղարվեստական նկարագրից՝ Թոթո-
վենցը հետևողականությամբ ընդարձակում է իր
տեսողաշարը և լուսարձակի տակ է առնում ավելի
լայն իրականութուն՝ նորանոր դեպքերով ու դեմ-
քերով և ընթերցողին տալիս է մի ամբողջ ու-
րույն աշխարհ՝ ի անցողիկ քաղցրություններով
և տևական դառնություններով»:

Վիպակի սկզբնական մասերում չափազանց
հակիրճ, բայց վարակիչ շնչով հեղինակը քանդա-
կում է իր ծնողների կոլորիտալին կերպարները:
«Արիստոկրատ» հայրը հաստատուն ու անխախտ
արաբիցիաներով, «գեմսկրատ» մայրն իր քրիս-
տոնեական խոնարհաթյամբ ու հեղահամբուրու-
թյամբ, երկուսն էլ իրենց անկտրում համառու-
թյամբ, հիշողության մեջ ապավորվող, անմոռա-
նալի գրական կերպարներ են: Տիպական հանգա-
մանքների մեջ, հյուսթեղ գրչով ներկայացնելով
նրանց գործերն ու հոգեբանությունը, հեղինակը
կատարում է գիպուկ ընդհանրացում. «Նրկուսն էլ
համառ էին: Հայրս համառ արիստոկրատ էր,
մայրս՝ համառ գեմսկրատ: Մինչև վերջն էլ հայրս

չկարողացաւ հաշտվել մորս զեմոկրատիզմի, և մայրս էլ՝ հորս արխատկրատիզմի հետք:

Վիպակի այն հատվածները, որոնց մեջ գրողը հիշում է ծնողներին, հնչում են որպէս ծնողական սիրտ մշտապէս թարմ տ. հավիրժական մտախփին նվիրված քնարական երգեր, որոնց հմայքի մասին պատկերացում կազմելու համար բերենք միայն մի հատված:

«Մայրը՝ դա հավիտենական, մշտաթարմ և մշտադալար լիրիկան է, դա ոսկյա ծառն է երկնքի կապույտ դաշտում բուսած:

...Իջնում է թանձրակարմիր և մեծաթև մի վերջալույս իմ ճակատի վրա:

Կոծում են հողմերը: Աշխարհը ցուրտ է:

Փակեցեք դուռը աշխարհի առաջ:

Բայց մայրս ժպտում է մեր կապույտ լուսններից բարձրացող արևի միջից, տեսնում եմ նրա ծամերը, արևի շողերին խառնված, և լսում եմ նրա շողերի ձայնը...

Տուր թախիժդ ինձ, մանուկ իմ, երգն իմ կողերի, ցնձա դարնան մեջ, գարուն իմ ցնձադին, վաղիր բաց և դալար դաշտերում՝ իմ ևղնիկ թեթևասուշր, սուրա վրտիրադեղ ալիքների վրա, ժպտա ինձնից ծածկ կաթի մաքրութլամբ, ջերմագին է աշխարհը, իմ դավակ, իմ ծառ երկնասարլաց, իմ խնդուլթյուն, իմ սեր:

Եվ բացվում է մի մեծ առավոտ, որի թևերը ոսկեզօծում են իմ հոգու մասլլ տիունքները:

Սալտանում է տիգերական ցնծությունը:

Արևի միջից լսում եմ նրա ձայնը:

Արևը ինքը՝ մայր է խարայաշ աչքերով և ոսկրա մազերով: Թափվում է կանաչների վրա նշա ոսկեհնչյուն երգը:

Ողջ դալարն է սարսուռ, լոմ ջերմագին մոր սիրան է շշնջում բուլոր պարտեզների բուլոր ծաղիկների բաժակներում:

Ըմպում եմ վարդի բույրը, թանձր՝ ինչպես մորս կաթը:

Իջնում է նորից գիշերը, խաղաղ-զովագին և աստղասարսուռ, անհուն մի գիշեր:

Մայրս գնաց արևի հետ:

Սելասում եմ առավոտին, սպասում եմ, որ մայրս ճշա նորից արևի հակինթյա սրինգով»:

Ներգաշնակորեն միահյուսակելով խոհն ու զգացումը, միտքը և հույզը, Թոթովենցը զրսևորում է մոր անփոխարինելի դերը զավակի կյանքում՝ որդու մռայլ խոհերը փարատելու, ցուրտ հողմերի դեմ՝ զբահ ու մուժ գիշերի դեմ՝ պայծառ առավոտ լինելու վսեմ հասկությունը, ինչպես նաև որդիական անհուն սիրո, անկեղծ թախծի (մոր մահվան առթիվ) և այլոց կարոտի մարդկային զգացումները:

Նման ջերմ հատվածներով հարուստ է «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վիպակը: Հեղինակը վերհիշում է իր մանկության օրերի ընկերներին, քույրերին, կղբայրներին, հարազատ-

ներին, վերարտադրում է առանձին ֆրագմենտների նրանց կյանքից: Սրանով էլ, հիմնականում, բացատրվում է այն, որ դիրքը մի տեսակ ֆրագմենտար է, որը սակայն կոմպոզիցիոն թերությունն է, ինչպես գիտվել է քննադատության մեջ: Եթե Ստ. Զորյանը իր «Մի կյանքի պատմություն» վեպը գրելիս ստեղծել է վիպական կուռ սյուժե և նպատակալաց ֆարուլա, ապա Վ. Թոթովենցը, ինչպես նաև Գ. Մահարին, հաճախ է թույլ տալիս շեղումներ, կարծեք հաշվի չի տանում, թե մի էպիզոդը, հուշը, դնպքը պիտի հաջորդի կամ նախորդի մյուսին: Բայց կարևորն այն է, որ գրանով էսպես չի խախտվում ժամանակագրական կարգը, երկի դարդացման աշխույժ ու սլացիկ ընթացքը: Ուրիշ հարց է, որ վիպակում տեղ են գտել պահաս հետաքրքրության ներկայացնող դրվագներ (օրինակ՝ շների հետ խաղալու պատմությունը) և որոշ նատուրալիստական նկարագրություններ (Բահրիեի հետ ունեցած կապը և այլն): Սրանք հիմք են տալիս նշել գրքի մասնակի թերությունը, բայց ոչ ամենեին՝ նրա կատուցվածքային «խախտությունը»:

«Կյանքը հին հուվմանական ճանապարհի վրա» վիպակի առանձնահատուկ գծերից մեկն այն է, որ հեղինակը հափշտակության բուն թախով ու պաթոսով է նկարագրում հայրենի բնաշխարհը, որի ծոցում անցել են իր մանկության տարիները: Նա ստեղծում է հմուտ նկարչի վրձինին վա-

լել դունեզ պելլգաժներ: Հիշենք իրենց ազարակում
եղած ջրալազանի նկարագրութիւնը:

«Իմ մանկութիւնը,— գրում է նա,— անցել է
այդ ազարակում, մարմարյա այդ ավազանի եզրին,
անցել է ազալնու սպիտակ թևերի վրա:

Դիշերը կապույտ երկնքից այնքան աստղեր
էին թափվում նրա պայծառ, աստղասարսուռ
խորութիւն մեջ:

Յերեկը արեգակը լողում էր նրա մեջ, կարծես
զովանում նրա ցուրտ ջրերում, իսկ գիշերը
տիեզերական էր, խորհրդավոր, խորի՞ն, խորի՞ն...

Դիշերը սպիտակ հատակը կապտանում
էր, ջուրը մուգանում և աստղեր, բլուրավոր
աստղեր: Լուսթչմն, անսահման լուսթչմն: Ուռի-
ները կանում էին ավազանի վրա, ամբողջ ազա-
րակի ծառերը շշնջում էին. հանկարծ մի ասուպ
ճեղքում էր ավազանը և կորչում: Համատարած,
մեծ-մեծ թևերով գիշեր, երկար, համատիչուռ
մի երազ, կապույտ, մուգ-կանաչ և վերևում
սպիտակ ամպեր: Կապույտ երկնքից կարծես
կաթկթում էր շիթ առ շիթ, եղնիկի արցունքների
նման, անխմանալի մի բան, դողի նման, սարսուռի
նման ծայր էր առնում, տարածվում էր տիեզեր-
քում:

Մրդեր, մրդեր, մրդեր, որ դուլն էին ճշում,
խոտը հրախառ կանաչ, կանաչի մեջ կարմիր կա-
կաչներ: Սարալանջ, որ ներկվում էր արեալին
արլունով, սարալանջի ետեր կապույտ լեռներ, այդ

լիոնների գրկում բարձր, ջինջ, փիլիսոփայ մի լին, կարծես բյուրավոր մանկական աչքեր էին քրթթում:

Բնության նկատմամբ այդ հորդարուն զգացումներով են շնչում գրքի շատ էջեր՝ գյուղի գիշերվա և հատկապես Օվա Բաղլարի կոչված այգիների նկարագրութլունները, որտեղ արված է մի ամբողջ հեքիաթային, իդիլիկ կյանքի պատկեր:

Անհրաժեշտ է նշել, որ բնության այս նկարագրութլունները քննադատութլան մեջ դիտվել են որպես անցյալի իդեալականացման միտում: Չի կարելի ժխտել, որ Թոթովենցը ներշնչանքով է խոսում իր ծննդավայրի մասին, իդիլիկ գույներով է նկարագրում ոչ միայն բնութլունը, այլև իր մանկութլունը, բնատանկան միջավայրը: Բաց դա ոչ մի կապ չունի անցյալի միտումնավոր իդեալականացման հետ: Ինչպես կտեսնենք, Վ. Թոթովենցը ամենաքն խոտութլամբ քննադատում է այդ նույն միջավայրում դոյութլուն ունեցող հասարակական արատներն ու սոցիալական անարդարութլունները: Ինչպես հայտնի է, ամենատխուր, դառնութլամբ ու գրկանքով լի մանկութլունն անգամ հիշվում է ինչ-որ ներքին կարոտով, խոր ափսոսանքով, մի բան, որ բացատրվում է հասակառնելու և կյանքի անցողիկութլան մասին մարդկային բնական մտորումներով: Վ. Թոթովենցի խառնվածքի բնորոշ կողմերից մեկը անկեղծու-

թյունն է, և նա անկեղծորեն վերարտադրում է իր մանկական հուշերն ու տպավորությունները: Ի դեպ, գրողն ինքը եղել է այն կարծիքին, թե միայն իսկական արվեստը կարող է լինել հուզական. «Արվեստն էլ արվեստ է, և թե հուզական է», ասել է նա, իսկ այդ հուզականութունը՝ բխում է անկեղծութունից. «Միայն անկեղծ մարդը կարող է նախ և առաջ հուզվել և ապա հուզել»¹: Դժվար չէ նկատել, որ գրողի անկեղծութունը վիպակին հարողի է ճիշտ որ մի գրավիչ հուզականութուն: Զպետք է մոռանալ և այն, որ «Կյանքը...» վիպակը իր բնույթով սոմանտիկական սճի ստեղծագործութուն է, որի բնորոշ գծերից մեկը հրեուլթների, մանավանդ բնության, բանաստեղծական վերարտադրությունն է: Հիշենք, օրինակ, Արարատյան դաշտի առավոտի նկարագրութունը Բաֆֆու «Սամվել», և ծաղիկների գովքը՝ «Դավիթ Բեկ» վեպերում:

Սակայն սա հարցի մի կողմն է, իսկ հիմնականը այն է, որ «Կյանքը...» վիպակում, ինչպես ասացինք, Վ. Թոթովենցը բնավ չի սքողել պատկերվող իրականության արատները, սոցիալական չարիքները, կյանքի բարդ հակասությունները: Այդ են հաստատում գրքի մեծ մասը կազմող սյն հատվածները, որոնց մեջ հեղինակը պատկերում է դարբինների, մշակիների, աղքատ ընտանիքների

¹ «Խորհ. արվեստ», 1936, № 9, էջ 112:

տառապալից աշխատանքը տարվա բոլոր եղա-
նակներին, հասարակութեան հետամնացութեան
հետեանքը հանդիսացող «մոխրակուլտերի իշխան-
ները», փողոցներում թափառող խենթերի ծանր
վիճակը, բռնակալական կարգերի ստեղծած ազգա-
միջյան ընդհարումները, անցյալի հետամնաց
կենցաղը, սովորութեւնները և գրանցով պայմա-
նավորված բազմաթիւ ողբերգական դեպքերն ու
եղելութեւնները:

Կալվածատերերը, բարձր պաշտոնյաները և
առհասարակ ունեւոր խավերը վաչկւում են կյանքի
բոլոր բարիքները, ճարպակալում՝ անաշխատ ու
անհող, մինչդեռ աշխատավորները ձմռանն անգամ
հանդիստ չունեն: «Չքափոր տները, — պատմում է
հեղինակը, — զբաղված էին բամբակի բոժոժներ
(կնդուղներ Ս. Մ.) մաքրելով, իսկ հարուստ ըն-
տանիքները ուտում էին անզաղար և որոճում:
Մարմինները անհամաչափ ուռչում էին, վզերից
ճարպոտ մսեր էին կախվում, գառնում էին դան-
դաղ, ծուլ, քնկոտ, խոտում էին անհող, բերան-
ները ծամածուկով, ծիծաղելով անտեղի, քնում
էին երկար, կարծես զարթնում էին միայն ուտե-
լու, որոճալու և նորից քնելու համար»: Իսկ աշ-
խատավոր մարդիկ՝ դարբիններ, մշակներ, ծառա-
ներ, աշխատում են արևածագից մինչև արևմուտ,
կյանքի ամբողջ ծանրութեւնը նրանց ուսերին է,
իսկ դա սեփականատիրական հասարակութեան ընդ-
հանուր օրենքն է. բոլորն էլ դանում են, որ «մշակ-

ները պետք է աշխատանքն սկսեն արևածագին
և վերջացնեն արևամուտին»:

Վիպասանի համակրանքը աշխատավոր և
ունեղուրկ խավերի կողմն է, այդ մասին է վը-
կայում նաև այգեպան Գոգոլի կերպարը, որը
կերտված է որպես վիպակի ամենազրական հե-
րոսներից մեկը՝ իր մարդկալին աղնիվ գծերով,
դեղջկական աշխատասիրությամբ ու հոգու անա-
բատ պարզությամբ:

Պատկերվող իրականության արատներից մե-
կըն է բացահայտում հեղինակը՝ նկարագրելով
«մոխրակույտների իշխաններին»: Աղքատությունը,
թշվառությունը, որը ու անտերունչ վիճակը նրանց
նետել է «կյանքի հատակը»: Մշտապես սովահար,
կեղտի մեջ կորած, ծաղրի ու ծեծի ենթակա որ-
բերը, կթե, այնուամենայնիվ, բախտի բերումով
կարողանում են պահպանել իրենց գոյությունը,
ապա հասակ առնելիս նրանք ազավաղվում են
այն աստիճան, որ դբաղվում են գողությամբ,
մարդասպանությամբ: Յուրադրելով կյանքի «հա-
տակը», արձակագիրը իր քննադատության սլաք-
ները ուղղում է պետական իշխանության, «բա-
բեպաշտ» կրոնավորների, «բարեգործ» հարուստ-
ների դեմ. «Պետական, կրոնական, հասարակական
և բարեգործական ոչ մի կազմակերպություն գո-
յություն չունի, որ մտածեր, այդ «իշխանների»
մասին»: Նա սուանձին ջերմությամբ է հիշում
«մոխրակույտի իշխաններից» մեկին՝ Ալուն՝ միջա-

վայրի խոր խմացությամբ ցույց տալով նրա բարձրացումը «կյանքի հատակից»։ Արդեն հասակ առած, իր աշխատանքով ապրող Ալու նկատմամբ շարունակվող արհամարհանքը նրան մղում է անցյալը մոռացության տալու ուղղությամբ որևէ ելք որոնելու և այլ ելքը նա գտնում է։ Ձևաճառով կրոնապաշտ, նա բորիկ ռոմներով ուխտ է դնում Մեքքա և վերադառնում որպես «նոր մարդ», «մարգարեի ընտրյալ»։ Նրան սկսում են անոխանել Ալի բեյ։ Մոխրակույտի մեջ մեծացած Ալին սկսում է անհագուրդ վայելիկ կյանքը, ապրում է «անիմանալի ճոխության, շռայլության և շվայտության մեջ», յուրովի վրեժ լուծելով անարդար հասարակությունից։ Հեղինակը չի արդարացնում կեղծիքը, նպատակին հասնելու համար միջոցների մեջ խրտրություն չգնելը, բայց մեղադրում է ոչ թե Ալուն, այլ տիրող բարձերն ու միջավայրի կույր սնահավատությունը։

Այդ մեղադրանքը ավելի ուժեղ է հնչում վիպակի այն հատվածներում, որտեղ Վ. Թոթովենցը վերհիշում է կողք-կողքի ապրող հայ և թուրք աշխատավորների միջև բռնակալության սերմանած ստեղծյան ու թշնամանքի մասին։ «Չար բռնակալության դարձուրելի պատկերն» են ներկայացնում վիպակի մի շարք դրվագներ. հրապարակորեն գլխատվում են բռնակալության գեմ բողոքող հայերը, ձերբակալվում ու բանտ են նետվում թուրք հեղափոխականները։ Մի հայ երիտա-

սարգ, վրիժառությանից կուրացած, սպանում է իր ուսուցչին, բայց կասկածում են թուրքերի վրա: Ահմեդ Չավուշը խանդի հողի վրա սպանում է իր կնոջը և ամբաստանում հայերին: Կտորը կես գնով և խաղողը ձրի պահանջող թուրքերը, մերժում ստանալով, ծեծում և դատի են տալիս հայ խանութպանին ու այգետիրոջը: Հայերը, հարմար առիթ որոնելով, սպանում են թուրքերին, վերջիններս բանտերը լցնում են հայերով և այլն: Եվ այդ բոլորը տեղի է ունենում միայն այն պատճառով, որ սուլթանհամլոզյան արյունոտ ուժիւժը շիկացնում է մթնոլորտը, առեւության թույն ներարկում խաղաղ հարեանների գիտակցության մեջ: Այս երևույթները, որոնց հետևանքով «ամբողջ քաղաքը դարձել էր մի գերեզման», բնորոշ էին ժամանակի արևմտահայ իրականությանը, որտեղ նյութվում էր առաջին լմպերիալիստական պատերազմի ժամանակ տեղի ունեցած եղեռնը: Վիպակում կան մի քանի՝ վերհուշի ձևով արված պատմություններ, որոնց մեջ ցուցադրված են եղեռնի դարձուրելի հետևանքները: Ահա արդ հուշերից մեկը, որը մի սրտառուչ լակոնիկ նորավեպ է հիշեցնում:

«Հիշում եմ մորաքրոջս աղջկան՝ Ռերեկային:

Մեծդի, առողջ, ժիր, շարժուն, մտացի և պոետ մի աղջիկ էր Ռերեկան, որի կապույտ և խոշոր աչքերը միայն բավական էին, որ կարելի լիներ վերականգնել խորատկված երկինքը:

Այդ երկինքը խորասակվեց Ռեբեկայի լուսաբացի բարձր և սպիտակ շուշանների վրա: Տարան նրան արարական անասպատները... լսեցի անավոր մորմոքով, որ նրա արևային ճակատի և այտերի վրա խաղեր են գրոշմել...

Քույր, խոնարհվում եմ քո զարհուրելի ճակատագրի առաջ...

Ընդունիր քո եղբոր արցունքը...»

Թախծի ու ակորուժյան շնչով է գրված նաև Բենույի քույր Վերոնին վերաբերող հուշը, «զարհուրելի ճակատագրի» զոհերի մասին հյուսված գրքի այն սեզմ, ազգեցիկ, «զարմանալի հեքիասթը», սրանզ դառն հեղնանքով, կեկիծախառն «վշտի ծիծաղով» հեղինակը հիշեցնում է, թե ինչպես սուլթանական արչունտա դահիճները, Վիլհելմյան սպիտաներն ու իմպերիալիստական մեծ տերությունները կաղմակերպեցին հալկական մղձավանջային սպանդը, իսկ հետո գերազույն ցինիզմով սկսեցին հոհալ «ոսկորների և մոխիրների վրա»:

Հայրենասեր գրողը սուր ծաղրի է ենթարկում ժողովրդի ոչուն խորթ ու անհարազատ այն տարրերին, «քաղաքակիրթ աշխարհի» «մուսնեախկներին», որ սրոշ ժամանակով հեռանալով ծննդավայրից, վերադառնում են՝ գլխի տեղ գլխարկը փոխած, ձևանում են «կրթված», «կուլտուրական», մինչդեռ տարածում են կեղտոտ բարքեր, «կուլտուրական հիվանդություններ», առիթ դառնում ժանր ողբերգությունների: Այդպիսին է Ամերի-

կայից վերադարձած պարոն Զոնր: Ընտանիքը՝ կնոջը և երեխաներին շուրջ 18 տարի լքած, Հովհաննեսը ամերիկյան «գրախոտավայրում» հյուժվում է Ֆիզիկապես, եղծվում հոգեպես, վերադառնում է միմիայն ազգանունը փոխած և թշվառ, ալլանդակ վիճակում, բայց ձեանում է «բարոյականության ասպետ», փորձում է սպանել անմեղ կնոջը, նրան մեղադրելով անբարոյակաճության մեջ: Պաշտպանելով մոր պատիվը, նրա գտն ու ազնիվ աշխատանքով մեծացած որդին, գայրույթի բուռն պահին, ստիպված է լինում սպանել հորը: Ահա մի երեւոյթ, որ վիպասանը ճիշտ կերպով որակում է որպես «ահալոր տրագեդիա»:

Պարոն Զոնից հետ չի մնում նաև Էջ Օվանեսը, որը «ազատ աշխարհից» վերադառնում է որպես պարոն Հովհաննես, գրել է ոսկի ատամներ, բայց հոգով մնացել է նույն կոպտությունը, եթե չհաշվենք «կրթված» ձեանալու համար՝ խոսելիս արած ծամածոտ թյունները և ոսկե ատամները ցուցադրելու նպատակով տեղին ու անտեղի ալլանդակ ծիծաղը:

Վիպակում զգալի տեղ են դրավում գավառական կյանքի «հնացած, փտած սովորություններին», կենցաղի, բարքերի հետեանքը հանդիսացող ոգրերգությունները: Այդ բարքերը թույլ չեն տալիս, որ ամուսնանա Ալեքը, որովհետև իրենից մեծ եղբայրը ինչ-ինչ պատճառներով մնացել է ամուրի: Տգեղ սովորության դոճ է գառնում Սողո-

մտնը, որն ամուսնութեան առաջին գիշերը, ըստ արաբիցիայի կազմակերպված չարահնչիութեաններին չգիմանալով, սպանում է մի երեխայի: Հետամնացութեան հեռանքով փողոցներում թափառում և ծաղրի են ենթարկում առանց այն էլ կլանքի կողմից ապտակված, ծաղրված խենթերը: «Գալստական քաղաքակրթութեանը, որ ամեն մի հնացած, փտած սովորութեան համար, ինչ-որ բարոյականի համար մարդկանց կախաղան էր բարձրացնում, — գրում է վիպասանը, — չուներ ոչ մի տեսակի բարոյական՝ դեթ խղճալու այդ տարաբախտ մարդկանց: Այդ քաղքենիութեանը հրճվում էր, երբ երեխաներն ու անկիրթները սկսում էին դիվալին խաղերը խենթերի հետ»: Դեռևս օրորուցում երեխաներին նշանելու սովորույթի գոհերն են դառնում Վերոնիկան, Հրաչը և Վահրամը, որոնց ողբերգական սիրտ պատմութեանը նվիրված հատվածը ինքնին մի համառոտ ու դառնակակիծ սիրավեպ է հիշեցնում:

Սրբապործված արաբիցիաների ողբալի հետեւիվանքները ասանձնապես վարպետորեն վերարտադրված են աղավնիներ խաղացնող Ակորի պատմութեամբ («Աղավնիները»): Դա նույնպես ինքնին մի ինքնուրույն պատմվածք է՝ գրված մարդկային հողերանութեան խոր իմացութեամբ: Յնցող տրագիկա է ապրում Ակորը միմիայն այն պատճառով, որ «աղվնիկ խաղցնելը» համարվում է «ամենաստոր գրադմունք», աղավնիներ պահողին

աղջիկ չեն տալիս, նրա աղջիկը չեն ուզում, շա-
 րունակ անպատվում են, հաշոյում, ծաղրում: Ոչ
 ոք չգիտե, թե ինչու են է աղավնիների «մեղքը»,
 ավելին՝ «աղավնին գովաբանվում է իբրև անմե-
 ղության նշան բոլոր երգերում», լավն ու գեղե-
 ցիկը հաճախ են համեմատում աղավնու հետ, երե-
 խայի անմեղությունը և գեղեցկությունը շեշտելու
 համար նրան անվանում են «ճերմակ աղվնիկ»: Ճիշտ է,
 աղավնիների պատճառով երբեմն մար-
 դիկ, նրանց տերերը, կոխում են, արյուն թափում,
 սակայն «Ի՞նչ կապ ունենա աղավնիները մարդ-
 կանց պատվի, գիբքի և չարության հետ: Նրանք
 ճախրում էին արևի շողերի ծովում, շողերի հեշ-
 տադին սլիքներում, ինչ փուլթ, թե ներքևում
 մարդիկ արյուն են թափում և թափված արյան
 հանցանքը փաթաթում իրենց սպիտակ և անմեղ
 վզերին»: Ակորի ողբերգության պատճառը քարա-
 ցած սոփորություններն են, որոնց հետևանքով
 տանն է մնում նրա հասունացած ու գեղանի
 դուստրը և գառնում անվերջ հաշոյանքների առար-
 կա: Նրա հոգում ուժգին պալքարում են սիրո
 դժգոհմունքները անմեղ թռչունների և նույնքան
 անմեղ աղջկա նկատմամբ, նրա սիրաը հավասա-
 րաչափ կսկծում է թե տանը մնացած ու հաշո-
 յանքների ենթակա դատեր, թե իր կյանքի էու-
 թյունը հանդիսացող սպիտակափրփուր աղավնի-
 ների համար, որոնցից զրկվելով միայն կարող է
 փրկել աղջկան: «Ակորը ցնցվում էր, մարմինը

փուշ-փուշ էր լինում, երբ կինն աղջիկ զավակի խոսքն էր մեջ գցում: Նրա հոգու առաջ կանգնում էին կաթնագույն աղավնիներն ու կաթնագուլն, սև մազերով աղջիկը և չէր կարողանում ազատվել մեկնումեկից, մռայլվում էր, տանջվում, թախիժը, թանձր մշուշի նման, իջնում էր նրա ճակատի վրա»:

Համակող ջերմությամբ նկարագրելով աղավնիների գեղեցիկ խաղը կապույտ եթերում, նրանց նազելի քայլքը կտուրների վրա, գրսևորելով Ակորի՝ «պեխառն գլխով մանուկի» անցողիկ ուրախությունն ու անսահման տխրությունը, վիպասանը մի առանձին վարպետությամբ է պատկերում նրա վերջին քայլը՝ աղջկա համար աղավնիները զոհելու ուղղությամբ. ընդունելով հաստատ որոշում, նա բարձրանում է կտուրը, բաց թողնում աղավնիներին, հմայված դիտում նրանց վերջին ճախրանքը: «Ակորը լուռ կանգնեց մի պահ, հետո գարձավ հեռավոր սարերի ետև մայր մանող արևին, հանեց ֆեսը, բռնեց աղավնիներից մեկը, քաշեց դանակը...

Թացրեց աղավնիներից մեկի գլուխը:

Արյունը ժալթքեց նրա կրծքի սպիտակ շապիկի վրա:

Ձեռքերը դողում էին:

Բռնեց երկրորդ աղավնին, բայց ձեռքերը թուլացան, դանակն ընկավ գետին...»:

Որքա՞ն բնորոշ է, որ աղավնիների համար

սեփական արյունը չխնայող Ակորը, որի ձեռքերը չեն գողացել հակառակորդների վրա դանակ քաշելիս, ընկձվում, թուլանում է, մանկան պես լաց է լինում աղավնիները գոհելիս: Եվ նույնչափ բընական է, որ ծնողական սերը հաղթող է հանդիսանում:

«Կյանքը հին հուլմենական ճանապարհի վրա» վիպակը ընդգրկում է բազմազան ու հարուստ մի կյանք, ուր, արդեն նշված դեպքերից, դեմքերից ու երևույթներից բացի, պատկերված են նաև գավառական իրականության ուրիշ, ոչ պակաս էական կողմերը, այդ իրականության ուրիշ, ոչ պակաս բնորոշ ներկայացուցիչները: Այլպես են, օրինակ, Հակոբը՝ իր Մարան ձիու և ամուսնության պատմությամբ, գալառացի, համառ, իր ասածի, հրամայելու միայն սովոր պապը՝ իր «ոսկեզօծ ամբարտալանությամբ», չար, բամբաստան, կախարար հորաքույրը, թվաբանության ուսուցիչը՝ իր սպիտակ էշով, Աշուր վարժապետը՝ իր ուսուցման մեթոդներով, «ազգային ջոջերի» թվին պատկանող Նիկողոս աղան և նրա «արկածը» անառակ կին Մարիցալի հետ, «ասածո հրամանով համրացած մարդը», որը սուրբ է ձևանում ոսկի դիզելու համար, հալալ աշխատանքից խուսափող, արդահատելի գործով զբաղվող Մանուկ փեսան, ուղտերի քարավանը և այլն: Սրանցից լուքանչուրը վիպակում ունի իր տեղը և որոշակի դերը՝ կյանքի բազմազանությունը ցուցաբերելու տեսակետից,

ամեն մեկը մի առանձին ամբողջական պատկեր է, կերտված մերթ ջերմ խանդաղատանքով, մերթ խոր ցավով, մերթ թխուրդով, մերթ զվարթ հումորով: Դրամատիկ-ոպերերգական հատվածներից բացի, վիպակում կան նաև կոմիկական գրուբժյուններ (Մանուկ փեսայի՝ էջ վաճառելու պատմությունը, «սուրբ հոգի» բաժանելու տեսարանը, էջ Օվանեսի մահն ու թաղումը, Նշան աղայի և ամուրիների արկածները), որոնք մի առանձին գրավչություն են հաղորդում երկին:

Վ. Թոթովենցը բանաստեղծական ներշնչանքով է գրել իր վիպակը, հոգևպարար արվեստով է պատկերել կյանքի երևույթները, վարպետությամբ է գրսևորել մարդկային հոգու բազմազան նրբերանգները՝ սկսած մանկական ջինջ հոգու սլացումներից ու դառնություններից մինչև սիրո և ատելություն, վշտի և ուրախություն բուռն ու փոթորկահույզ զգացումները: Վիպակն աչքի է ընկնում լեզվական բարձր կուլտուրայով ու պատկերավորությամբ: Ինչպես պահանջում է ճշմարիտ վարպետությունը, Վ. Թոթովենցը երբեմն միայն մեկ նախադասություն, մի գեղեցիկ ու ինքնատիպ համեմատություն միջոցով կարողանում է ընույնապրել մարդկանց ու երևույթները: Այսպես, քաղաքում սուլթանական լաճակալությունը սանդեղ է «զարհուրելի պատկեր», գլխատել է մի քանի հեղափոխականների և սարսափից ահաբեկված մարդիկ պահպա-

նում են քար լուծելուն: Այս մասին գրքում ընդամենը ասված է. «Ընդհանուր լուծելուն է օրում, կարծես ձյունը մի վիթխարի դագաղի սպիտակ սավան է»: Քրիստիանի Ֆիզիկական ու հոգեկան գեղեցկությունը գրողը կենդանացնում է այսպիսի պատկերով. «Քրիստիանն մի սասղ էր՝ վար: Ընկած երկնքից ու խոշորացած»:

«Կյանքը...» վիպակում, ավելի քան սրե է այլ երկում, ցայտուն կերպով դրսևորված է Վ. Թոթովենցի ստեղծագործության մեկ ուրիշ կողմը. գրողը հմտորեն օգտվում է ժողովրդական դիպուկ, թեալոր արտահայտություններից, առածներից ու սասցվածքներից, հերոսների խոսքը և զրույցները համեմատում է նրանց միջավայրին, հասակին, մտածողությանը բնորոշ, դիպուկ, հյուսիսյ լեզվաձևերով, ասույթներով ու համեմատություններով. «Կնիանը Այմատա մը կրտե, Այմատա մալ բերնեն կիչնի», «Օո, խնլատ, քեզի էֆնիեի (քթախտախ) պես քիթս կքաշեմ», «Գիտես քի լուսնկայեն է ընկեր», «Սոսքդ շեքերով կտրիմ», «Մեր ճինսեն Պողոս-Պեյրոս չեկար», «Բոշայից փաշա դուրս չի դա» և այլն:

«Կյանքը հին հոովմեական ճանապարհի վրա» վիպակի հետ մի շարք կողմերով՝ թեմատիկայով, նյութով ու արտահայտչական միջոցներով սերտորեն առնչվում են «Բաց-կապույտ ծաղիկներ», «Գովառական ողբերգություն», «Կյուրեղ աղայի մահը», «Յըլլըղ» և ուրիշ պատմվածքներ, որոնք

պատկերում են նույն ժամանակի ու միջավայրի կյանքն ու կենցաղը:

«Բաց-կապույտ ծաղիկներ» գողտրիկ պատմըվածքը Վ. Թոթովենցի ստեղծագործութեան և առհասարակ սովետահայ արձակի վարդերից է: Պատմվածքն աչքի է ընկնում պատումի բյուրեղյա հատակութեամբ, կուռ սճով ու հոգեբանական խորութեամբ: Երկու խոսքով նրա բովանդակութեանը այս է. խախտելով բարոյականութեան մասին նահապետական կյանքի սրբազործած արաղիցիաները, համեատագործ Թորիկը ամուսնանում է հասարակաց անից վերցրած մի աղջկա՝ Անժելի հետ: Այդ նշութը հոգեբանական ցնցոյ ուժով մշակել է նաև Մ. Գորիկին «Страси — морласти» պատմվածքում: Թոթովենցը, սակայն, դրսևորել է ինքնուրույն վարպետութեան, այդ դեպքի շուրջը հյուսելով խորապես հուզիչ գրվածք: Պատմվածքի սկզբնամասում նուրբ հոգեբանի ու արվեստագետի գրչով են պատկերված մանուկ Թորիկի սրբանալը, մորաքրոջ ու փեսայի խնամքին մնացած երեխայի հեղ ու խոնարհ բնավորութեանը: Գպրոցում հաջողութեան չունենալով, Թորիկը աշակերտում է իր մորաքրոջ ամուսին փալանճի (համեատագործ) Գրիգորին, յուրացնում է նրա արհեստը և փեսայի մահից հետո շարունակում է աշխատել նրա խանութում: Հասունանում է Թորիկը, լավ փող է վաստակում, հարազատ ծնողի պես պահում է մորաքրոջը՝ Թուրվանտա Քորոյին և սկսում է

մտածել ամուսնանալու մասին: Արհամարհելով «էջի փառան կարող» Թորիկին, ծաղրելով նրա արհեստը, վերնախավերի՝ կալվածատերի ու վաճառականի ընտանիքում լսել անգամ չեն ուղում Թուրվանտա Քորոլին: Ինչ վերաբերում է արհեստավորական խավի ներկայացուցիչներին՝ հացագործին, որմնագիրին, մսաշործին, կոշկակարին, որոնց դիմում է Թորիկի մորաքույրը, ապա սրանք հետևում են վերնախավերի ընտանիքներին, չեն ուղում «հետ մնալ» նրանցից, արժանապատվութունից ցածր են համարում զիջել մեկը մյուսին, մանավանդ որ միամիտ մորաքույրն էլ ամեն անգ պատմում է նախորդ ընտանիքներում՝ մերժում ստանալու մասին: Նույնիսկ բնակավայրի ամենաաղքատ մարդը՝ զուգարանների մաքրող Օվակիմը (Աղքատ Ղազարոսը), մերժում է ազջիկ տալ Թորիկին, քանի որ ինքն էլ ունի հարստանալու հուանկար: Եվ ահա Թորիկը ամուսնանում է նույնպես որբ, կարիքից ու աղքատութունից կյանքի հատակը նետված Անժելի հետ: Դրանից հետո «քաղաքում ծայր առավ և աճեց գարշելի բամբասանքը»: Ըսկըսում են Թորիկին մատով ցույց տալ, արհամարհել, հարեանները խղում են կապերը, գաղարում են նրանց հետ խոսել: Սակայն կարճ ժամանակում «անմեղ, հաշտատարիմ, հնազանդ և հազար ու մի հնարներով օժտված» Անժելը մի նոր շուք է տալիս Թորիկի անդուլն խրճիթին և փոքրիկ «երկու-երեք սավան մեծությամբ» պարտեզին: Հող-

նում են բամբասող բերանները. Անժեղի աչք
ժակող — առաքինությունը, նրա ճաշակը, նրա
շնորհքները հեղաշրջեցին մտքերը: Բամբասասեր
շրջապատը սկսում է նախանձիկ Թորիկի երջանիկ
ընտանիքին, նույնիսկ հիանալ նրանով, թեև, իհար-
կե, ոչ հրապարակորեն:

Պատմվածքի հիմնական արժանիքը այն է, որ
Վ. Թոթովենցը հանգես է բերում չափի զգացում,
հմտորեն գրեկորելով ժամանակի բնորոշ վերա-
բերմունքը՝ ընդունված բարոյական նորմերը խախ-
տող զուլջի նկատմամբ և, որ հիմնականն է,
կերտելով Թորիկի և Անժեղի հաջողված կերպար-
ները:

Թորիկը, ըստ հեղինակի ընդթաղբուխյան,
«կոպիտ ու անտաշ» է Փիլիկապես, զարգացած չէ
մտավորապես, սակայն նրա կրծքի տակ բարա-
խում է մի ջերմ սիրտ, որն ավելի է ջերմանում
անկեղծ սիրուց: Նա ունի կայուն կամք, իր մեջ
ուժ է գտնում արհամարհելու բամբասանքներն
ու արհամարհանքը, ինքն էլ հանգես է գալիս
իրբև կյանքի արատներից մեկի՝ թաքուն, բայց
խսկական անբարոյականությունը մերկացնողի գե-
րում:

Վարպետորեն են գրեկորված Թորիկի հույ-
զերը Անժեղի մոտ գնալիս, վախը՝ դեռ տեղ չհա-
տած, միայն իրեն հատուկ զրույցը Անժեղի հետ
առաջին իսկ հանդիպման պահին, բռնկվող սիրո
կալձը նրա հոգում: Մահամանափակ է Թորիկի մը-

տավոր կարողութիւնը, հարուստ չէ բառապաշարը, սակայն անսահման է այն սերը, որ նա տածում է դեպի Անժեկը. դրան համապատասխան էլ մեծ է միայն մի քանի բառերով («դառնուկա», «հրեշտակա», «աղվորա») արտահայտած նրա քրնքույշ զգացումների ուժը: Անժեկը ևս մնում է հիշողութիւն մեջ որպէս մարդկային անաքինութիւնների ու բարձր հատկութիւնների՝ աշխատասիրութիւն, ընտանեկան հովատարմութիւն, անկեղծութիւն, քնքույշ սիրտ մարմնացում: Նա հուզեպէս հարուստ է ու անաղարտ, ֆիզիկապէս՝ դեղեցիկ ու թովիչ: Նրա կերպարով գրողը ցույց է տալիս, որ եթէ չանվանարկած, բայց էապէս անբարոյական ընտանիքները փտում են ներքուստ, ապա իսկական գոհարը չի կորցնում իր փալը նույնիսկ ցեխի մեջ. «Անժեկը առաքինի էր բառի լաջն իմաստով, ոչ մի կին այս աշխարհում այնքան հովատարիմ չէր եղել դեպի իր ամուսինը, որքան Անժեկը, կապույտ ու նվազիտ աչքերով և ոսկեգուն ծամերով այս աղջիկը»:

«Բոց-կտարույտ ծաղիկներ» պատմվածքի ամենահուզիչ մասերը նվիրված են Անժեկի հոգեկան տարրեր ապրումներին: Ամուսնութիւն մասին Թորիկի առաջարկը նրան թվում է սովորական հաճոյախոսութիւն, որպիսին նա շատ էր լսել իր թովչանքը վայելողներից, բայց միաժամանակ կանացիական բնագոյով զգում է «այդ կոպիտ ոսկորներով մարդու անկեղծութիւնը և

զգացումի նրբութիւնը» և ուրախութեան ջինջ արցունքներ են կախում նրա աչքերից, վառ ճանապարհից դուրս գալու հնարավորութեան հույսը նրան մղում է փարվել Թորիկին մի առանձին «ջերմութեամբ և գորովանքով»: Համոզվելով, որ մեկընդմիջա ազատված է ատելի միջավայրից, Անժելը իր անհուն երախտագիտութեանը միացնում է նվիրական սերը գեղի Թորիկը և նրա մորաքույրը, նոր տեսք ու հմայք է առլիս տանը, պարտեզին, ընտանեկան կյանքին և վայելում այդ ոչ շքեղ ու փարթամ, բայց ազնիվ ու մաքուր ընտանեկան կյանքի երջանկութիւնը: «Կյանքը Անժելի համար բաց-կապույտ ծաղիկների բույրն էր, բաց-կապույտ ծաղիկների շողը»:

Հաջող բնութագիր է ստացել պատմվածքում նաև Թորիկի մորուքույրը՝ Թարվանտա Քորոն, մասնավորապէս լավ են գրանորված Անժելի նկատմամբ նրա վերաբերմունքի նրբերանգները: Թորիկին հարսնացու որոնելիս բոլորի կողմից մերժում ստացած այդ կինը հրճվանքով է ընդունում Անժելին, հիանում է նրա գեղեցկութեամբ, ապա, խմանալով եղելութիւնը, ուղղակի սարսափում է՝ քաջ գիտենալով, թե շրջապատում ի՛նչ ահալոր արձագանք կունենա Թորիկի քայլը, իսկ բամբասանքների ազդեցութեան տակ փակվում է տան չորս պատերի մեջ, ներանձնանում, ծանրորեն ապրում ստեղծված դրութիւնը: Սալբայն, հետզհետե տեսնելով հազար գույներով բացվող Անժելի

վճիտ հողին, մարդկային առաքինությունը, խոր խղճահարությամբ է. լցվում նրա նկատմամբ, մի գլխացում, որը փոխվում է «անասնման մալբակիան սիրո»:

Եթե «Բաց-կապույտ ծաղիկներ» պատմվածքում գավառական բամբաստանքները չեն ընկճում Թորիկին, փշրվում են՝ զարնվելով նրա ընտանեկան կրճանկությանը, ապա «Գավառական ողբերգության»¹ մեջ հեղինակը ռեալիստորեն ցույց է տալիս, որ գրանք, այդ բամբաստանքները, մեծավ մասամբ՝ ունենում են ծանր, ողբերգական հետևվանքներ: Խորապես գրամատիկական և հոգեբանական այդ պատմվածքի բնութանից արդեն ակնհերև է դառնում Թոթովենցի նպատակը: Նա ձրգտում է Բոմարշեի «Սեիլյան սափրիչ»-ից առնրված բնաբանի ոգով ցույց տալ, թե ինչպես բամբաստանքը, սուտ, հնարովի լուրը՝ նախ սկիզբ առնելով իբրև շշուկ, թուչում է բերնից բերան, ծավալվում հեռզհեռե, փքվում, ուռչում, վերածվում է հանրային կրեսչենդուլի, որին անկարող են դիմանալ մարդիկ:

Պատմվածքի հերոսը՝ Հաջի աղան հասակն առած, բարոյապես անաղարտ մանր խանութպան է: Աշխատանքի գնալիս մի անգամ նա բոլորովին պատահաբար անցնում է ոչ թե իր ամենօրյա սովորական ճանապարհով, այլ մեկ ուրիշ փողո-

¹ «Խորհրդային գրականություն». 1935, № 4:

ցով և նույնքան պատահական ձևով մի անգամ
գլուխը վեր է բարձրացնում: Թեև նա 35 տարի
չէր եղել այդ փողոցում, չգիտեր փողոցի նոր
բնակիչներին, բայց այդտեղ ծնունդ է առնում մի
շշուկ, թե Սամբուրենց Հաջի աղան փոխել է իր
ճանապարհը, որպեսզի տեսնի Աղքատենց հարս Փայ-
լունին և նրան էլ նայել է՝ գլուխը բարձրացնելիս:
Մեկ տարվա ամուսնացած երիտասարդ Փայլունը
այդ օրը տանը չի եղել, սակայն «բամբասանքի
ծարավից տոչորված» կանայք սուտ լուրը հաղոր-
դում են միմյանց և մինչև երեկո այն ստանում
է այսպիսի բովանդակութուն. «Տեսե՛լ էին Սամ-
բուրենց Հաջաղային երիտասարդ ոսկերիչ Տիգրա-
նի տնից դուրս ելնելիս և տեսել էին նաև, որ
մանկամարդ հարսը նրա հետևից կամացուկ դուռը
փակել է»: Նույն լուրը Հաջի աղայի կնոջն է հաս-
նում արդեն այլ բովանդակութամբ՝ թե դա սուա-
ջին հանդիպումը չէ, թե Հաջաղային ծաղրուծանա-
կի են ենթարկել փողոցում և այլն:

Եվ ահա սկսվում են Հաջի աղայի հոգեկան
ծանր ապրումները. խանութում նա նկատում է
ինչ-որ տարօրինակ վերաբերմունք իր նկատ-
մամբ, տուն վերադառնալիս նրան ուղեկցում են
մարդկանց անսովոր նայվածքներն ու գաղտնի
փափսուկները: Ենթադրելով, թե տանը որևէ բան
է պատահել, նա արագացնում է քայլերը, զանգը
տալիս աճապարում է, դրանցով ևս խախտելով իր
սովորությունները, հանդիպում է կնոջ զարմացա-

կան հայացքին: Գնալով ուժեղանում են բամբասանքները, ծաղրուծանակը, անբարյացակամ վերաբերմունքը, Հաջի աղան նույնիսկ տանից դուրս գալ չի կարողանում, ընկնում է մղձավանջալին, ողբերգական դրության մեջ: Եվ ահա իր տառապանքներին վերջ տալու համար, նա կախվում է, քանի որ այլ ելք չի գտնում:

Պետք է տեսլ, որ մասամբ անհամողիչ է ապարանջանի պատմությունը, պատահականության մոմենտը որոշ դեր է խաղում պատմվածքում, սակայն դրանք մասնակի թերություններ են. հեղինակին հաջողվել է հիմնականը՝ ցույց տալ, թե ինչպես շշուկը իրոք դառնում է որոտալի աղաղակ և խլում մարդկային անմեղ զոհեր, ողբերգության հասցնում երկու անմեղ ընտանիք:

Հոգեբանական մի ուշադրավ պրոբլեմ է շոշափված «Կյուրեղ աղալի մահը»¹ պատմվածքում: Գրողը փորձել է ցույց տալ, թե ինչպես կղքալը լուրացնում է հարազատ քրոջը հասնող հայրական ժառանգությունը, բայց զգալով իր գործած անարդարության ծանր հետևանքները, ինչպես նաև քրոջ սուր անեծքի ազդեցութամբ, կորցնում է հոգեկան հավասարակշռությունը և ողբերգական ապրումներից հետո մահանում: Պատմվածքում առանձնապես հաջողված են Կյուրեղ աղալի ներքին ապրումները, ստրասիբը՝ անփառունակ մահ-

¹ «Նորհրդային արվեստ», 1934, № 3:

վան հեռանկարից, գառանցյալքների մեջ արված ինքնամերկացումները, զրույցները իր նման մեկ ուրիշ տիպի՝ Ավետիս Էֆենդիի և քահանա Տեր-Համբարձումի հետ: Սակայն հիմնավորված չէ նրա հոգեկան վերափոխությունը: Բանն այն է, որ Կյուրեղը քաղաքի «մեծ գողերից» մեկն է, որը «կողոպտել էր ամեն տեսակի մարդկանց, անողնական, կռնակ չունեցող մարդկանց, անխղճորեն, առանց մի վայրկյան իրեն հաշիվ տալու՝ պլսկել էր սրբերի, ալրիների, ծերունիների, չէր պատահել մի մշակ, որի հախը կերած չլիներ»: Ինչպես տեսնում ենք, նա մի յուրովի Զիմզիմով է, որը խաբել է աջ ու ձախ, գառարաններում, սևիական սանն ու խանութում, նույնիսկ քրոջ անեծքից հետո՝ նույն օրը խաբում է քահանային: Պարզ է, որ գառարկ անեծքը, վերացական խոսքերը չէին կարող նրան դրդել կողոպտածներին վերագարձնելու յուրացրած ոսկիները, վերջին կոպեկները տալու խորամանկ քահանային և հասնելու մահվան դուռը: Նա ինքն էլ դարձանում է, թե ինչո՞ւ մենակ ինքն է ընկնում հոգեկան տառապանքների մեջ, երբ գողանալը, գրնելը իր նմանների միակ գործն է և ոչ ոք չի կրում նման պատիժ:

Կյուրեղ ազալի հոգեկան գրաման տրված է մարդկային հոգեբանության նրբերանգներին գիտակ գրողի գրչով, սակայն, դժբախտաբար, գիտարվեստական համոզչականության անհրաժեշտ ուժ չունենն այդ դրամայի առաջացման մոտիվները,

գրգապատճառները, ուստի և պատմվածքում շուշափված հիմնական պրոբլեմը՝ հանցանքի ծանրութեան գիտակցութեան հետեանքով առաջ եկող ողբերգութիւնը, չի ստացել համոզիչ լուծում:

«Կյուրեղ աղայի մահը» պատմվածքը առավել ուշագրտով է այն տեսակետից, որ նրանում դրանվորված է Վ. Թաթուլենցի ստեղծագործութեան համար հատկանշական մի մոմէնտ: 'Իս այն է, որ իր կերտած հերոսների մահն անգամ՝ նկարագրելիս հեղինակը ցուցաբերում է որոշակի վերաբերմունք, նույնը փոխանցելով նաև ընթերցողին: Կյուրեղ աղան բացասական կերպար է, և նրա նկատմամբ առավել խոր ատելութեան առաջ բերելու միտումով Թաթուլենցը նրա մահը պատկերում է իբրև մի ծանր, մղձավանջային, տանջալից պրոցես, յուրովի զարգացնելով այն միտքը, թե նմանները արժանի չեն նույնիսկ հանգիստ մահվոն: Մինչդեռ իր գրական հերոսների մահը նա ներկայացնում է որպես հանգիստ, խաղաղ նինջ հիշեցնող մի պրոցես, առանց ներքին ցնցումների ու տառապանքների. հիշենք Հաջի Օհանեսին («Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա»), համետագործ Թորիկին («Բաց-կապուլտ ծաղիկներ»), Անդրեասին («Հովնաթան՝ որդի Երևմիայի») և ուրիշների, որոնք բոլորն էլ մահանում են առանց հոգեկան տանջանքների, քուն մտնելու պես խաղաղ փակելով իրենց աչքերը:

կյանքի ու մահվան փոխհարաբերության վերաբերյալ հոգեբանական հետաքրքրական մի էություն է Թոթովենցի «Երկու գերեզման»-ը¹։ Գրվածքն ըստ ամենայնի տխուր բովանդակությամբ ունի. Ավետիս Ամուճան կորցնում է երկու կին, գալականեր չի ունենում և իր ծերության օրերի միակ մխիթարանքը գտնում է իր կանանց գերեզմաններին այցելելու մեջ։ Դրսևորելով Ավետիսի հոգեկան ապրումները, համոզելով, որ իրոք այդ արտաքինապես կուպիտ «մարդու մեջ կար ջերմագին մի սիրտ», գրողը նրա հուլիների ու մտորումների ցուցադրմամբ հաստատում է, որ մահը ծանր կորուստ է, բայց միշտ էլ հաղթողը կյանքն է հանդիսատանում։ Ամբողջ պատմվածքը շնչում է աչք կենսահաստատ, լավատեսական զգացումներով, ունի մի խոր ենթատեքստ, որի էությունը կյանքի հաղթանակն է մահվան նկատմամբ։

Վ. Թոթովենցի ստեղծագործության մեջ ուրաջն տեղ է գրավում «Հովնաթան՝ որդի Երեմիայի» վիպակը, գրողի և մեր գրականության գոհարներից մեկը։

Վիպակն սկսվում է լեռան կատարին թառած սպիտակ քաղաքի և նրա շրջապատի պատկերավոր նկարագրությամբ, շարունակվում է որպես ստեղծարար աշխատանքի ու աշխատավոր մարդու

¹ «Վերելք», 1934, № 1։

Քնարական անկեղծ և հուզիչ գովք և զեղարվեստորեն մարմնավորում է առաջադեմ, ազատարար, աշխատավորութեան կենսական շահերն արտայայտող արվեստի անմահութեան զազափարը:

Ստեղծարար աշխատանքը և աշխատավոր մարդը,— ահա այն թիման, որ բացահայտում է գրողը՝ գրականորեն արվեստագետի իր անհատականությունը: Աշխատավոր մարդու կոլտրիտային, լիարյուն կերպար է բրուտ Անգրեասը, որի մեջ գրողը խոսցրել է աշխատավոր ժողովրդի ստեղծագործ ուժը, աշխատանքային կորովը, շինարարական խանդավառութեանը: Անգրեասի հիմնական գիծը աշխատասիրութեանն է, անսահման նվիրվածութեանը իր գործին: Աշխատանքը նրա համար կենսական անհրաժեշտութեան է, ոչևորութեան ու խանդավառութեան անսպառ աղբյուր: Աշխատանքի մեջ է նա գտնում իր հոգեկան հանգիստը, աշխատանքի մեջ է, որ ավելի քան հիսուն տարի պատեցնելով «բրուտի չարիւր», ձեռք է բերում մեծ փորձ, գտնում է «խմաստուն և խոհական», դաստիարակում է աշխատավոր բրուտների մի քանի սերունդ, իր զավակներին, թոռներին հաղորդելով իր փորձն ու գիտելիքները: Թե՛ արտաքին նկարագրով, թե՛ գործերով, խոհերով ու զղացմունքներով ծերունի Անգրեասը հողի, կավի հետ կապված, «հողի անքննելի, անխմանելի ուժը» իր մեջ մարմնավորող վաստակավոր արհեստավորի կենդանի խարակտեր է, այն աշխատավորների տի-

պական ներկայացուցիչներից մեկը, որոնք ըմբռն-
 խընում են «քրտինքով հաց վաստակելու անհուն
 հաճույքը»։ Սոսքի բազմազան նրբերանգների
 հմուտ օդատարծմամբ է հեղինակը պատկերում
 հատկապես ալեհեր ծերունու հոգեվիճակը՝ մահ-
 վանից առաջ, նրա բուռն սերը իր թու հովնա-
 թանի նկատմամբ։ «Ծերունի Անդրեասը հոնքերը
 վեր առավ, կարտադին նայեց Հովնաթանի կա-
 պույտ աչքերին՝ ինչպես լեռներից հեռացող ճամ-
 բորդն է հառում լեռնալին կապույտ լճակին»։
 Ժողովրդական խմաստաթյամբ են հագեցված աշ-
 խատավոր քարտաշի որդի, «գաշտի առաջին բը-
 բուտ» և կենսական մեծ ուղի անցած Անդրեասի
 հյուժեկ գրույցները, մտորումները, որոնց մեջ
 հորդում են կենսասիրության բուռն զգացումը և
 խաղաղ, ներհուն փիլիսոփայական խոհը աշխարհի,
 մարդկանց, կյանքի ու մահվան վերաբերյալ։ «Ես
 երկար ապրեցի, — ասում է մահամերձ ծերունին, —
 այժմ էլ գնում եմ հողի գիրկը, բայց լուսինը
 մնում է, արևը մնում է, խաղողը կաճի և կշողա,
 խաղողի թուփն էլ կչորանա, բայց տակից նորն
 է ծլում, անաես չորանում եմ, բայց իմ կավից կծլի
 նորը, Հովնաթանն իմ ծիլն է, իմ դալար ճյուղը»։

Եվ իրոք, Հովնաթանը, «կապուտաչյա ու
 դանդրահեր» աղ մանուկը, ինչպես ցույց է տրվում
 վիպակի հաջորդ մասերում, դալար ճյուղի նման
 աճում է և մի նոր կատարելության է հասցնում
 բրտտի պարզ արհեստը, այն վերածելով հոյակապ

արվեստի: Հովնաթանը ժառանգում է իր պապի ստեղծագործական կորույրը, կենսաունակ ուժը, դասնում է հզոր կամքի տեր, իր գործին անհունորեն նվիրված, համառ, անընկճելի ու քանքարավոր արվեստագետ՝ քանդակագործ: Հովնաթանի կերպարի միջոցով Թոթովենցը բացահայտում է այն սոցիալական խոր հակասություններն ու անարդարությունները, որ գոյություն ունեն պատկերվող ժամանակաշրջանի իրականություն մեջ, վերարտադրում է ժողովրդի հետ կապված, կյանքը խորապես ճանաչող ազատարարձ արվեստագետի ընդվզումը աիրող անարդար բարքերի և օրենքների դեմ, նրա ձգտումը դեպի ազատություն, դեպի լուսավոր ապագան: Ինքնուս քանդակագործ պատանին նույնիսկ իրենց ընտանիքում հանդիպում է իր սիրած գործով զբաղվելու արգելքների, հեռանում է տանից, լինում օրիշ երկրներում, դառն զրկած քներ կրելով համատարեն սովորում է, կատարելագործվում, հարստանում է նրա կենսաճանաչողությունը, լայնանում է մտահորիզոնը: Ամենուր նա տեսնում է, թե ինչպես ճմարդկություն աղնվագույն մեծամասնությունը տառապում է թշվառությունից» և գալիս է այն եզրակացություն, որ «աշխարհի խորագույն սղբերգությունը ոչ թե մահն է, այլ կյանքի թշվառությունը»: Մյուս կողմից՝ նա հասկանում է, որ այդ ծով թշվառությունը հետևանք է այն բանի, որ աշխարհում «կան իշխողներ և իշխվողներ», համոզ-

վում է, որ ճնշվող, կեղեքվող մեծամասնության
 թշվառությունը առաջ է բերում աղնվազույն
 ասելություն իշխողների նկատմամբ, «գարձնում
 է մարդուն ըմբոստ և դյուցազն»։ Եվ ահա Հով-
 նաթանը իրեն նվիրում է «աշխատավոր, ստեղծա-
 լար, բայց զրկված» մարդկությանը, իր արվեստը
 լիովին ի սպաս է դնում նրա կենսական շահերին։
 Նա քանդակում է «արևի տակ կքած հողի աշ-
 խատավորին», թշվառ որբերին, անմեղ դատապար-
 սյալին, զրքի վրա հակված գիտնականին, սրի-
 կայության զոհը դարձած կուլսին։ Իր քանդակ-
 ներով նա վերարտադրում է այն ճշմարտությունը,
 որ թե՛ գեղեցկությունը, թե՛ թշվառությունը ա-
 ճում են կրկրից, ծնունդ են կրկրի և ըմբոստու-
 թյուն, բողբ է բարձրացնում սոցիալական հա-
 կասություններով լի իրականության դեմ։ Այս-
 տեղից հասկանալի է, թե ինչու իշխող վերնա-
 խավերն ամեն կերպ ձգտում են թունավորել
 արվեստագետի կյանքը, ստոր բամբասանքներ են
 հորինում նրա բարոյականության մասին, հարա-
 դասներին ստիպում են ոչ մի բանով չօգնել
 նրան, հոգևոր դասը նզովում է նրա գործը, ար-
 ցելում է դնել նրա քանդակները, պահանջելով,
 որ նա քանդակի միմիայն թագավոր, Քրիստոս և
 սուրբ առաքյալ։

Վ. Թոթովենցը Հովնաթանի քանդակների
 նկարագրությամբ վարպետորեն բացահայտում է
 ժամանակի հատկանշական կողմերը, սպա նակ

արվեստագետի ոչ միայն մեծ տաղանդը, այլև հակումները, նախասիրությունները, վերաբերմունքը երևույթների նկատմամբ, նրա խոհերն ու մտորումները, բուն ատելությունը հոգևոր ու աշխարհիկ ձրիակերների և նրանց իշխանության հանդեպ և ձգտումը դեպի լույս, ազատություն, դեպի պայծառ գալիքը: Սյգ արձաններից «ամեն մեկը, — ասված է վիպակում, — մարմնավորված գաղափար էր, կենդանի պոեզիա»: Կենդանի պոեզիա է նաև այդ արձանների նկարագրությունը հեղինակի գրչի տակ: Բերենք Հովնաթանի մոնումենտալ արձանի նկարագրությունը, որտեղ ամենայն պարզությամբ վերարտադրված է աշխատավոր մարդկության ցավերի կրգիչ, ազատատենչ և հումանիստ քանդակագործի արվեստի էությունը:

«Ահա մի բլուր, բլրի մի կողքին՝ ծերունիներ, կանայք, աղջիկներ և կրիտասարգներ, որոնց սրունքներին փաթաթված են ահաբեկված մանուկներ, մի քանի ծծկեր կրեխաներով, բոլորն էլ ցնցոտիապատ: Մանուկները մերկ, բոլորն էլ հողմածեծ և հալածական, մտերը մրրիկից գզգզված՝ դիմում են դեպի բլրի գագաթը, իսկ բլրի գագաթը բարձրանում էր մի ամենի մարդ՝ ջահը ձեռքին: Բոլոր Ֆիգուրաներն էլ ձգտում էին դեպի այդ ջահը»: Հավաքելով իր վերջին ուժերը, Հովնաթանը, գրեթե մահամերձ վիճակում, բլրի գագաթին, ամենի ու ջահակիր մարդու օտների տակ

գրում է ազատութիւնը և խաղաղութիւնը փակում
իր աչքերը: Ժամանակի փոշին և մոռացումը
սլատում են Հովնաթանի ստեղծագործութիւն-
ները: Սակայն ճշմարիտ արվեստին մահ չկա: Անց-
նում են տարիներ: Երկիրը կառուցող մարդիկ
բարձրանում են ընդերքից, շարժվում են գոր-
ծարաններից, դաշտերից, ծովերից, փշրում են
սսկյա թաղերն ու ադամանդակո՞ւն խաչերը՝
քանդում են «բռնակալութեան որջերն ու ամրոց-
ները», տապալում հին կարգերը: Եվ ահա ազա-
տագրված ճնորմարդկութիւնը հիշեց մեծ արվես-
տագետին, որ կալից և քարից կերտում էր մարդ-
կութեան թշվառութիւնը, դրկանքը և հալածան-
քը», մաքրում է թանձր փոշին նրա ստեղծագոր-
ծութիւնների վրայից:

«Թանգարանում մի մեծ դահլիճ հատկացվեց
Հովնաթանի գործերի համար, իսկ վերջին հուշ-
արձանը հանձնվեց երիտասարդ արվեստագետ-
ներին՝ սպիտակ մարմարից քանդակելու համար:
Փակ, մթին նկուղի լուսամուտները քաղվեցին,
թարմ օդը լցվեց ներս, երգեցին երիտասարդ
արվեստագետների մուրճերը ոսկյա հնչյուններով:
Երիտասարդ արվեստագետները քանդակեցին հու-
շարձանն այնպես, ինչպես մեծ արվեստագետն էր
ծրագրել — բնական մեծութեամբ:

Այժմ արդ հուշարձանը կանգնած է քաղաքի
մեծ հրապարակում, սպիտակ մարմարի տակ հանգ-

չում են Հովնաթանի ոսկորները, և բլրի ստորտում փորագրված է.

Հ Ո Վ Ն Ա Թ Ա Ն

ՈՐԴԻ ԵՐԵՄԻԱՅԻ»:

Վիպակը գրված է հուդական բուռն շնչով, ինչպես ասում են՝ սրտի արյունով, նրա մեջ դրսևորված են գրողի հորդ զգացումները, երկը տոգորված է վեհացնող սոմանտիկական պաթոսով: Վիպակում մենք տեսնում ենք Վ. Թոթովենցի ստեղծագործության մեկ ուրիշ առանձնահատկությունը. գրողը ինչ-որ անտեսանելի թեկերով ստեղծում է ներքին մտերմություն ընթերցողի և իր գրվածքի միջև, խորապես հուզում է, թվում է, թե կարգում ևս հեռավոր, բայց միաժամանակ շատ մոտ մի պատմություն, որը մատուցվում է հյութեղ լեզվով և թարմ պատկերներով:

Այդպես է նաև «Ծիրանի ծառ» գողարիկ պատմվածքը, որտեղ գրողը ցույց է տալիս, թե ինչպես անվանի գիտնականը վերհիշում է իր կյանքի անմոռանալի էջերից մեկը՝ իր առաջին սիրո տխուր ու ողբերգական պատմությունը: Գրականություն մեջ ամենից շատ տարածված և «հին» թեման Թոթովենցը բացահայտում է միանգամայն թարմ ու ինքնուրույն ձևով: Կես գիշերին իր առանձնասենյակում, գրքի վրա գլուխը հակած գիտնականը, հոգնելով ընթերցանությունից, մերթ

թրթռուն, կարոտագին գորովանքով, «քաղցրությամբ ու երանությամբ» վերհիշվում է իր անկեղծ ու սրտարուխ սերը, մերթ տխուր, մորմոքուն, «աղեխարշ և դառնակակիծ» զգացումներ են արթնանում նրա սրտի ծալքերում: Նա մի առանձին կարոտով ու ջերմությամբ է հիշում այն ծիրանի ծառը, որի տակ անցել են իր սիրալին քաղցր և անմոռանալի պահերը: «Կապույտ մշուշի միջից, ինչպես շոշանը գիշերի արգանդից, բացվում է մի չքնաղ աղջիկ, չքնաղ՝ ինչպես լուսասարդը պաղպաջուն երկնքում, գալիս կոխվում է գիտնականի սրտի վրա և փաթաթվում ծիրանի ծառի բունին, փաթաթվում է ինչպես բաղեղը, ինչպես բոցը, ինչպես շողը»: Դա գիտնականի սիրած աղջիկն է, Արևհատը՝ «ճակատին դաշտի ժպիտը և արեգակի լույսը»: Ջերմ ու նվիրական է այդ սերը, որն աճում, ծաղկում է ծիրանի ծառի տակ, լուսնի շողերի մեջ, երբ գիշերը դառնում է նրանց համար թմի անհուն շղարշ՝ հյուսված կապույտ և արծաթ թելերով»: Մեծ է այդ սիրո ուժը, և դուր է աղջկա մայրը առն կանչում աղջրկան, դուր է կանչում քամուն, որ ետ դառնա, դուր է խրատում ծաղկին, որ չբացվի՝ երբ դարունն է հասնում, դուր է կաշկանդում սիրտը, որ չբարակի...

Գիտնականի հուշերը գնալով դառնում են տխուր, դառնամորմոք: Ահեղ պատերազմը երկար ժամանակով անջատում է նրանց, կախարդական

մայրաքաղաքում սովորող տղան, միլիոնավոր աշխատավորների հետ միասին, քշվում է «արյունահեղ և ահավոր ուղմի» դաշտը, ապա զինքը ձեռքին կռվում է «հին աշխարհի դեմ», իբրև կարմիր պարտիզան մասնակցում է քաղաքացիական կռիվներին և տուն վերադառնալիս լսում է Արևհատի ուղերգական մահը: Սպիտակ բանգիտները տանջել, հոշոտել էին գեղանի աղջկան, խելագարության հասցնելով նաև նրա մորը:

«Քարացած միջից մղվեց անմեղության արյունը կաթիլ առ կաթիլ, ատամները կրճուացին մոլուցքից, երկնքի բոլոր աստղերը դարձան ասուպ, թռան երկնական արից, և խավարեց աշխարհը:

Առավոտյան, երբ սարերից բարձրացավ արևը, նրա սպիտակ շողերը թաթախվեցին արյան մեջ և արյունակարվեցին»:

Այսպիսի սեղմ, պատկերավոր և խոստուն նկարագրություններով է հագեցված ամբողջ պատմըվածքը: Յուրյ տալու համար, օրինակ, որ պատմըվածքի հերոսը ունի խոշոր, վճիռ և կապույտ աչքեր և տվյալ պահին նիրհում է՝ խորասուզված խոհերի մշուշում, գրողը ժլատ, լակոնիկ ձևով ասում է. «Եվ կես գիշերին փակվում են դիանականի թարթիչները, ինչպես մշուշն է չոքում լեռնալին կապույտ լճակի վրա»: Տալով բնության պատկերավոր նկարագրություններ, ստեղծելով ներդաշնակություն բնության և կերպարների տրա-

մազրության միջև, Վ. Թոթովենցն իր այս երկամ
ևս տխուր պատմությունը շարախում է իր ստեղ-
ծագործության ուղու համար բնորոշ կենսահաս-
տատա փիլիսոփայական խոհով ու լավատեսությամբ:
«Բայց դարձանը ծաղիկց ծիրանի ծառը, հոտավետ
և սպիտակ, բեղմնավորվեցին ծաղիկները և ամառը
վառվեցին որպես արևի կանթեղներ, ատունները
կարկաչեցին բլուրներից վար, իսկ դաշտերի կուրծ-
քը լցվեց աստղերով, երբ աշնան սկզբին շոգ-
շոգացին խաղողի հասիկները»:

Պատմվածքը ծավալով փոքր է, ինչպես Վ.
Թոթովենցի շատ ուրիշ գործեր, բայց «Փոքր
Ֆորման,—ասել է Ալեքսեյ Տոլստոյը,—չի ազա-
տում մեծ բովանդակությունից», այլ պահանջում
է ընտրել ամենաանհրաժեշտը և վերջինս վերար-
տադրել «վարպետության խտացման ճանապար-
հով», լինել հակիրճ՝ «ինչպես բանաստեղծը սոսևտ
գրելիս»¹: Այդ ճանապարհով է ընթացել Թոթո-
վենցը իր բոլոր «կարճ ձևի» և մյուս լավագույն
երկերն ստեղծելիս: Վերջիններիս բնորոշ կողմերից
են խոսքի պարզությունը, սեղմությունը և հոգե-
բանական խորությունը: Վ. Թոթովենցը կարու-
ցանում է գտնել տվյալ երևույթը բնութագրող
ամենագիպուկ արտահայտչական միջոցները, գեղ-
արվեստորեն երանգավորել ամենասովորական,
առօրյա գեպքերն ու եղելությունները, ստեղծել

¹А. Толстой, „О литературе“, 1956, стр. 355.

ալլալ կերպարի հոգեկան ու մտավոր աշխարհին համապատասխանող հատկանշական՝ մերթ ուրախ ու վետվետուն, մերթ խորապես ցնցող դրամատիկական պատկերներ: Բայց բոլոր դեպքերումն էլ, առանց բացառութեան, գրողի հիմնական նպատակը նույնն է՝ իր երկերով ընթերցողներին պատճառել էսթետիկական հաճույք և իր արվեստը լիովին ի սպաս դնել ժողովրդի կենսական շահերին: Հենց սրանումն է Վ. Թոթովինցի ստեղծագործութեան հիմնական արժանիքը, նրա լավագույն երկերի հարատևութեան գրավականը:

* * *

Ինչպես աշխատեցինք ցույց տալ՝ Վահան Թոթովինցն ունեցել է մեծ էրուզիցիա և վեղարվեստական նուրբ ճաշակ, հարուստ կենսաճանաչողութուն և ինքնուրույն գրելակերպ: Իբրև արվեստագետ ու քաղաքացի նա ձգտել է ամեն կերպ ծառայել ժողովրդին, հայրենի գրականութեան ու կուլտուրայի զարգացման շնորհակալ գործին: Ճիշտ է, նա վախճանվեց իր ստեղծագործական ուժերի բուռն ծաղկաման ու հասուն վարպետութեան շրջանում, երբ ուներ նոր ժրագրեր, նոր մտահոսքեր և, անշուշտ, մեր գրականությունը կհարստացներ վեղարվեստական նոր արժեքներով, սակայն իր թողած գրական ժառանգութեամբ, չափածո, դրամատիկական և առանձնապես արձակ ստեղծագործություններով էլ նա իրեն

գրականորէլ է իբրև գեղարվեստական խոսքի տա-
ղանգավոր ու ինքնատիպ վարպետ, ժողովրդի
կյանքի հետ կապված և ժողովրդի կենսական
շահերին ծառայող սոցիալիստական կուլտուրայի
անխոնջ մշակ, շոշափելի ավանդ մտցնելով սովե-
տահայ գրականութեան ֆոնդը: Այլ ևն հաստատում
«Կյանքը հին հողմեական ճանապարհի վրա»,
«Հովնաթան որդի Երեմիայի», «Բաքու», «Նոր
Բյուզանդիոն», «Բաց-կապույտ ծաղիկներ», «Ծի-
րանի ծառ», «Գալստական սղբերգութիւն», «Ամե-
րիկա» ժողովածուի մեջ տեղ գտած և մյուս լա-
վագուն ստեղծագործութիւնները, որոնք հանդի-
սանում են Վահան Թոթովենցի ստեղծագործական
էվոլյուցիայի բարձրակետը և հիմք են տալիս նրան
վերապահելու ուրույն ու հաստատուն տեղ մեր
գրականութեան պատմութեան մեջ:



ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅԻ ԵՐԿԵՐԸ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ
ԱՌԱՆՁԻՆ ԳՐԲԵՐՈՎ,

- | | |
|---|---------------|
| 1. Ավերակ (արձակ բանաստեղծու-
թյուններ), | 1908, Պոլիս: |
| 2. Արինդ (բանաստեղծություններ), | 1909, Պոլիս: |
| 3. Իմ հարաքույրը (վիպակ), | 1916, Թիֆլիս: |
| 4. Ողբ անմահության (պոեմ), | 1917, Թիֆլիս: |
| 5. Տ ո ն ս ն (վեպ), | 1917, Թիֆլիս: |
| 6. Արևելք (պոեմ), | 1918, Թիֆլիս: |
| 7. Գարունին սիրտը (դրամա), | 1921, Բոսսոն: |
| 8. Հավերժություն (ողբերգություն), | 1921*: |
| 9. Աստվոտին մեջ (քերթվածքներ), | 1921*: |
| 10. Պատմվածքներ, Առաջին շարք, | 1921. |
| 11. Պատմվածքներ, Երկրորդ շարք, | 1921*: |
| 12. Արձակ էջեր | 1921*: |
| 13. Արձակ երգեր | 1921*: |
| 14. Փոթորկին մեջ (վեպ), | 1922, Պոլիս*: |
| 15. Հաջի Մարկոս աղա (վեպ), | 1922, Պոլիս*: |
| 16. Անդլիս, Պարսկաստան և ևս | 1922, Պոլիս: |

* Գրքի հրատարակության մասին իմանում ենք մա-
մուլից: Մեր ձեռքի տակ չի եղել:

17. Գորտոր Բուրբոնյան (վեպ), 1923, Երևան:
18. Մահվան բառալիտն (կոմեդիա), 1923, Երևան:
19. Պողպատի ճաշ (դրամա), 1924, Երևան:
20. Սեղբորսը (պատմվածք), 1924, Երևան:
21. Նոր Բյուզանդիոն (դրամա), 1925, Երևան:
22. Մասնա ծներ (դրամա), 1925, Երևան:
23. Քառսի միջից (պիես),
24. Արարատյան առասպել (պիես)*:
25. Սիրո և արյան ճանկերում (պիես)*:
26. Նյու-Յորք (վիպակ), 1927, Երևան:
27. Կրիտիկո—ծիծաղ, 1927, Երևան*:
28. Հրդեհ (դրամա), 1927, Երևան:
29. Կոմսսոնոլ Կարոյի արկածներից (արկածային վիպակ),
1927 (տպագրված «Ավանդարդ»-ում):
30. Մեծապատիվ մուրացիկաններ (պիես). 1928, (ըստ
Հակոբ Պարոնյանի համանուն գործի, գրված Մ.
Ջանանի հետ, անտիպ):
31. Ամերիկա (պատմվածքներ), 1929, Երևան:
32. Ասատուր և Կլեոպատրա (պատմվածք), 1929, Երևան:
33. Գյուլմերի—Նյու-Յորք (արկածային վիպակ), 1929,
(գրել է Ն. Չուբարի հետ միասին, տպագրված է
«Ավանդարդ»-ում):
34. Պերսի Սալվադոր (արկածային վիպակ), 1930, (տպա-
գրված է «Ավանդարդ»-ում):
35. Լատ—հո (պատմվածք), 1930, Երևան:
36. Կյանքը հին հռոմեակապետ ճանապարհի վրա (վիպակ),
1930, Երևան:
37. Բաքու (պատմա-ուկոլյուցիոն վեպ), մասն առաջին,
1930, Երևան:

* Երկրի գրության մասին տեղեկություններ կան
մամուլում, բայց հրատարակության վերաբերյալ ստույգ
փաստեր չկան:

38. Ալեքսանդր Շիրվանզադեի կենսագրութիւնը, 1930, Երևան:
39. Հայ ազգի «փրկիչ» դաշնակիները, 1931, Երևան:
40. Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա և Նյու-Յորք վիպակները միասին, ռուսերեն, 1931, Մոսկվա:
41. Բաքու (պատմա-ուսույուցիոն վեպ), մասն երկրորդ, 1932, Երևան:
42. Բաքու—Լոնդոն (գրամա), 1932 (բեմադրվել է Երևանում, բայց չի տպագրվել):
43. Բաքու (պատմա-ուսույուցիոն վեպ) մասն երրորդ, 1934, Երևան:
44. Աղավնիներ (վիպակ), 1934, Երևան:
45. Հրկիզված թղթեր (վիպակ), 1934, Երևան:
46. Հովնաթան որդի Երեմիայի (վիպակ), 1936, Երևան:
47. Մոխրահույտ (գրամա), 1936, Երևան:
48. Երկեր, 1937, Երևան:



ՍԱՐԻԲԵԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ

Խմբագիր՝ Ս. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Հրատ. խմբագիր՝ Տ. ԿԱՐԱԳԵՏՅԱՆ

Նկարչական ձևավորումը՝ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

Տեխ. խմբագիր՝ Լ. ԱԶԻԶԵԿԵՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎՖ 03361	Գառվեր 132	Տիրաժ 3060
	ԽՀԽ 533	Հրատ. 1673

Հանձնված է արտադրության 14 III 1959 թ.,
ստորագրված է տպագրության 5/V 1959 թ.,
Հրատ. 4,32 մամուլ, տպագր. 10 մամուլ + 1
ներդիր, թուղթ 70 × 92¹/₃₂
Գինը 2 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության
տպարան, Երևան, Արտվյան 124

ԿԻՆՆԸ 2 Ռ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0033893

A $\frac{1}{150}$